

ՄՏԱԾԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵՎԻԾԱԿԱՑԻՆ ԲԱՅՅԵՐԻ ԽՆԴՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՅԵՐԵՆՈՒՄ

Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ա) Համառոտ ակնարկ բայի խնդրառության բմբռնման վերաբերյալ

Խնդրառության վերաբերյալ դիտողությունների հանդիպում ենք սկըսած XIV դարի առաջին կեսից, այնուհետև ավելի լայնորեն այն ներկայացվել է XVII—XIX դարերում՝ գրաբարի քերականություններում:

Բայի խնդրառության վերաբերյալ ուշագրավ դիտողություններ ունի Հովհաննես Քոնեցին (XIV դար)¹: Հեղինակը փորձում է տալ հայերենի շարահյուսության նկարագրությունը: Շարահյուսական հարցերի լուսաբանման կապակցությամբ Հ. Քոնեցին անդրադառնում է նաև խնդրառությանը «Յաղագս կառավարութեան անգամնց ի յանկատար բանս, և նախ յաղագս սեռականին» ենթաբաժնում: Նա քննում է ոչ միայն բայերի, այլև գոյական անունների խնդրառությունը: Աշխատության նշված բաժնում Հ. Քոնեցին առանձնացնում է անկատար բանի (ոչ բայական կապակցության) և կատարել բանի (բայական կապակցության) անդամների կապակցությունները: Նա ներկայացնում է որոշյալների ու հատկացյալների պահանջած լրացումների հոլովական դրսևորումները, այնուհետև քննության առնում կապակցությունները՝ նշելով բայի հետ կապակցվող անվանական անդամների հոլովածները: Հեղինակը բայի խնդրառությունը պայմանավորում է բայիմաստով՝ ներկայացնելով այս կամ այն հոլովով խնդիր պահանջող բայերի իմաստային նշանակությունները: Այսպես՝ Քոնեցին առանձնացնում է այն բայախմբերը, որոնք պահանջում են սեռականով, տրականով, հայցականով և այլ հոլովներով արտահայտված խնդիրներ: Սեռականով խնդրառություն է վերագրվում

1 Հ. Քոնեցի, Յաղագս քերականին (բնագիրը հրատարակության պատրաստեց Լ. Ս. Խաչիկյանը: Ներածությունը Լ. Ս. Խաչիկյանի և Ս. Ա. Ավագյանի), Երևան, 1977: Ըստ Քոնեցու, ուղղականը ենթակայի հոլովն է: Նշենք, սակայն, որ այս դեպքում Քոնեցին նկատի է ունենում ոչ թե տվյալ հոլովածի արտահայտած իմաստն ու նշանակությունը, այլ միայն նրա շարադասությունը՝ բային նախորդելը:

կարոտի, ամբաստանության, հանդիմանության, վաճառքի կամ գնման, պարգևի, ակնկալության և այլ իմաստ արտահայտող բայերին: Տրականով խնդրառությունը բնորոշ է համարվում հանգում, մերձեցում ցույց տվող բայերին: Հայցական հոլովով խնդիր են պահանջում աղերսանքի, հիշողության, մոռացումի, պճնանքի, միավորման, բաժանման և այլ իմաստ արտահայտող, այլև ուսման, վաճառքի, գովքի, պարսավանքի, ուտելիքի հետ կապված հասկացությունները: Բացառականով և գործիականով խնդրառություն են ցուցաբերում լիություն, խընդություն, անջատում, կազդուրում, զորություն կամ ունակություն, ամբաստանություն, հարցում, վաճառք, պարկեշտություն և նման այլ երևույթներ ցույց տվող բայերը: Ինչպես տեսնում ենք, Քոնեցին կատարում է բայերի խմբավորումներ ըստ նրանց դրսևորած նշանակությունների, որով և հիմնականում պայմանավորում է նրանց խնդրառությունը: Բացի դրանից, նա որոշ տեղ է հատկացնում բայի սեռին: Հայցական և բացառական հոլովներով արտահայտված խնդրառությունը նրա երկուստեք պայմանավորվում է ոչ միայն բայիմաստով, այլև բայասեռով: Քոնեցին հայցական հոլովաձևով դրսևորված խնդրառությանը վերագրում է առնողական (ներգործական), բացառական հոլովաձևով արտահայտված խնդրառությունը՝ կրավորական բայերին: Այսպիսով՝ Քոնեցին խնդրառությունը պայմանավորում է հիմնականում բայիմաստով, որոշ դեպքերում էլ բայի սեռով: Նա խնդրառությունը լայն իմաստով է ըմբռնում՝ տարածելով նաև անվանական կապակցությունների վրա, ներառելով պարագառությունը ևս:

Բայի խնդրառությունը հանգամանալից քննության է ենթարկել Մ. Աբեղյանը²: Նա բառերի ստորադասական կապակցության երկու տեսակ է ընդունում՝ կախում և ներունակություն: Կախման հարաբերությունը նա համարում է խնդրառություն: Խնդրառությունը, այսպիսով, բառերի ստորադասական կապակցության մի տեսակ է, որ արտահայտում է կախման հարաբերություն: Վերջինս Աբեղյանի մոտ հանդես է գալիս նաև խնդրառություն կամ վառում տերմինով: Կախման հարաբերությունը, ըստ Աբեղյանի, արտահայտվում է երկու ձևով՝ ա) միայն հոլովներով, որն անմիջական կապակցություն է և բ) հոլովներով և կապերով, որն միջական կապակցություն է:

Խնդրառությունը իբրև բառերի կապակցության մի եղանակ Աբեղյանը քննում է հոլովների իմաստների ու շարահյուսական կիրառությունների հետ միասին: Աբեղյանը ընդունում է շորս տեսակի խնդիր-

² Մ. Աբեղյան, Աշխարհաբարի շարահյուսություն, Վաղարշապատ, 1912: Նույնի, Հայոց լեզվի տեսություն, 1965:

ներ՝ կռող, ներգործող, բնության և պարագայական: Վերջիններս պարագաներն են, որոնք Աբեղյանը բաժանում է բուն պարագաների ու պարագայական խնդիրների: Դրանք դրսևորվում են գոյականով կամ գոյականի ու կապի զուգորդմամբ:

Խնդրառության վերաբերյալ ուշագրավ բացատրություններ են պարունակում Գ. Սևակի աշխատանքները³: «Հայոց լեզվի շարահյուսություն» դպրոցական դասագրքում Գ. Սևակը խնդրառությունը համարում է նախադասության անդամների կապակցության հղանակներից մեկը, որը համաձայնության և շարադասության հետ միասին քննում է «կապակցություն» բաժնում: Ըստ հեղինակի, խնդրառությունը նախադասության անդամների կապակցության այն հղանակն է, որը լրացումը լրացյալի հետ կապվում է նրա թելադրած հոլովը կամ պահանջած կապն ու հոլովն ընդունելով⁴:

Գ. Սևակը խնդրառությունը միայն բային վերագրելով չի սահմանափակվում, այն տարածում է նաև կապի ու ածականի վրա՝ յուրաքանչյուրի համար բերելով համապատասխան օրինակներ: Նա խնդրառություն տեղումնին զուգահեռ գործածում է նաև հոլովառություն, իբրև նրան համարժեք:

«Ժամանակակից հայոց լեզվի դասընթացում» Գ. Սևակը բայի հիմնական հատկանիշներից է համարում խնդրառությունը, որը ըստ նրա, արտահայտվում է սեռի կամ բայիմաստի պահանջով խնդիրներ ստանալու մեջ⁵: Նշված աշխատության «Սեռ և խնդրառություն» վերնագրի տակ Սևակը ուսումնասիրում է բայի սեռերը և նրանց խնդրառությունը՝ ներգործական սեռի բայերի համար բնորոշ համարելով ուղիղ, կրավորականների համար՝ անջատման խնդիր առնելը: Այստեղ Գ. Սևակը նորից է ընդգծում խնդրառության բնորոշ կողմը, բացահայտում նրա էությունը: «Խնդրառությունը բայերի այն առանձնահատկությունն է, որի համաձայն նրանք իրենց իմաստի կամ սեռի թելադրմամբ պահանջում են զանազան խնդիրներ ու պարագաներ⁶»: Սեռի թելադրմամբ պահանջվող խնդիրներ է համարում ուղիղ և անջատման, բայիմաստով պայմանավորված՝ միջոցի և մատուցման խնդիրները: Գ. Սևակը խնդրառությունը լայն իմաստով է ըմբռնում՝ տարածելով նաև պարագաառու-

3 Գ. Սևակ, Հայոց լեզվի շարահյուսություն, 1936, և հետագա հրատարակություններ և նույնի՝ Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, 1955, էջ 286:

4 Գ. Սևակ, Հայոց լեզվի շարահյուսություն, 1956, էջ 71:

5 Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, էջ 286:

6 Նույն տեղում, էջ 291:

թյան վրա: «Խնդրառության մեջ է մտնում նաև պարագաներ առնելը, որ հատուկ է բոլոր բայերին»⁷:

Վ. Առաքելյանը «Հայերենի խնդրառության մասին»⁸ հոդվածում ներկայացնում է շարահյուսական այդ երևույթը և անում նուրբ դիտողություններ բայի խնդրառության վերաբերյալ:

Խնդրառության բացատրությանն ավելի մեծ տեղ է հատկացված հետազայում հրատարակված նրա աշխատանքներում⁹, ուր քննվում են խնդրառական երևույթներ, կատարվում բայերի խմբավորումների ըստ խնդրառական հատկանիշի, նշվում դրանց խնդիր և պարագա լրացումները, վերջիններիս դրսևորումները և արտահայտած իմաստները և այլն: Մի խոսքով՝ բայերի խնդիր և պարագա լրացումների վերաբերյալ բովանդակում են փաստական հարուստ ու արժեքավոր նյութեր:

Վ. Առաքելյանը խնդրառությունը քննում է նեղ առումով՝ այդ տերմինի տակ հասկանալով միայն բայի՝ այս կամ այն հոլովով, կամ էլ կապով ու կապվող բառով արտահայտված խնդիր ստանալը: Պարագաները նրա ըմբռնմամբ դուրս են խնդրառությունից, թեև կապվում են բայի հետ, իբրև նրա լրացումներ: Այդ սկզբունքը որդեգրվում է ուսումնասիրողներից շատերի կողմից նաև հետագայում:

Ս. Աբրահամյանը խնդրառության հարցին անդրադարձել է իր մի քանի աշխատություններում՝ նուրբ դիտողություն անելով այդ երևույթի վերաբերյալ¹⁰: «Զթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում» ուսումնասիրության մեջ նա խնդրառությունը քերականական այն իրողությունն է համարում, երբ բառը իր իմաստի (երբեմն էլ սեռի) թելադրանքով պահանջում է առարկա ցույց տվող բառ, այսինքն՝ խնդրառության համար հեղինակը անհրաժեշտ է համարում երկու բառեր, որոնցից մեկը խնդրառու բառն է, իսկ մյուսը՝ խնդիրը¹¹: Խնդրառության կապակցությամբ խնդիր ասելով՝ Ս. Աբրահամյանը նկատի ունի նաև պարագաները:

«Ժամանակակից հայերենի քերականություն» աշխատանքում, որ ձեռնարկ է մայրենի լեզվի ուսուցիչների համար, խնդրառությունը Ս. Աբ-

⁷ Նույն տեղում:

⁸ ՀՄՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (Հաս. գիտ.), 1955, № 7:

⁹ Վ. Առաքելյան, Ժամանակակից հայերենի հոլովների ու հոլովական կապակցությունների իմաստային առումները, 1957 և եռյեթի՝ Հայերենի շարահյուսություն, մաս Ա, 1958:

¹⁰ Ս. Աբրահամյան, Զթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, 1965, և եռյեթի՝ Ժամանակակից հայերենի քերականություն, 1969:

¹¹ Ս. Աբրահամյան, Զթեքվող խոսքի մասերը... էջ 342:

բաճառմանը դիտում է բառակապակցության ձևավորման եղանակներից մեկը: Եվ քանի որ բայական բառակապակցության բաղադրիչները կապված են ստորադասական հարաբերությամբ, ուստի խնդրառությունը Ս. Աբրահամյանը համարում է բառերի ստորադասական կապակցության եղանակներից մեկը, որի բաղադրիչները կապված են խնդրառական հարաբերությամբ: Հարկ է նշել, որ Ս. Աբրահամյանը կապերի քննության կապակցությամբ տարբերակում է մտցնում բայի և կապերի լրացումների միջև, վերջիններիս համար գործածելով ոչ թե կապի խնդիր, այլ կապվող բառ տերմինը: Նա գտնում է, որ կապերին բնորոշ չէ խնդրառությունը, քանի որ կապը նախադասության մեջ քերականական կամ սպասարկու դեր է կատարում, և կապի ու կապվող բառի կապակցության մեջ գլխավոր անդամը նյութական իմաստ ունեցող բառն է և ոչ թե կապը: Նշանակում է կապի ստորադաս լինելը, սպասարկու դեր կատարելը կապվող բառի նկատմամբ ինքնին հակասում է խնդրառության սկզբունքին, ըստ որի, խնդրառու բառը գերադաս անդամ է խնդրի նկատմամբ, որը լրացում է առաջինին: Ս. Աբրահամյանը ճշտորեն նշում է, որ ոչ թե նյութական իմաստ ունեցող բառն է գործածվում կապի պահանջով, այլ, ընդհակառակն, կապն է գործածվում այդ նյութական իմաստ ունեցող բառի և գերադաս բառի հարաբերությունն արտահայտելու համար: Եվ իրոք, եթե բայական կապակցության մեջ գերադաս անդամը՝ բայը, պահանջում է համապատասխան լրացում, ապա կապական կապակցության մեջ այդպես չէ: Կապի պահանջով չէ, որ կապվող բառը դրվում է այս կամ այն հոլովով: Ս. Աբրահամյանը եղրակացնում է, որ կապը չի կարող գերադաս լինել կապակցության մեջ և պահանջել որոշակի հոլովով արտահայտված խնդիր: Նա գրում է. «Այն հանգամանքը, որ կապն առանց կապվող բառի չի գործածվում, և դրանք միշտ հանդես են գալիս միաժամանակ, ոչ թե կապի գերադաս լինելու և նրա խնդրառության ապացույց է, այլ ճիշտ հակառակը, կապի ստորադաս, սպասարկու դերի արտահայտություն է. պայմանավորված է այն բանով, որ կապը կարող է գործածվել միայն այն դեպքում, երբ անհրաժեշտ է այս կամ այն բառի քերականական հարաբերությունն արտահայտել գերադաս անդամի (մեծ մասամբ ստորոգյալի, մասամբ այլ անդամների) նկատմամբ: Իսկ եթե չկա այն բառը, որի հարաբերությունը պետք է ձևավորվի, ուրեմն և կապ գործածվել չի կարող¹²»: Ս. Աբրահամյանը որոշակի ճշգրտություն ու հստա-

կություն է մտցնում բայերով և կապերով կազմվող կապակցությունների յուրահատկությունների մեջ:

Վ. Քոսյանը բայի խնդրառությունը ամենից առաջ պայմանավորում է լրացյալի բառային իմաստով: Նա նկատում է, որ իմաստային ընդհանրություն ունեցող բազմաթիվ բայեր կարող են ստանալ նույն բնույթի լրացումներ: Բացի դրանից, նա ընդգծում է, որ խնդրառության մեջ կարևոր դեր է կատարում նաև բայի սեռը, այսինքն՝ լրացումը կախված է բայի սեռից: Ըստ նրա, ներգործական բայերը անկախ իրենց բառային իմաստի յուրահատկությունից, ստանում են հայցականով ուղիղ խնդիր, իսկ կրավորական սեռի բայերին բնորոշ է ներգործող խնդիր-լրացումը¹³:

Վ. Քոսյանը մանրամասնորեն քննության է առնում բայի լրացումները՝ արտահայտված գոյականի հոլովներով, կապով ու կապվող բառով, մակբայներով, ածականներով, դերանուններով և այլն՝ անելով նուրբ և ուշադրավ դիտողություններ քննարկվող խնդրի վերաբերյալ:

Բառակապակցության քննության կապակցությամբ Ն. Պառնասյանը ուսումնասիրում է նաև խնդրառական հարցեր¹⁴: Խնդրառությունը հնդինական համարում է բառերի ստորադասական կապակցության երեք հղանակներից մեկը: «Բայական բառակապակցություններ» խորագրի տակ քննության է ենթարկում բայ գերադաս անդամով կապակցությունները և նշում նրանց լրացումների իմաստային կապերն ու փոխհարաբերությունները: Ն. Պառնասյանը բայ գերադաս անդամ ունեցող բառակապակցությունների մեջ առանձնացնում է խնդրառություն անդրությունից: Նա բայական բառակապակցությունների կառուցվածքը պայմանավորում է երկու հիմնական գործոններով, բայի սեռով և բառիմաստով, այսինքն՝ խնդրառությունը կախված է բայի սեռից և նրա իմաստից: Բայերը ըստ սեռի պահանջում են որոշակի խնդիրներ՝ կերտելով սեռային տվյալ խմբերին հատուկ բառակապակցություններ, որոշակի խնդիր են ստանում նաև բայական առանձին իմաստային խմբեր: Հնդինակը բերում է լեզվական համապատասխան փաստեր: Հետագա շարադրանքում քննվում են բայի՝ գոյականի (նաև այլ խոսքի մասերի) տարբեր հոլովներով կամ գոյականով ու կապով արտահայտված լրացումները, որոնք գերադաս անդամի հետ կապվում են կամ խնդրային կամ պարագայական հարաբերությամբ: Այսինքն՝ Ն. Պառնասյանը ուսումնասիրում է բայ գերադաս անդամով բառակապակցությունների թե՛ խնդրային, թե՛ պարագայական հարաբերությունները՝ անելով նուրբ դիտողություններ: Նկատենք, որ

13 Վ. Քոսյան, Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, 1975, էջ 202—203:

14 Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան, Հ. Օհանյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, 1976, էջ 7—117:

նա, անշուշտ, ճիշտ է վարվում քննելով նախ՝ խնդիր, ապա՝ պարագալրացումները: Ն. Պառնասյանը խնդրառության ոլորտից դուրս է համարում պարագաառությունը:

Խնդրառությունը բավականին հանգամանորեն ու հիմնավոր քննության է առել Գ. Բ. Զահուկյանը: Իր աշխատության «Բայերի կապակցելիական դասակարգումը» գլխում հեղինակը կատարում է բայերի երեք կարգի դասակարգում՝ դասանշային, արժույթային և ընտրութային¹⁵: Մեզ հետաքրքրող երևույթի՝ խնդրառության քննությունը Գ. Զահուկյանը ներկայացնում է բայերի արժույթային դասակարգման բաժնում: Արժույթը, ըստ հեղինակի, խնդրառության գաղափարի հետագա ընդարձակումն է և ավելի լայն առումով՝ բայի կապակցելիությունն է ենթակայի, խնդիրների և պարագաների հետ: Գ. Բ. Զահուկյանը գործածելով «արժույթ» տերմինը, որ առաջին անգամ կիրառվել է Տենիերի կողմից, այդ տերմինի տակ հասկանալով բայի կապակցելիությունը ենթակայի և խնդիրների հետ, մի քանի վերապահություն է անում «արժույթ» տերմինի վերաբերյալ¹⁶:

Ըստ բայի՝ կապվող միավորների բնույթի՝ արժույթը, Գ. Զահուկյանի հավաստմամբ, կարող է հանդես գալ որպես ա) ենթակաառություն (բառային-քերականական ենթակա ստանալը կամ չստանալը), բ) ստորոգառություն (ստորոգելի կամ ստորոգելիական խնդիր ստանալը կամ չստանալը), գ) խնդրառություն (տարբեր տիպի խնդիրներ ստանալը կամ չստանալը, ընդ որում սրա մի դրսևորումը կլինի անցողականություն-անանցողականությունը՝ ուղիղ խնդիր ստանալը կամ չստանալը, մի այլ դրսևորումը՝ դերբայառությունը՝ անորոշ դերբայ ստանալը կամ չստանալը) և դ) պարագաառությունը (տարբեր տիպի պարագաներ ստանալը կամ չստանալը)¹⁷:

Նկատի առնելով բայի հետ կապվող տարբեր բնույթի միավորների քանակը, Գ. Զահուկյանը առանձնացնում է արժութալուրկ, միարժույթ, երկարժույթ, եռարժույթ բայեր, այսինքն՝ խմբավորում է բայերը ըստ արժույթի¹⁸: Այստեղ բաղմակողմանիորեն լուսաբանվում է բայիմաստով պայմանավորված խնդրառությունը: Հեղինակը ցույց է տալիս, թե ինչ խնդրառություն են ցուցաբերում իմաստային միևնույն դաշտին պատկանող բայերը: Այսինքն՝ քննության է առնում բայերի իմաստային դրսևորումները և վերջիններով պայմանավորված խնդրառությունը: Ընդ

15 Գ. Բ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, 1974, էջ 461—491:

16 Նույն տեղում, էջ 466:

17 Նույն տեղում, էջ 467:

18 Նույն տեղում, էջ 467:

որում, ուսումնասիրվում են ոչ միայն հոլովական, այլև կապային խընդ-
րառություն հանդես բերող բայախմբերը: Գ. Զահուկյանի՝ բայերի խընդ-
րառությունը քննված է հանգամանորեն, լեզվական հարուստ ու համո-
զիչ փաստերի հիման վրա: Այն մեծապես կնպաստի խնդրառության երե-
վույթի հետազա ավելի ամբողջական ուսումնասիրությանը, նրա բազ-
մազան դրսևորումների բացահայտմանը, լույս կսփռի այդ իրողության
հետ առնչվող մի շարք մանրամասների պարզաբանմանը, առաջ կմղի
խնդրի գիտական ու հանգամանալից քննությունը՝ տալով նոր մեկնու-
թյուններ ու բացատրություններ, նոր մոտեցումներ ու զնահատություն-
ներ:

Խնդրառության հարցին տարբեր առիթներով անդրադարձել են նաև
Ա. Ղարիբյանը, էդ. Աղայանը, Ա. Մարգարյանը, Մ. Ասատրյանը, Հ. Բար-
սեղյանը, Ռ. Իշխանյանը, Ս. Գյուլբուդաղյանը և ուրիշներ, որոնք արժե-
քավոր մտքեր են արտահայտել խնդրառության վերաբերյալ՝ ավելի
առաջ մղելով ու զարգացնելով խնդրառության ուսմունքը հայ քերական-
ագիտության մեջ¹⁹:

Հարկ է նշել, որ «խնդրառություն» տերմինին զուգահեռ գործածվել
ու գործածվում են նաև հոլովառություն, կառավարում, կառավարություն,
վարում և այլ տերմիններ: Ընդ որում, հոլովառություն-ն ու վարում-ը
կիրառվել են իբրև խնդրառության նույնանիշներ, իսկ կառավարություն-
ը ավելի լայն իմաստով է ըմբռնվել, քան խնդրառություն-ը:

«Կառավարություն» տերմինի գործածության հանդիպում ենք Հով-
հաննես Քոնեցու երկում²⁰, ուր «Յաղագս կառավարութեան անգմանց»
ենթաբաժնում հեղինակը քննության է առնում թե՛ գոյականների, թե՛
բայերի խնդրառությունը, վերջինս տարածելով նաև պարագառության
վրա: Հ. Քոնեցին անվանական՝ որոշիչ-որոշյալի, հատկացուցիչ-հատ-
կացյալի կապակցությունները դիտում է որպես կառավարման դրսևո-
րումներ: Այսպիսով, Քոնեցին կառավարություն-ը գործածում է լայն
իմաստով, այն տարածելով թե՛ բայական, թե՛ գոյականական կամ ան-
վանական կապակցությունների վրա՝ դրանց մեջ ներառելով նաև բա-
յական կապակցությունների պարագա լրացումները:

Կառավարություն տերմինը օգտագործել է նաև Կ. Գալանոսը²¹, որն
իր աշխատության բաժիններից մեկը՝ «Յաղագս կառավարութեան մա-
սանց բանին», նվիրել է համաձայնությանն ու խնդրառությանը: Այդ

19 Աշխատանքը շփանրաբեռնելու նպատակով կանգ չենք առնում այդ հեղինակ-
ների տեսակետների ու կարծիքների վրա:

20 Հ. Քոնեցի, Յաղագս քերականին:

21 Կղմես Գալանոս, Քերականական և տրամաբանական ներածութիւն առ յիմաս-
տասիրութիւնն շահելոյ:

նշանակում է, որ 4. Գալանոսը կառավարություն տերմինի տակ նկատի է առել ոչ միայն խնդրառությունը, այլև ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը: Կառավարում տերմին հանդիպում է Շրոդերի «Արամեան լեզուին գանձ» աշխատության մեջ, որ կառավարում-ը համընկնում է խնդրառության հետ: Շրոդերը շարահյուսության մեջ մտցնում է համաձայնության և կառավարման (խնդրառության) ուսումնասիրությունը:

Կառավարություն տերմինը Գ. Զահուկյանը գործածում է լայն իմաստով՝ վերաբերելով ոչ միայն խնդրառությանը, այլև պարագաառությանը: Բացի դրանից, կառավարություն-ը, ըստ նրա, կարող է արտահայտվել ոչ միայն իբրև հոլովառություն, այլ նաև որպես կապառություն: «Հայ քերականագիտության մեջ «առդրության» փոխարեն հաճախ գործածվում են «շարադասություն» տերմինը, իսկ «կառավարության» փոխարեն «խնդրառություն» և «հոլովառություն» տերմինները: Այս տերմիններն անհաջող են. առաջին դեպքում շարահյուսական կապակցության եղանակը շփոթվում է սրա իրականացման միջոցի հետ. երկրորդ դեպքում հասկացությունը նեղացվում է. հայտնի է, որ՝ ա) կառավարությունը կարող է լինել ոչ միայն «խնդրառություն», այլև «պարագաառություն (հմտ. «պատկանում է քաղաքին» և «բնակվում է քաղաքում»): Բ) կառավարությունը կարող է արտահայտվել ոչ միայն իբրև «հոլովառություն», այլև որպես «կապառություն»²²:

Նախադասության լրացական անդամների կապը գլխավորի հետ, ըստ Գ. Զահուկյանի, կարող է իրականացվել 2 եղանակով՝ առդրությամբ և կառավարությամբ: «Կառավարությունը քերականական կախման այն եղանակն է, որ իրականացվում է առաջին հերթին լրացումների հոլովական ու կապային ձևավորմամբ: Կառավարությունը փաստորեն մակաշերտվում է առդրության եղանակի վրա, որ տվյալ դեպքում ստանում է երկրորդական արժեք»: Ինչպես տեսնում ենք, Գ. Զահուկյանը կառավարություն-ը յուրովի է մեկնաբանում, այն տարբերվում է նախորդ քերականների ըմբռնումից:

Վարում տերմինը գործածել է Մ. Աբեղյանը խնդրառության հետ դուգահեռ, իբրև նրան համարժեք: Մ. Աբեղյանը բառերի ստորադասական հարաբերության երկու տեսակ է առանձնացնում՝ կախման, որն անվանում է խնդրառություն կամ վարում, և ներունակություն: Հոլովառություն-ը, իբրև տերմին, հանդիպում է Ս. Զուղայեցու, Բաղդասար Դպիրի, Մ. Սեբաստացու, Գ. Սևակի և այլոց աշխատանքներում:

Բայերի դասակարգումն ընդհանրապես և իմաստային հատկանիշով խմբավորումը մասնավորապես թեև տեսական ու գործնական կարևորութիւն են ներկայացնում, սակայն կապվում են լուրջ դժվարութիւնների հետ: Այդ կապակցութեամբ ճիշտ դիտողութիւնն է անում Ա. Աբրահամյանը՝ նշելով այն պատճառները, որոնք դժվարացնում են հարցի լուսաբանումը: Նրա կարծիքով բայերի իմաստային դասակարգումը դժվարանում է նրանով, որ ա) բայերը մեր լեզվում (նաև ուրիշ լեզուներում) բազմաբանակ են և դրսևորում են բազմապիսի իմաստներ ու նշանակութիւններ, բ) շատ բայեր ունեն մեկից ավելի հիմնական (ոչ երկրորդական կամ ածանցյալ) իմաստներ, որոնք հնարավորութիւն չեն տալիս հստակորեն սահմանազատել բայախմբերը և բոլոր բայերը ընդգրկել իմաստային խմբերի մեջ: Չնայած դրան, այնուամենայնիւ, առանձին ուսումնասիրողների և հատկապես Ա. Աբրահամյանի, Գ. Զահուկյանի և ուրիշների կողմից առանձնացվել են բայական մի շարք խմբեր: Այնպես որ կարելի է ասել, որ հայ քերականագիտութեան մեջ որոշ աշխատանքներ են տարվել բայերի իմաստային դասակարգման և ըստ նրանց իմաստների ու նշանակութիւնների բայերի խնդրառութեան ուսումնասիրութեան ուղղութեամբ: Այսպես՝ Մ. Աբեղյանը, Վ. Առաքելյանը, Ա. Աբրահամյանը, Գ. Զահուկյանը, Վ. Քոսյանը, Ն. Պառնասյանը և շատ ուրիշներ, իհարկե, ոչ հատուկ նպատակադրմամբ, այլ այս կամ այն հարցի լուսաբանման կապակցութեամբ ու պատեհ առիթով կատարել են բայերի դասակարգումներ՝ նկատի առնելով նրանց դրսևորած իմաստները, երբեմն ներկայացնելով դրանց խնդրառութիւնը: Եվ քանի որ նրանց բուն նպատակը չի եղել բայերի դասակարգումը իմաստային (նաև ուրիշ) հատկանիշով, ուստի բնականաբար բազմաթիւ բայեր դուրս են մնացել խմբավորումից, և բայական շատ խմբեր չեն առանձնացվել ու արժեքավորվել: Սակայն նրանք նկատել են իմաստային միևնույն դաշտին պատկանող բայեր և տվել համապատասխան անվանումներ: Հայ քերականագիտութեան մեջ առանձնացվել ու հատուկ քննութեան են առնվել շարժման և ասացական բայերը, իսկ բայական մի շարք խմբերի տրվել են համապատասխան անվանումներ, առանց, սակայն, հատուկ ուսումնասիրութեան ենթարկվելու: Այսպես՝ մատնանշվում են իմացական, զգացական, մտածական, վիճակային, հարկադրական, ակտիւ գործողութեան, օժտվածութեան և այլ բայախմբեր:

Մ. Աբեղյանը կատարում է բայերի դասակարգում՝ նկատի առնելով խնդրի կամ առարկայի նկատմամբ ունեցած նրանց հարաբերու-

թիւներ: Բոլոր բայերը նա բաժանում է երկու մեծ խմբի՝ ենթակայականի և առարկայականի:

Ենթակայական բայերը ցույց են տալիս գոյութիւն, դրութիւն կամ էլ այնպիսի գործողութիւն, որը կատարելու համար միայն ենթական բաղական է (Երեխան քնած է, երեխան լալիս է, տանը մարդ կա), այսինքն՝ խնդիր չեն պահանջում, իսկ առարկայական բայերի ցույց տված գործողութեան համար, բացի ենթակայից, անհրաժեշտ են մեկ կամ երկու ուրիշ առարկաներ ևս, այսինքն՝ առարկայական բայերն իրենց նշանակութեան համեմատ իբրև լրացում պահանջում են մեկ կամ երկու խնդիր, առանց որի, Մ. Արեղյանի կարծիքով, խոսքը թերի կմնա²³: Այնուհետև տարբեր հարցերի քննութեան կապակցութեամբ Մ. Արեղյանը գործածում է զգացում, հույզ, հոգեկան վիճակ, գործունեութիւն ցույց տվող բայերի անվանումները, որոնք ոչ այլ ինչ են, եթե ոչ բայախմբերի անվանումներ: Այդ բաժանման հիմքում, անշուշտ, ընկած է բայերի իմաստային հատկանիշը:

Վ. Առաքելյանն իր «Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցութիւնների իմաստային առումները» (1957) և «Հայերենի շարահյուսութիւն» (հ. 1, 1958), աշխատութիւններում առանձնացնում է բայական մի շարք խմբեր՝ նկատի առնելով նրանց դրսևւորած իմաստները: Այսպես՝ նա մատնանշում է իմացական, ասացական, զգացական, հարկադրական, այլև հոգեկան վիճակ արտահայտող բայեր, յուրաքանչյուրի համար բերելով մի քանի օրինակներ: Բայերի այդպիսի խմբավորումը կատարում է նրանց խնդրառական կամ այլ կարգի հատկանիշները բացահայտելու նպատակով: Հոգեկան վիճակ արտահայտող բայերի շարքն է դասում վախենալ, ամաչել, քաշվել, ճնշվել և այլն, որոնց մոտ անորոշ դերբայը գերազանցապես հայցականով է դրվում²⁴: Վ. Առաքելյանը առանձնացնում է ձգտման բայերը, որոնք նույնպես հոգեկան վիճակ են արտահայտում: Այդպիսիք են ձգտել, կարոտել, ծարավել, փափագել, տենչալ, պապակել, հետամտել, հետամուտ լինել և այլն²⁵: Հոգեկան տարբեր վիճակներ ցույց տվող բայերի մեջ է մտնում նաև ձանձրանալ, զարհուրել, սոսկալ, զզվել, հոգնել, խորշել, վիրավորվել, խռովել, դժգոհել, հիասթափվել, խորթանալ, վշտանալ, կշտանալ, հագեանալ, հեղանալ, երկնչել, բալկանանալ,

23 Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսութիւն, էջ 373—374:

24 Վ. Առաքելյան, Ժամանակակից հայերենի հոլովների ու հոլովական կապակցութիւնների իմաստային առումները, էջ 65:

25 Նույն տեղում, էջ 104:

շնորհակալ լինել, զոհ մնալ և այլն²⁶, Ինչպես տեսնում ենք, Վ. Առաքելյանը մատնանշում է բայական որոշ խմբեր՝ տալով համապատասխան անվանում՝ հիմք ընդունելով նրանց դրսևորած իմաստները: Նկատենք, որ նա հիմնականում ձիշտ է ներկայացնում իր առանձնացրած բայախմբերի մեջ ընդգրկվող բայերը: Բայերի դասակարգումը ավելի մանրամասն ու հիմնավոր ձևով տրված է Ա. Աբրահամյանի «Բայը ժամանակակից հայերենում» աշխատության մեջ: Հեղինակը տարբեր առիթներով, մասնավորապես բայերի խնդրատական և սեռաչին հատկանիշները, նրանց դրսևորած գործողության կամ եղելության իմաստները լուսաբանելու կապակցությամբ կատարում է բայերի խմբավորումներ: Այսպես՝ նա առանձնացնում է հետևյալ բայախմբերը՝ ա) դրույթյուն կամ վիճակ արտահայտող (պառկել, քնել, նստել), բ) հատկանիշի դրսևորում ու փոփոխություն արտահայտող (հպարտանալ, գոհանալ, դարմանալ, առողջանալ, կարծրանալ, մեծանալ, թուլանալ, հնանալ, առաջադիմել, կարմրել, կանաչել, դեղնել), գ) վերաբերմունքի դրսևորման (սիրել, ատել, պաշտել, հարգել, հավանել), դ) ղեկավարան ընկալման (լսել, տեսնել, զգալ), ե) մտային ու հոգեկան ալլ իրակությունների ցուցաբերման (իմանալ, գիտենալ, մոռանալ, հիշել, ճանաչել, մտածել, ցանկանալ, ձգտել) և այլն²⁷:

Տարբեր խոսքի մասերից մասնիկավորումով կազմված բայերի իմաստների քննության կապակցությամբ Ա. Աբրահամյանը առանձնացնում է մի շարք բայախմբեր ևս: Դրանք են՝ ա) բայեր, որոնք ունեն հատկանիշի վերածման նշանակություն (ազահանալ, ազնվանալ, ակտիվանալ, աղոտանալ, ամալանալ, ամլանալ, ապշանալ, ամրանալ, աշխուժանալ, առատանալ, արագանալ, արիանալ, բարկանալ, բարդանալ, բարձրանալ, բխամտանալ և այլն)²⁸, բ) բայեր, որոնք արտահայտում են մի բան դառնալու, մի բանի վերածվելու նշանակություն (ածխանալ, առյուծանալ, եղբայրանալ, ընկերանալ, թշնամանալ, լեռնանալ, լճանալ, կմախքանալ, հերոսանալ, մագնիսանալ և այլն), գ) բայեր, որոնք արտահայտում են մի դրույթյան մեջ լինելու գաղափար (մահանալ, մեղքանալ, վշտանալ), դ) բայեր, որոնք հատկանշվում են ակտիվ գործողության գաղափարով (անարգել, ապահովել, բարդել, դատարկել, խարդախել, կոպտել, հարթել, նեղել, շորել և այլն)²⁹, ե) բայեր, շրտնք ար-

²⁶ Նույն տեղում, էջ 135:

²⁷ Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, 1962, էջ 15:

²⁸ Ա. Աբրահամյանը հատկանիշի վերածման նշանակություն արտահայտող բայեր է համարում նաև ել-ով կազմված ապշել, բարակել, բխամտել, դալարել, դեղնել, սպիտակել, փափկել և այլն (նույն տեղում, էջ 63):

²⁹ Բայերի ցանկերը բերում ենք որոշ կրճատումներով:

տահայտում են նպատակամիտփող ակտիվ գործողութիւնն զաղափար (արդուիւն, արորել, բահել, խարտել, խարտոցել, մտրակել, մկրատել, շամփրել, շղթայել և այլն), զ) ակտիվ գործողութիւնն զաղափար արտահայտող բայեր, որոնք բայական իմաստով ներկայացնում են որևէ նյութով պատելու, ամբողջովին կամ մասամբ օժտելու նրա բնորոշ հատկանիշը հաղորդելու կամ վերագրելու զաղափար (անագել, աստառել, ասֆալտել, արծաթել, բետոնել, ներկել, սոսնձել, ցիխել, ցեմենտել, քարել, օսլայել և այլն), է) ակտիվ գործողութիւնն զաղափար արտահայտող բայեր, որոնք ունեն վերածելու իմաստ (աղանձել, ապխտել, դիզել, խմորել, հրդեհել, փնջել և այլն), ը) բայեր, որոնք արտահայտում են պարունակելու, ընդգրկելու, տեղավորելու կամ տեղադրելու զաղափար (ամանել, ամբարել, բանտել, գրկել, գրպանել, ծրարել, հորել, արկղել, զնդանել և այլն), թ) բայեր, որոնք արտահայտում են մի բանով զբաղվելու զաղափար (բոյկոտել, գրոհել, ընթրել, թեյել, կիթել, հնձել, ճակատել, ճաշել, սիրել և այլն), ժ) բայեր, որոնք նշանակում են գտնվել մի դրութիւն մեջ, ի հայտ բերել որևէ հատկութիւն, դրութիւն, ձևութիւն մի առանձնահատկութիւն (անձրևել, բուրել, դիշերել, թախծել, թիկնել, ձյունել, կոկոնել, մրկել, շնչել, որդնել, տերևել, ծաղկել և այլն)³⁰:

Ա. Արտահայտանք շեղոք սեռի բայերի իմաստների ընդհանրական կապակցութեամբ ևս կատարում է շեղոք սեռի բայերի խմբավորումներ՝ նկատի առնելով նրանց դրսևորած իմաստները: Այսպես՝ նա առանձնացնում է հետևյալ բայախմբերը՝

1. Բայեր, որոնք արտահայտում են տեղափոխութիւն տարածութիւն (նաև ժամանակի) մեջ (արշավել, գալ, գաղթել, ընթանալ, ժամանել, լողալ, հասնել, հոսել, հեռանալ, մոտենալ, շփել, սլանալ, սողալ, սուրալ, վազել, փախչել, քայլել):

2. Բայեր, որոնք արտահայտում են ընդհանրապես առարկայի դիրքի ալլեայլ փոփոխութիւն (բազմել, ընկնել, թիկնել, նստել, պառկել և այլն):

3. Բայեր, որոնք արտահայտում են զգայական, կամային ու մտային զանազան փոփոխութիւններ (ալնածել, ամաշել, ապշել, բարկանալ, գազազել, գարշել, դժգոհել, երկբայել, երկմտել, զայրանալ, զարհուրել, զարմանալ, թախծել, խորշել, ծիծաղել, համառել, վախենալ, վարանել, վշտանալ, ցնծալ):

4. Բայեր, որոնք արտահայտում են բնախոսական և մարմնական ալլ երևույթներ, փոփոխութիւններ, իրողութիւններ, դրութիւններ (արտափել, ծարավել, հոգնել, հորանջել, մրափել, մրսել, նիրհել, ննջել և այլն):

30 Ա. Արտահայտանք, նշված աշխ., էջ 61—56:

5. Բայեր, որոնք արտահայտում են բնության զանազան երևույթների վերաբերյալ եղելով լուսնային (ամպել, երեկոյանալ, լուսանալ, մըթնել և այլն):

6. Բայեր, որոնք արտահայտում են բնական զանազան պրոցեսներ (աճել, բողբոջել, բուսնել, մահանալ և այլն):

7. Բայեր, որոնք արտահայտում են մտային ու ֆիզիկական զանազան գործողություններ (բանակցել, բանավիճել, ընդվզել, կռվել, հակաճառել, մարտնչել, վիճաբանել, վիճել և այլն):

8. Բայեր, որոնք արտահայտում են բնաձայնական զանազան երևույթներ (բզզալ, թխկալ, խրխնջալ և այլն):

9. Բայեր, որոնք արտահայտում են վերաբերմունքի դրսևորում (խղճալ, նախանձել, օգնել, նպաստել և այլն):

10. Բայեր, որոնք արտահայտում են հատկանիշի փոփոխություն, հատկանիշի ձեռքբերում, վերածություն իրողություն և այլն (ազահանալ, ածխանալ, ակտիվանալ, բարակել, թարմանալ, խլանալ, հնանալ, նիհարել և այլն):

11. Բայեր, որոնք արտահայտում են առնչական զանազան իրողություններ (գոյակցել, գործակցել, զուգադիպել, պատկանել և այլն)³¹:

Ա. Աբրահամյանը իրավացիորեն նշում է, որ չեղոք սեռի բայերի իմաստային բազմազանությունը հնարավորություն չի տալիս առանց միացորդի բոլոր իմաստները ընդգրկել իմաստային խմբերի մեջ: Բացի դրանից, ըստ նրա, չեղոք սեռի բայերի դրսևորած որոշ իմաստներ հատուկ են նաև ներգործական սեռի բայերին, իսկ այդ նշանակում է, որ իրոք դժվար է բայերը դասակարգել իմաստային հատկանիշով:

Չնայած այդ դժվարությանը, Ա. Աբրահամյանը կարողացել է խմբավորել բազմաթիվ բայեր ըստ նրանց դրսևորած իմաստների: Այդ նշանակում է, որ նրա ուսումնասիրությունը, անշուշտ, կնպաստի ոչ միայն տվյալ հարցի հետազոտությանը, այլև բավարար հիմք կհանդիսանա բայերի խնդրառության հանգամանալից ու հիմնավոր քննության համար: Նա, այսպիսով, ոչ միայն բայերի դասակարգման ուղի է նշում, այլև լայն ասպարեղ է բացում բայական կապակցությունների ուսումնասիրության համար:

Ինչպես արդեն նշվել է, բայերի իմաստային հատկանիշով դասակարգմանը զգալի տեղ է հատկացված Գ. Զահուկյանի «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» աշխատության մեջ: Հեղինակը տարբեր աղբյուրներով առանձնացնում է բայական մի շարք խմբեր՝ երբեմն անվանելով, երբեմն էլ սոսկ թվարկելով դրանք, առանց անվանման՝

³¹ Նույն տեղում, էջ 608—609:

հիմնականում հիմք ընդունելով նրանց դրսևորած իմաստները, իսկ մասամբ էլ այլ կարգի հատկանիշները:

Գ. Զահուկյանը իր աշխատության «Բայերի կապակցելիական դասակարգումը» բաժնում կատարում է բայերի դասանշային, արժույթային և ընտրութային դասակարգում: Դասանշային դասակարգման մեջ նա առանձնացնում է ա) մարդուն հատուկ մտածողական և հաղորդակցական գործողություններ արտահայտող բայերը (ատենաբանել, ատենախոսել, դատել, «դատողություն անել», երազել, զեկուցել, իմանալ, խորհել, խոհալ, խորհրդածել, հաղորդել և այլն), բ) զգայական բայերը (զգալ, լսել, տեսնել և այլն), գ) դիմողական-հրամայողական բայերը (խնդրել, կարգադրել, հանձնարարել, հրամայել, ցանկանալ, ուզել և այլն):

Բայերի արժույթային դասակարգման կապակցությամբ նա առանձնացնում է հետևյալ բայախմբերը.

1. Բայեր, որոնք արտահայտում են վիճակի փոփոխություն ամենաընդհանուր ձևով և գործածվում են բայանվանական (վիճակ ցույց տվող) ենթակաների դեպքում (աշխատանքը սկսվում է, առաջանում է, ծագում է, տևում է, շարունակվում է, անցնում է, փոխվում է, վերջանում է, ավարտվում է, դադարում է և այլն):

2. Բայեր, որոնք ցույց են տալիս նյութական (անօրգանական և օրգանական) աշխարհի գոյակներին՝ իրերին, բույսերին, կենդանիներին առանձին-առանձին կամ տարբեր զուգակցություններով բնորոշ վայրկենական կամ տևական վիճակներ, հատկություններ, զգայություններ, կենսական տարբեր գործառություններ (աճել, բարախել, բողբոջել, բորբոսնել, բուսնել, բուրել, դողալ, դողողալ, թռչել, թրթռալ, ծաղկել, կաղալ, հաղալ, հորանջել, մղկտալ, մրափել, մրսել, նիրհել, ննջել, քայլել, քնել, քրտնել և այլն):

3. Բայեր, որոնք արտահայտում են մարդու համար բնորոշ երևույթներ, վիճակներ, գործողություններ, սովորույթներ (երկբայել, այլաբանել, երկարաբանել, մեծախոսել, շատախոսել, ատենակալել, զահակալել, թմբկահարել, երկմտել, մեծամտել, թիավարել, ձիավարել, պաշտոնավարել, դառանցել, թախծել, թեյել, ժպտալ, լալ, լռել, ծիծաղել, շվարել, ցնծալ, փղձկալ, փոթկալ և այլն):

4. Բայեր, որոնք արտահայտում են զանազան բնական ձայներ, այդ թվում նաև մարդկանց ու կենդանիների (աղմկել, բառաչել, բզզալ, գեղգեղալ, գոչել, թառանչել, խրխնջալ, ծվծվալ, հաչել, հառաչել, հեծել, հեծեծալ, հեկեկալ, շաչել, շառաչել, ոռնալ, որոտալ, սվսվալ, քրքջալ և այլն)³²: «Բայերի կապակցելիական դասակարգումը» բաժնում Գ. Զա-

32 Գ. Զահուկյան, նշված աշխ., էջ 470—472:

հուկյանը առանձնացնում է հրկարժույթ անցողական բայերի մի քանի խմբեր ևս: Դրանք են՝

1. Բայեր, որոնք ցույց են տալիս ֆիզիկական (փոխաբերաբար նաև հոգեկան) ներգործում՝ սովորաբար օբյեկտի հատկութիւնների, բաղադրութեան, տարածական դիրքի փոփոխութեամբ, հրեմմն էլ այդպիսի փոփոխութիւնների արգելակմամբ (ածիլել, ամոքել, այրել, ապխտել, արածել, արծաթել, բետոնել, բուժել, գերել, գրկել, դրոշմել, թարթել, լարել, լկկել, լվանալ, խճճել, ծեծել, ծծել, կեղծել, համբուրել, հուզել, շղթայել, պսակել, վճարել, տանջել, տատանել, տոշորել, ցեմենտել, ուտել, քամել և այլն):

2. Բայեր, որոնք ցույց են տալիս կա՛մ օբյեկտի կախվածութիւն, ընդօրինակում, զգայում, ցանկալիութիւն, կա՛մ օբյեկտի, որպէս վերացական առարկայի հատկանշում (անրջել, ափսոսալ, բաղձալ, գիտենալ, գորհել, դատել, դյուլթել, դրժել, հրազել, զգալ, զննել, ըզձալ, ժխտել, իմանալ, խորհել, խոսել, ծաղրել, ծանակել, կամենալ, հերքել, հիշել, ճանաչել, ճառել, մոռանալ, մտածել, մտորել, նկատել, պատկերել, սիրել, վճռել, ցանկանալ, ուզել, ունենալ, ուրանալ, փորձել, քննել, օրհնել և այլն):

Այս խմբի բայերից հեղինակը առանձնացնում է այն բայերը, որոնք արտահայտում են զգացում, ցանկութիւն և հոգեկան զանազան այլ գործառութիւններ (անրջել, գիտենալ, հրազել, զգալ, ժխտել, իմանալ, խորհել, ծաղրել, կամենալ, հաստատել, հիշել, մոռանալ, մտածել, մտորել, նշել, որոշել, պատմել, վճռել, ցանկանալ և այլն)³³:

Գ. Զահուկյանը խմբավորում է նաև եռարժույթ անցողական բայերը ըստ անուղղակի խնդիրների տարբեր դրսևորումների՝ առանձնացնելով ուղիղ խնդրի հետ միասին տրական, բացառական, գործիական հոլովով, ներգոյականով կամ մեջ կապով, հայցականով կամ մեջ կապով և ուղիղ խնդրի հետ տարբեր կապերով խնդիրներ պահանջող բայերը³⁴:

Ինչպէս տեսնում ենք, Գ. Զահուկյանը կատարում է բայերի դասակարգումներ՝ հիմք ընդունելով բայերի զանազան հատկանիշները, այդ թվում նաև նրանց արտահայտած իմաստներն ու նշանակութիւնները: Այդ դասակարգումները, անշուշտ, կարևոր են ու օգտակար և մեծապէս կնպաստեն նաև բայերի խնդրատրութեան լուսաբանմանը: Գ. Զահուկյանի տեսական հիմնավորումները, նորովի բացատրութիւններն ու մեկնութիւնները, այլև լեզվական հարուստ նյութը, որոնք կապվում են բա-

33 Նույն տեղում, էջ 481—483:

34 Նույն տեղում, էջ 483—487:

յերի խմբավորումների հետ, մեծ չափով կօգնեն բայական բառակապակցություններով զբաղվողներին և կդրվեն բայի խնդրառության ուսումնասիրությունների հիմքում:

Բայերի դասազան խմբավորումների հանդիպում ենք Վ. Քոսյանի «Ժամանակակից հայերենի բառակապակցությունները» աշխատության մեջ, ուր հեղինակը տարբեր խնդիրների բացատրության առնչությամբ կատարում է բայերի խմբավորումներ՝ տալով նրանց համապատասխան անվանումներ: Հեղինակը բայերի դասակարգման հիմքում հիմնականում դնում է նրանց իմաստային հատկանիշը՝ նշելով, թե այդ խմբերից յուրաքանչյուրին ինչպիսի խնդրառություն է բնորոշ, և ինչ նշանակություն են արտահայտում բայի լրացումները: Այսպես՝ առանձնացնում է բայական հետեյալ խմբերը. ասացական (պատմել, խոսել, հարցնել), նպատակային շարժում ցույց տվող (գնալ, հրավիրել, ուղարկել, փոխադրվել), մատուցման, տալու գործողություն արտահայտող (տալ, մատուցել, հանձնել, ընծայել, վերադարձնել, պարգևել, նվիրել, բաշխել, բաժանել, ավանդել, կտակել, փոխանցել և այլն), ներքին հոգեկան վիճակ արտահայտող բայեր (ձգտել, կարոտել, ծարավել, փախչել, տենչալ, պապակել), փոխադարձ կապի մեջ գտնվող, երկու կամ ավելի առարկաների միջև կատարվող գործողություն ցույց տվող (աջակցել, գործակցել, ձայնակցել, ուղեկցել, դաշնակցել, ցավակցել, բարեկամանալ, մրտնդմանալ, բնկերանալ, ծանոթանալ, հաղորդվել, հաշտվել), շարժում ցույց տվող (գնալ, գալ, ուղարկել, բերել, ելնել, դուրս գալ, նստել, վազել), առքի-վաճառքի գործողություն ցույց տվող (առնել, վաճառել, ծախել, գնել), ակտիվ ներգործություն արտահայտող (այրել, վառել, դաղել, կտրել, կոտրել, ջարդել, հոշոտել, ոչնչացնել, զխատել, սպանել, փորել, մաքրել, զարդարել, հարդարել), անջատման, զատման գործողություն ցույց տվող (կտրել, պոկել, բաժանել, խլել, կորզել, անջատել, դատել, քաղել, հանել, ընկնել, ջոկել, փրկել, թափել), զգացական (սթափվել, զգաստանալ, արթնանալ, բաց անել, ուշքի գալ, հանգստանալ և այլն), ծագման, սերման գործողություն ցույց տվող (ծագել, սերել, ծնվել, առաջանալ, առաջ դալ, ստեղծվել և այլն), ստեղծման գործողություն ցույց տվող (ստեղծել, շինել, պատրաստել, կերտել, գոյանալ, ձուլել, հիփել, թխել, կոփել, գործել, մանրել և այլն), իմացական (իմանալ, գուշակել, ճանաչել, գիտենալ և այլն): Հարկ է նկատել, որ բայերի՝ վերը մատնանշված խմբերի առանձնացումը ոչ այլ ինչ է, եթե ոչ բայերի դասակարգում իմաստային հատկանիշով:

Վ. Քոսյանի՝ բայերի այդ խմբավորումները նույնպես կնպաստեն թե՛ բայերի իմաստային (և ոչ միայն իմաստային) դասակարգման հե-

տագա խորացմանը, թե՛ բայական խնդրառության ավելի ծավալուն ու ամբողջական քննությունը:

Բայերի տարբեր խմբավորումների հանդիպում ենք նաև Ն. Պառնասյանի, Մ. Ասատրյանի, Ա. Մարգարյանի և այլոց ուսումնասիրություններում³⁵, որոնք տարբեր առիթներով այս կամ այն չափով անդրադարձել են նաև բայերի խմբավորման հարցին, առանձնացրել մի քանի խմբեր՝ տալով համապատասխան անվանումներ կամ էլ սոսկ թվարկել են դրանք³⁶:

Ինչպես երևաց վերը շարադրվածից, բայերի դասակարգման ուղղությամբ որոշակի աշխատանքներ են տարվել, և քիչ չեն այն ուսումնասիրությունները, ուր պատշաճ տեղ է հատկացված նաև բայերի իմաստային դասակարգմանը: Թեև հետազոտողների նպատակը չի եղել իմաստային հատկանիշով բայերի դասակարգումն ու դրանց քննությունը (ներանք այդ արել են իրենց առջև դրված բուն խնդիրների լուսաբանման կապակցությամբ), սակայն կատարված աշխատանքը բավարար չափով լույս է սփռում նաև իմաստային հատկանիշով բայերի դասակարգման և հատկապես բայական կապակցությունների ավելի խոր ու հանգամանալից ուսումնասիրության վրա, ուստի և արժանի է ուշադրության:

ՄՏԱԾԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ ԽՆԴՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

1. ԲԱՌԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏԵՐԻ ԴԵՐԸ ԽՆԴՐԱՌՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵՋ

Խնդրառությունը, ինչպես արդեն նշվել է, հայ քերականագիտության մեջ ըմբռնվել է լայն և նեղ իմաստներով: Նեղ առումով նշանակել է տվյալ բայի խնդիր ստանալը, այսինքն՝ չի ընդգրկել պարագաառությունը, իսկ լայն իմաստով խնդրառությունը-ը տարածվել է նաև պարագաառության վրա և չի սահմանափակվել միայն խնդիրներով:

«Խնդրառություն» տերմինը մենք օգտագործելու ենք լայն առումով, այն տարածելով նաև պարագաառության և կապառության վրա: Այդ նշանակությամբ խնդրառությունը-ը համընկնում է կառավարություն տերմինին: Կառավարությունը-ը սկզբնապես ունեցել է թե՛ նեղ և թե՛ լայն

35 Ն. Պառնասյան և ուրիշներ, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, 1976: Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, հ. Բ, 1973: Ալ. Մարգարյան, Հայերենի հարադիր բայերը, 1966:

36 Աշխատանքը շփանրաբեռնելու համար կանգ չենք առնում նշված հեղինակների առանձնացրած բայախմբերի վրա, ամենևին էլ այն կարծիքին չլինելով, թե դրանք կարևոր ու էական չեն:

իմաստով կիրառութիւն, իսկ այժմ հիմնականում գործածվում է լայն իմաստով, ընդգրկելով թե՛ խնդիր ու պարագա ստանալը և թե՛ կապառութիւնը: Մեր կարծիքով նպատակահարմար չէ երկու տերմինների զուգահեռ գործածութիւնը գրեթե նույն նշանակութեամբ:

Կարելի է պահել խնդրառութիւն-ը՝ այդ տերմինի տակ հասկանալ խնդիր ու պարագա առնելը:

Հարմար չէ կառավարութիւն տերմինի օգտագործումը, քանի որ ա) այն կարող է շփոթութեան տեղիք տալ՝ համընկնելով պետական իշխանութեան բարձրագույն կառավարող, գործադիր մարմնի անվանման հետ, բ) կառավարութիւնը, իբրև քերականական տերմին, նոր պետք է տարածում ստանա, իսկ խնդրառութիւն իբրև այդպիսին, արդեն բավականին արմատավորված ու տարածված է: Ահա թե ինչու խնդրառութիւն-ը նախընտրելի է կառավարութիւն-ից: Սա չի նշանակում, թե կառավարութիւն-ը չի կարող երկար գործածվել ու դառնալ սովորական տերմին: Այստեղ խոսքն այդ մասին չէ, այլ շրջանառութեան մեջ դնելու նրա անհրաժեշտութեան: Վերջին հաշիւով տերմինները մեծ մասամբ պայմանական են, և դա հնարավորութիւն է ստեղծում դրանք գործածել նաև նոր իմաստներով ու նշանակութիւններով, իհարկե, ընդլայնելով կամ սահմանափակելով նրանց իմաստները: Այդ տեսակետից ևս մոտենալով խնդրառութիւն տերմինին, կարծում ենք ավելի հարմար է այն գործածել լայն առումով, քան շրջանառութեան մեջ մտցնել կառավարութիւն-ը, մասնավոր ու վերջինս էլ հաճախ կիրառվել է իբրև խնդրառութիւն-ին համարժեք՝ նշանակելով տվյալ բայի խնդիր ստանալը և ոչ ավելին: Եթե կառավարութիւն-ը կարելի է լայն իմաստով գործածել, ապա նույնը կարելի է տարածել նաև խնդրառութիւն տերմինի վրա: Նախընտրելի ենք համարում վաղուց արմատացած և լայնորեն տարածված տերմինի գործածութիւնը, քան հնում գործածված և մոռացված տերմինի վերականգնացումը:

Խնդրառութիւնը, ինչպես արդեն նշվել է, բառերի ստորադասական կապակցութեան այնպիսի եղանակ է, երբ ստորադաս անդամը որոշակի փոփոխութիւն է կրում գերադաս անդամի պահանջով կամ թեւադրմամբ, այսինքն՝ հանդես է գալիս այս կամ այն հոլովով կամ էլ դրսևորվում է հոլովական ձևի ու կապի զուգորդութեամբ: Գ. Զահուկյանի ըմբռնմամբ խնդրառութիւնը (կառավարութիւնը) քերականական կախման այն եղանակն է, որն իրականացվում է առաջին հերթին լրացումների հոլովական ու կապային ձևավորմամբ³⁷:

խնդրառութիւնը որոշակիորեն տարբերվում է համաձայնութիւնից, և դա արտահայտվում է նրանում, որ համաձայնութիւն ղեկընդունող ստորադաս անդամն ստանում է գերադասի քերականական հատկանիշները, այսինքն՝ լրացման ձևը պայմանավորվում է գերադաս անդամի ձևով, իսկ խնդրառութիւն ժամանակ ստորադաս անդամի ձևը պայմանավորվում է գերադաս անդամի ոչ թե ձևով, այլ իմաստով, այսինքն՝ լրացումն այս կամ այն ձևն է ստանում՝ թելադրված լրացչալի նշանակութեամբ: Այսպես՝ Ես մտածում եմ այդ մասին: Մենք մտածում ենք այդ մասին: Ես կմտածեմ այդ մասին: Մենք պիտի մտածենք այդ մասին: Դու մտածիր այդ մասին:

Այստեղ գերադաս բառի քերականական ձևը որևէ դեր չի խաղում խնդրառութիւն մեջ: Լրացչալը բոլոր օրինակներում հանդես է եկել միևնույն ձևով (այդ մասին), մի բան, որ պայմանավորված է ոչ թե բայերի քերականական հատկանիշներով, այլ նրանց դրսևորած իմաստներով: Այսպիսով, կապակցութիւն գերադաս անդամի ձևային փոփոխութիւնը չի արտահայտվում ստորադասի ձևի մեջ: Վերջինս մնում է անփոփոխ, այսպես ասած, շեղոք ու անտարբեր գերադաս բառի ձևի նկատմամբ:

Հետևյալ օրինակներում՝ Մարդպետունին վախենում էր նախարարների դավաճանութիւնից: Մենք սարսափում ենք նրանց գժտութիւնից, լրացումները հանդես են եկել միևնույն հոլովով՝ բացառականով, մի բան, որ պայմանավորված է այդ բայերի իմաստային ընդհանրութեամբ:

Հարկ է նկատել, որ իմաստային ընդհանրութիւն ունեցող բառերը սովորաբար միևնույն բնույթի լրացումներ են ստանում, այսինքն՝ միևնույն դրսևորումն ունեցող լրացում են պահանջում, և դա վերաբերում է ոչ միայն բայերին, այլև գոյականներին, ածականներին և այլն: Այսպես՝ տեղյակ իրավիճակին, անտեղյակ ցավին, իրազեկ գործերի ընթացքին, գիտակ գործին և այլ կապակցութիւնների մեջ լրացումները ձևավորվել են տրական հոլովով, մի բան, որ պայմանավորված է ածական-լրացչալների իմաստային ընդհանրութեամբ (դրանք արտահայտում են իրազեկութիւն իմաստ):

Հարգանք մեծերի նկատմամբ, սեր ամուսնու նկատմամբ, համակրանք աշխատակիցների նկատմամբ, ատելություն թշնամու նկատմամբ և այլ կապակցութիւններում լրացումներն ստացել են կապային ձևավորում (սեռական հոլովածև + նկատմամբ կապ)՝ պայմանավորված լրացչալ-գոյականների իմաստային միևնույն դաշտին պատկանելու հանգամանքով: Դրանք արտահայտում են հոգեկան զգացում:

Իմաստային ընդհանրութիւն են ցուցաբերում պայքարել, կռվել, պատերազմել, մարտնչել, բռնաբռնել և այլ բայեր, որոնք արտահայտում

են պայքարելու, կռվելու իմաստներ: Այդ բայերն առնում են սեռական հոլովի ու դեմ կապի զուգորդմամբ ձևավորված լրացումներ (պայքարել հանցագործության դեմ, կռվել բռնականների դեմ, մարտնչել թշնամու դեմ, բողոքել դեկավարության դեմ և այլն):

Նկատենք, որ բողոքել բայի լրացումը կարող է դրսևորվել նաև տրական և բացառական հոլովներով կամ էլ սեռականով ու մասին կապով՝ արտահայտելով իմաստային տարբերություններ ու նրբերանգներ: Այսպես՝ բողոքել դիրեկտորին, բողոքել դիրեկտորից, բողոքել դիրեկտորի մասին կապակցություններից առաջինում հանգման հարաբերություն է դրսևորվում, մյուսներում՝ վերաբերության, ընդ որում վերաբերության իմաստը ավելի ընդգծված ձևով է արտահայտվում կապային լրացման մեջ (բողոքել դիրեկտորի մասին): Իմաստային միևնույն դաշտին պատկանող անջատել, անջատվել, գատել, գատվել, ջնկել, բաժանվել, պոկել, պոկվել, կտրվել, հեռանալ, փախչել և այլ բայեր ստանում են բացառականով ձևավորված լրացումներ (անջատել հոսանքից, անջատվել խրմբից, գատել միմյանցից, բաժանվել իրարից, պոկվել հանգույցից, կտրվել ժայռից, հեռանալ ընկերոջից, փախչել թշնամուց և այլն): Սրանք արտահայտում են անջատման, հեռացման հարաբերություն:

Բացառականով խնդրառությունը բնորոշ է նաև այն բայերին, որոնք սերման, ծագման կամ ելման հարաբերություն են արտահայտում: Այդպիսիք են սերել, սերվել, ծնվել, ծագել, բխել, ելնել, առաջ գալ, երևան գալ, դուրս ելնել, դուրս գալ, ստեղծվել և այլն. օրինակ՝ սերել իշխանական տոհմից, ծնվել հողից, ծագել ուրարտացիներից, բխել փաստերից, ելնել օրենսգրքից, դուրս գալ ֆաղափից, ստեղծվել օրգանական նյութերից և այլն:

Իմաստային միևնույն դաշտին են պատկանում վախենալ, սարսափել, երկյուղել, երկյուղ կրել, երկյուղ ունենալ, ահաբեկվել, սոսկալ և այլ բայեր, որոնց լրացումները դարձյալ նույն բնույթի են՝ արտահայտված բացառական հոլովաձևով. օրինակ՝ վախենալ թշնամուց, սարսափել սպանությունից, երկյուղել գաղաններից, երկյուղ կրել երկպառակությունից, հաբեկվել թշնամու հարձակումից, սոսկալ գերինների տեսքից և այլն:

Իմաստային ընդհանրություն ունեցող հպարտանալ, հիանալ, պարծենալ, սփանջանալ, կլանվել և այլ բայերի բնորոշ է գործիական հոլովով արտահայտված խնդրառություն (հպարտանալ տղայով, հիանալ ֆաղափի կառույցներով, սփանջանալ բնության գեղեցկությամբ, պարծենալ ծնողներով, կլանվել երաժշտությամբ և այլն):

Վերջապես՝ վիճակ ցույց տվող բնել, հորանջել, ննջել, կանգնել, նստել և այլ բայեր ստանում են ներգոյական հոլովով արտահայտված

լրացումներ: Ինչպես՝ Բենե ճնջարանում, հորանջել գնացում, ճնջել հյու-
րասենյակում, նստել դահլիճում, կանգնել պատշգամբում և այլն:

Ներգոյականով լրացում ստանալը բնորոշ է նաև ակտիվ գործողու-
թյուն ցույց տվող սպանել, կոտրել, ջարդել, սղոցել, խեղդել, վառել,
գլխատել և այլ բայերի (սպանել բանտում, սղոցել արհեստանոցում,
խեղդել ծովում, վառել բնակարանում, գլխատել ճամբարում և այլն)³⁸:

Վերը շարադրվածից երևում է, որ իմաստային միևնույն դաշտին
պատկանող բառերին բնորոշ է միատեսակ խնդրառություն: Հարկ է նշել,
սակայն, որ բայերի իմաստային դաշտերը չափազանց շատ են, իսկ
հոլովներն ու կապերը սահմանափակ են, ուստի իմաստային ամեն մի
դաշտի պատկանող բայախումբը չի կարող առանձին, միայն իրեն բնո-
րոշ հոլովական կամ կապային դրսևորում ստանալ, այսինքն՝ ամեն մի
բայախմբի համար գոյություն չունի առանձին հոլովածև (կամ կապային
արտահայտություն), դրա համար էլ իմաստային տարբեր դաշտեր կա-
րող են ստանալ նաև միևնույն կամ գրեթե նույն բնույթի լրացումներ:
Այդ տեսակետից աչքի է ընկնում հատկապես տրական հոլովածևը, որով
կարող են կիրառվել իմաստային տարբեր դաշտերի պատկանող մի շարք
բայախմբերի լրացումներ:

Այսպես՝ տրականով խնդիր են առնում ա) հանգման հարաբերու-
թյուն արտահայտող հանգել, հանդիպել, մոտենալ, միանալ, դիպչել,
կպչել, միահյուսվել, բախվել, քսվել և այլ բայեր (հանգել եղրակացու-
թյան, հանդիպել ընկերոջը, մոտենալ կայարանին, դիպչել ծառին, կպչել
ձեռքին, բախվել գնացքին, քսվել պատին), բ) մատուցման իմաստ ունե-
ցող մատուցել, նվիրել, տալ, հանձնել, պարգևել և այլ բայեր (մատու-
ցել հաճախորդին, նվիրել հյուրին, տալ արշավախմբին, հանձնել տի-
րոջը, պարգևել առաջավորներին): Նկատենք, որ այս խմբի բայերը կա-
րող են ստանալ նաև կրող խնդիր. օրինակ՝ ապրանքը հանձնել հաճա-
խորդին, շքանշանը հանձնել առաջավորներին, գիրքը նվիրել գրադա-
րանին և այլն: Այստեղ առկա է կրկնակի խնդրառություն՝ արտահայտ-
ված հայցականով ու տրականով, գ) ասացական ասել, հաղորդել, պատ-
մել, հայտնել, հրամայել, թելադրել, պատասխանել, հարցնել, զեկուցել,
տեղեկացնել և այլ բայեր (ասել ուսուցչին, հաղորդել հրամանատարու-
թյանը, պատմել ընկերոջը, հայտնել թշնամուն, հրամայել զինվորներին,
պատասխանել հարցին, զեկուցել գիտխորհրդին և այլն): Այս բայերի
մի մասը ևս կարող է ստանալ նաև կրող խնդիր (լուրը հայտնել ղեկա-

38 Ներգոյական հոլովով արտահայտված լրացումների դեպքում խնդրառությունը մեծ
մասամբ դրսևորվում է պարագառությամբ, այսինքն՝ լրացումները ավելի շատ պա-
րզայի, քան խնդրի պաշտոնով են կիրառվում:

վարութեանը, տեքստը թեւադրել աշակերտներին, դասը պատմել ուսուցչին և այլն): Նշված բայերից մի քանիսը կարող են ստանալ վերաբերութեան խնդիր՝ արտահայտված այդ դերանվան հայցական հոլովի և մասին կապի զուգորդմամբ. օրինակ՝ տեղեկացնել այդ մասին, պատմել այդ մասին, հաղորդել այդ մասին և այլն:

Վերը նշված ասացական բայերի լրացումների պատկերը կարելի է ներկայացնել հետևյալ կադապարներով՝

բայ + գ. տրական հոլով.

բայ + գ. հայցական հոլով + տրական հոլով.

բայ + մասին կապ + կապվող բառ.

բայ + մասին կապ + կապվող բառ + տրական հոլով:

Տրականով խնդրառություն են ցուցաբերում նաև առնչակցություն ցույց տվող առնչվել, մասնակցել, զուգակցել, աջակցել, թղթակցել, գործակցել, աշխատակցել, դաշնակցել, ձայնակցել և այլ բայեր. օրինակ՝ առնչվել գործին, մասնակցել հանդեսին, զուգակցել գիտական աշխատանքին, աջակցել աղատագրական շարժմանը, թղթակցել ռադիոյին, դաշնակցել հույներին և այլն: Նկատենք, որ առնչվել և դաշնակցել բայերի լրացումները կարող են արտահայտվել նաև սեռական հոլովի ու հետ կապի զուգորդմամբ. ինչպես՝ առնչվել մշակույթի հետ, դաշնակցել ռուսների հետ: Որոշ տարբերություն են հանդես բերում գործակցել և խորհրդակցել բայերը, որոնց համար առավել բնորոշ է կապային խնդրառությունը՝ ձևավորված սեռականով և հետ կապով. օրինակ՝ գործակցել դիրեկտորի հետ, խորհրդակցել ղեկավարության հետ և այլն: Խորհրդակցել բայի լրացումը կարող է արտահայտվել մասին, շուրջ, կապակցությամբ կապերով. օրինակ՝ խորհրդակցել այդ մասին (այդ հարցի շուրջ, այդ կապակցությամբ):

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարելի է նշել, որ բառերի խընդրառութեան մեջ որոշակի դեր են կատարում իմաստային դաշտերը: Նույնիմաստ բայերի համար հիմնականում բնորոշ է նույն բնույթի լրացում ստանալը, սակայն, դրա հետ միասին առանձին բայեր հանդես են բերում նաև որոշ տարբերություններ խնդիրների ձևավորման մեջ՝ պայմանավորված բայերի նրբիմաստներով, նախադասութեան կառուցվածքով, հաղորդման նպատակաուղղվածությամբ, լրացման բնույթով և այլ հանգամանքներով:

Ուրեմն, մի կողմից իմաստային միեկնույն դաշտին պատկանող բառերը ստանում են նույն բնույթի լրացումներ, մյուս կողմից՝ տարբեր դաշտերի բայախմբերի լրացումները հանդես են գալիս նույն հոլովա-ձևով կամ ստանում կապային միեկնույն դրսևորումը. դա, իհարկե, միանգամայն պարզ է ու հասկանալի: Բայիմաստները շատ են, իսկ հո-

լովներն ու կապերը սահմանափակ, որը և պատճառ է հանդիսանում նաև իմաստային տարբեր դաշտերի պատկանող որոշ բայերի լրացումների միևնույն դրսևորում ստանալուն:

Անհրաժեշտ է ընդգծել, որ մի շարք բայեր ստանում են միայն հոլովաձևով (կամ հոլովաձևերով) արտահայտված լրացումներ, որոշ բայերի լրացումները ձևավորվում են միայն կապերով, կան բայեր էլ, որոնց լրացումները կարող են ստանալ թե՛ հոլովական, թե՛ կապային ձևավորում: Այս վերջին խմբի բայերը քանակապես գերազանցում են մյուսներին, և քիչ են այն բայերը, որոնց խնդիր-լրացումների դրսևորումը սահմանափակված է, այսինքն՝ կարող են հանդես գալ կա՛մ միայն հոլովաձևերով, կա՛մ էլ միայն կապի ու կապվող բառի զուգորդմամբ: Այսպես՝ ուտել, խմել, կարել, կաբել, հագնել, քննել, հայցել, ծխել, ծաղրել և այլ բայերի բնորոշ է հոլովաձևով արտահայտված խնդրառություն (ուտել ճաշը, խմել գինին, կարել կոստյումը, հագնել վերարկուն, քննել գործը, ծաղրել ընկերոջը, ծխել ծխախոտը և այլն): Նկատենք նաև, որ նշված բայերից մի քանիսը կարող են ստանալ մեկից ավելի հոլովներով արտահայտված խնդիրներ (ուտել ճաշը (ճաշից), խմել գինին (գինուց) և այլն): Այստեղ լրացումը մի դեպքում հանդես է եկել հայցականով, մյուս դեպքում՝ բացառականով՝ արտահայտելով խնդրային գրեթե նույն հարաբերությունները: Հետևյալ բայերը՝ մաքառել, մարտնչել, բողոքել, զայրանալ, զարմանալ, ամուսնանալ, հաշտվել և այլն պահանջում են կապային ձևավորում ունեցող լրացումներ (մաքառել թշնամու դեմ, մարտնչել թշնամու դեմ, բողոքել որոշման դեմ, զայրանալ երեխայի վրա, զարմանալ մի բանի վրա, հաշտվել ընկերոջ հետ, ամուսնանալ սիրած աղջկա հետ և այլն): Վերջապես, շատ ու շատ բայերի համար բնորոշ է թե՛ հոլովաձևով, թե՛ կապային ձևավորմամբ խնդրառություն: Այսպես՝ գրել նամակ (այդ մասին), պատմել հեքիաթ (գործից, այդ (մեկի) մասին), խորհել անելիքը (այդ (ներա) մասին), ծանոթանալ գործին (երգչուհու հետ), ժպտալ ընկերոջը (ընկերոջ ասածի վրա), իմանալ դադունիքը (այդ մասին) և այլն:

Նկատենք, որ միևնույն բայի տարբեր ձևով արտահայտված լրացումները դրսևորում են խնդրային տարբեր հարաբերություններ: Այսպես՝ պատմել հեքիաթ (այդ մասին), խորհել անելիքը (այդ մասին, դրա շուրջ) և այլ կապակցություններում լրացումները շարահյուսական տարբեր գործառույթ ունեն՝ կրող և վերաբերության խնդիրների: Որոշ դեպքերում, սակայն, լրացումները ոչ թե տարբեր պաշտոններով են կիրառվում, այլ շարահյուսական նույն դերն են կատարում՝ դրսևորելով իմաստային ու լեզվաոճական նուրբ տարբերություններ: Այսպես՝ ծանոթանալ

գործին (ղեկավարի հետ), ժպտալ հանդիսատեսին (ընկերոջ ասածի վրա) և այլ կապակցություններում տրականով արտահայտված լրացումները հանգման հարաբերություն են դրսևորում, իսկ կապային ձևավորում ստացած լրացումներով հանգման նշանակության հետ դրսևորում է նաև փոխադարձության (ծանոթանալ ղեկավարի հետ) և անհավանականության (ժպտալ ընկերոջ ասածի վրա) հարաբերություն: Այսինքն՝ կան լեզվաոճական և իմաստային նուրբ տարբերություններ այդ կապակցությունների միջև:

Կարևոր է շեշտել, որ մի շարք բայերի համար թեև առավել հատկանշական ու բնորոշ է խնդրառության այս կամ այն տեսակը, որը կայուն օրինաչափություն է ներկայացնում, սակայն հանդիպում են նաև խնդրառական այլ դրսևորումներ: Այսպես՝ եթե տվյալ բայերի համար առավել բնորոշը կապային խնդրառությունն է, ապա նրանք, իհարկե, ոչ հաճախակի ու ոչ օրինաչափորեն կարող են հանդես բերել նաև հոլովական խնդրառություն և, ընդհակառակը, եթե նրանց համար հատկանշական է հոլովական ձևավորմամբ լրացում ստանալը, ապա նրանք կարող են (դարձյալ ոչ հաճախակի) ստանալ նաև կապային ձևավորմամբ լրացումներ: Այդ դեպքում, անշուշտ, խնդրառության մի տեսակը գերիշխող է լինում, տարածված ու սովորական, իսկ մյուսը՝ անսովոր ու ոչ օրինաչափական: Բացի դրանից, կան բայեր, որոնց լրացումը օրինաչափորեն դրսևորվում է այս կամ այն կապով ու կապվող բառով, սակայն հանդիպում են նաև նույն բայերի՝ ուրիշ կապի ու կապվող բառի զուգորդմամբ ձևավորված լրացումներ:

Հիանալ բայը պահանջում է գործիական հոլովաձևով ձևավորված խնդիր. օրինակ՝ Անհագուրը հիացավ ոսկեղեղձան հյուսերով (ԱԲ, Երկ., էջ 230): Գործածական են նաև հիանալ բնության գեղեցկությամբ, հիանալ ուսանողի պատասխաններով և այլն: Այս խնդրառությունը սովորական ու օրինաչափական է հիանալ-ի համար: Սակայն, թեև ոչ հաճախակի, նշված բայը ստանում է նաև կապային խնդրառություն. ինչպես՝ Բայց նրա սրտատուրքան վրա հիացած մտածում էր (ՎԱ, ՍԱ, էջ 44): Ընկերները նրան դիտում էին ամեն կողմից և հիանում նրա հերկույեսյան կազմվածքի վրա (Ն. տ., էջ 185): Կապային խնդրառությունը հիանալ բայի համար այնքան էլ բնորոշ ու օրինաչափական չէ, գերիշխողը, սովորականն ու հատկանշականը գործիականով արտահայտված խնդրառությունն է:

Հարկ է նկատել, որ հիանալ-ը կարող է ստանալ նաև բացառականով արտահայտված լրացում. օրինակ՝ նա բեռը ցած դրեց, բաց արեց ու սկսեց ձեռքով խառնել գանձը և ինքն իրեն հիանալ նրա տեսքից (ՎԱ, ՍԱ, էջ 278): Այս խնդրառությունը կապային խնդրառության նման բնո-

րոշ չէ հիանալ բային: Այն ևս տարածում չունի գրական լեզվում և քիչ է հանդիպում:

Գնալ բայի համար սովորական է կա՛մ միայն հայցականով, կա՛մ էլ հայցական հոլովի և դեպի կապի զուգորդմամբ արտահայտված լրացում ստանալը. օրինակ՝ — Ափսոս Մարիան, գնաց դեպի մահ (Ավ., 11. 2. 1981): Պրոֆեսորադասախոսական կոլեկտիվները դեպի ՍՄԿԿ 26-րդ համագումարը կգնան նոր նվաճումներով (ՍՀ, 12. 2. 1981): Սովորական են նաև գնալ ֆաղաֆ (տուն, անտառ, ինստիտուտ) և գնալ դեպի քաղաք (տուն, անտառ, ինստիտուտ և այլն) արտահայտությունները: Թեև ոչ հաճախադեպ հանդիպում են նաև վրա կապով ու կապվող բառով ձևավորված լրացումներ. օրինակ՝ Ձին գնաց ծխի հոտի վրա (ՍԽ, ՄՍ): Ներս ընկավ խոսքովը և գնաց Գլուտի վրա (ԴԴՎ): Երկու դեպքում էլ դրսևորվում է տեղի իմաստ՝ ուղղության հարաբերությամբ, սակայն դեպի կապով ձևավորվածը բնորոշ ու օրինաչափական է գնալ բայի համար, իսկ վրա կապի ու կապվող բառի զուգորդմամբ արտահայտված լրացումն անսովոր է ու ոչ օրինաչափական: Այն դուրս է գալիս գործածությունից՝ իր տեղը զիջելով դեպի կապով ձևավորված լրացումներին:

Զարմանալ բայը պահանջում է վրա կապի ու կապվող բառի զուգորդմամբ ձևավորված լրացում (զարմանալ մի բանի (մեկի) վրա), որը նրա համար սովորական ու բնորոշ խնդրառություն է: Սակայն երբեմն հանդիպում է նաև հոլովական խնդրառություն. օրինակ՝ Ի միջի այլոց, հավերը անկեղծորեն զարմացած էին իրենց ձագերի տարօրինակ տեսքով (ՎԱ, ՍԱ, էջ 139): Գործիական հոլովով արտահայտված խնդրառությունը օրինաչափական ու բնորոշ չէ զարմանալ-ի համար:

Վրդովվել բայը հիմնականում ստանում է բացառականով լրացում (վրդովվել մեկից (մի բանից)), ուր լրացման միջոցով դրսևորվում է ներգործության և պատճառի հարաբերություն: Այսպես՝ հայրը վրդովվեց աղջկանից (աղջկա կողմից) կարող է նշանակել ա) աղջիկը պատճառ հանդիսացավ հոր վրդովման, բ) աղջիկը վրդովվեցրեց հորը, հայրը վրդովմունք ապրեց, վրդովվեց աղջկա կողմից և այլն:

Առաջին կապակցության մեջ իշխում է պատճառի, երկրորդում՝ ներգործության հարաբերությունը:

Վրդովվել բայը երբեմն առնում է նաև դեմ կապով ու կապվող բառով ձևավորված լրացում. օրինակ՝ Նա վրդովված էր այդ չեղյալ վիշապի դեմ (ՎԱ, ՍԱ, էջ 315): Այս խնդրառությունը այնքան էլ բնորոշ չէ վրդովվել բային, թեև հանդիպում է գեղարվեստական խոսքում: Այդ դեպքում լրացումը համատեղում է հանգման և ընդդիմության հարաբերություններ, այսինքն՝ նրա իմաստը անխառն չէ: Վրդովվել բայի՝ դեմ կապով ձևավորված խնդրառությունը մասամբ պայմանավորված է նրա-

նով, որ վրդովվել-ը դրսևորում է նաև կատաղելու, զայրանալու նշանակություն, իհարկե, ոչ որպես հիմնական իմաստ, այլ երկրորդական, ածանցյալ նշանակություն, իսկ կատաղել և զայրանալ բայերի համար սովորական ու բնորոշ է դեմ կապով ձևավորված խնդրառությունը. օրինակ՝ Բայց կարո՞ղ է նահապետական հոգեբանությունը հայ մարդը, թեկուզ լինի շատ կատաղած նոր կարգերի դեմ անառակության մղիքը աղջկան (ՄՀ, 14. 2. 1981):

2. ՄՏԱԾԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Ժամանակակից հայոց լեզվի բայերի մեջ առանձնանում են այսպես կոչված մտածական բայերը, որոնք ցույց են տալիս մարդու մտածողությունն ու մտալիոր գործունեությունը, այլև դրանց առնչվող, դրանց հետ սերտորեն կապված գործողություններ: Մտածողություն տեղումինը կիրառում ենք լայն իմաստով՝ տարածելով ոչ միայն բուն մտածողության, այլև ընդհանրապես մարդու մտալիոր գործունեության՝ իմացության, ճանաչողության, գիտակցության, հիշողության և այլնի վրա, որոնք սերտորեն կապված են մտածողության հետ՝ հանդիսանալով վերջինիս յուրատեսակ դրսևորումները: Մտածական բայերի մեջ, այսպիսով, ընդգրկվում են այն բոլոր բայերը, որոնց ցույց տված գործողությունը կապվում կամ առնչվում է մարդու մտածողությանը, վերաբերում է նրա մտալիոր գործունեությանը:

Մտածական բայերի քանակը թեև այնքան էլ մեծ չէ (հասնում է շուրջ 50—60-ի), սակայն դրանք ընդհանրությունների հետ միասին հանդես են բերում նաև որոշ տարբերություններ: Այդ տարբերություններն ու զանազանությունները արտահայտվում են նրանց դրսևորած իմաստների, գործողության բնույթի, առարկայի կամ խնդրի նկատմամբ ունեցած հարաբերության, խնդիրների ձևավորման և այլնի մեջ:

Մտածական բայերի պատկերը, հատկապես խնդրառությունը՝ առավել պարզ ու հստակ ներկայացնելու համար շատ կարևոր է նաև դրանց դասակարգումը: Մատնանշված բայերի դասակարգումը կարելի է կատարել տարբեր հիմունքներով՝ մի դեպքում նկատի առնելով նրանց արտահայտած նշանակությունները, մի այլ դեպքում՝ առարկայի կամ խնդրի նկատմամբ ունեցած հարաբերությունը, երրորդ դեպքում՝ խնդիրների ձևավորումը, չորրորդ դեպքում՝ գործողության բնույթը, երբեմն էլ սեռային հատկանիշը և այլն:

Մտածական բայերի ճնշող մեծամասնությունը ներգործական սեռի է, և շատ քիչ են չեզոք սեռի բայերը: Մտածական բայերի կազմի մեջ

մտնող ներգործականների խնդրառութիւնը, բնականաբար արտահայտվում է կրող խնդիր, իսկ շեղութիւնը այլ (ոչ կրող) խնդիրներ ստանալու մեջ:

Խնդրառական տարբերութիւնը հիմնականում պայմանավորված է այդ բայերի դրսևորած իմաստներով: Նույնիսկ միևնույն մասնը խմբերի մեջ մտնող բայերն իմաստային որոշ տարբերութիւն են հանդես բերում, որը և պատճառ է դառնում նրանց խնդրառական զանազանութիւն: Այսպես՝ թեև մտածութիւն են արտահայտում մտածել, դատել, խորհել, մտորել, մտմտալ, միտք անել և նման բայեր, սակայն դրանցից յուրաքանչյուրի իմաստը բացարձակ նույնը չէ, դրանք ունեն նրբիմաստներ, որով և պայմանավորվում են խնդրառական որոշ տարբերութիւններ: Նման զանազանութիւններ հանդես են բերում նաև մտածական մյուս բայերը:

Մտածական բայերի կազմում կարելի է առանձնացնել մի քանի մասնը խմբեր՝ հիմք ընդունելով նրանց դրսևորած բուն նշանակութիւնները: Այսպես՝ որոշ բայերի ցույց տված գործողութիւնը կապվում է մտածութիւն բուն պրոցեսի հետ, ինչպես՝ մտածել, խորհել, միտք անել և այլն: Մի քանի բայերի արտահայտած գործողութիւնը առնչվում է իմացութիւն ու ճանաչողութիւն հետ, ինչպես՝ իմանալ, գիտենալ, ճանաչել և այլն: Որոշ բայեր արտահայտում են հասկանալու, ըմբռնելու գործողութիւն, ինչպես՝ հասկանալ, գիտակցել, գլխի ընկնել, կռահել, ըմբռնել և այլն: Կան բայեր էլ, որոնց իմաստը հիշողութիւն հետ է կապվում, ինչպես՝ հիշել, վերհիշել, մոռանալ, մտապահել, մտաբերել և այլն:

Այսպիսով՝ մտածական բայերի կազմում առանձնանում են հետևյալ մանրախմբերը՝ ա) մտածութիւն բայեր, — արտահայտում են մտածութիւն պրոցեսը: Այդպիսիք են՝ մտածել, դատել, խորհել, մտորել, միտք անել, մտմտալ և այլն: բ) իմացութիւն բայեր, — դրսևորում են իմանալու, գիտենալու նշանակութիւն: Այդպիսիք են՝ իմանալ, գիտենալ, ճանաչել և այլն: գ) Հասկացման կամ կռահման բայեր, — ցույց են տալիս հասկանալը, ըմբռնողութիւնը, կռահելը: Այդպիսիք են՝ հասկանալ, գիտակցել, գլխի ընկնել, կռահել, ըմբռնել, պատկերացնել, կշռադատել և այլն: դ) Զգացութիւն բայեր, — ցույց են տալիս ճանաչողութիւն ստորին աստիճանը: Այդպիսիք են զգալ, զգայել, ընկալել և այլն: ե) Հիշողութիւն բայեր, — սրանց դրսևորած գործողութիւնը կապվում է հիշողութիւն, մտապահման հետ: Այդպիսիք են հիշել, վերհիշել, մտապահել, մտաբերել, մտահան անել, մոռանալ և այլն: զ) Մտահանգման բայեր, — արտահայտում են եզրակացութիւն, եզրահանգում: Այդպիսիք են՝ մտահանգել, եզրակացնել, եզրահանգել, եզրակացութիւն գալ, եզրակացութիւն անել և

այլն: Այս մանրախմբերի առանձնացումը կատարված է որոշ պայմանականութեամբ, և դրանք իրարից խստորեն չեն սահմանազատվում: Տվյալ մանրախմբի բայերից մեկ-երկուսը կարող են հանդես գալ նաև մեկ ուրիշ խմբի հատկանշով: Այդ նշանակում է, որ խմբավորման մեջ լիովին չի պահպանվել բաժանման անդամների՝ միմյանց բացառելու օրենքը, մի բան, որ պայմանավորված է բուն նյութի թելադրմամբ: Չնայած որոշ պայմանականութեանը, այդ խմբավորումն ավելի հստակ ու որոշակի է դարձնում մտածական բայերի կազմը, նրանց դրսևորած իմաստներն ու նշանակությունը, որոնցով էլ հենց պայմանավորվում են խնդրառական տարբերությունները, որոնք ոճավորում են խոսքը՝ ձևեր բերելով ոճական արժեք ու կիրառություն:

Ըստ իրենց դրսևորած գործողության բնույթի՝ մտածական բայերը առանձին խմբերի չեն բաժանվում. նրանց արտահայտած գործողությունը հիմնականում բնորոշ է բանական էակին՝ մարդուն, այսինքն՝ կարող է իրացվել մարդկանց կողմից:

Խնդրի կամ առարկայի նկատմամբ բայերի բաժանման հարցին անդրադարձել է Մ. Աբեղյանը և արել կարևոր դիտողություններ: Նա ըստ մատնանշված հատկանիշի, բոլոր բայերը բաժանում է երկու խմբի՝ ենթակայական և առարկայական: Ենթակայական բայերը այնպիսի գործողություն են ցույց տալիս, որը կատարելու համար միայն ենթական բավական է, իսկ առարկայական բայերի ցույց տված գործողությունը կատարելու համար ենթակայից բացի հարկավոր է մեկ կամ երկու ուրիշ առարկա ևս: Առարկայական բայերը ըստ Մ. Աբեղյանի, իրենց նշանակության համեմատ իբրև լրացում պահանջում են մեկ կամ երկու խնդիր, առանց որի խոսքը թերի կմնա³⁹:

Ինչպես տեսնում ենք, Մ. Աբեղյանը այդ խմբավորման հիմքում դնում է նրանց խնդիր ստանալու կամ չստանալու հատկանիշը: Որոշ բայեր կարող են կիրառվել առանց խնդրի, և նախադասությունը կամ խոսքը թերի չի լինի, իսկ որոշ բայեր, թեև գործածվեն առանց խնդրի, ապա խոսքը թերի կամ կիսատ կմնա, ուստի այդ դեպքում խնդրի առկայությունը մի տեսակ պարտադիր է ու անհրաժեշտ:

Հարկ է նշել, որ Ա. Աբրահամյանը նույնպես բայերը խնդրառական հատկանիշով բաժանում է ենթակայականի և առարկայականի: Ընդ որում, որևէ խնդիր չընդունող բայերը նա համարում է ենթակայական, իսկ ընդհանրապես խնդիր պահանջող բայերը՝ առարկայական⁴⁰:

Ըստ խնդրառական հատկանիշի, մտածական բայերի կազմում կարելի է առանձնացնել երկու խումբ:

39 Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 373—374:

40 Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, էջ 504:

ա) Բայեր, որոնք կարող են գործառնել խնդիր չպահանջելով, առանց, սակայն, նախադասության կամ խոսքի ամբողջականության վրա ազդելու, թերի թողնելու, այսինքն՝ այդ բայերի գործածությունը առանց խնդիր լրացման սովորական է, և նման կիրառությամբ նախադասությունը կամ խոսքը թերի կամ կիսատ չի լինում (միտք անել, մտածել, խորհել և այլն): Սրանց քանակը բավականին սահմանափակ է:

բ) Բայեր, որոնք անհրաժեշտաբար պահանջում են խնդիր լրացումներ, առանց որոնց նախադասության կամ խոսքի իմաստը կիսատ ու թերի, ոչ լրիվ ու ամբողջական է լինում (հիշել, վերհիշել, զգալ, ճանաչել, ընկալել, ըմբռնել, կշռադատել, կռահել, գլուխ հանել, գիտակցել, հասկանալ և այլն): Այս խմբի մեջ ընդգրկվում է մտածական բայերի ճնշող մեծամասնությունը:

Անհրաժեշտ է նշել, որ այս խմբերը խստորեն սահմանազատված չեն միմյանցից, և խմբավորումն էլ որոշ չափով պայմանական է: Այդ է պատճառը, որ մի քանի բայեր կարող են տեղ գտնել թե՛ մեկ, թե՛ մյուս խմբում՝ պայմանավորված մի կողմից նյութի թեկադրմամբ, մյուս կողմից՝ բաժանման անդամների՝ միմյանց բացառելու օրենքը մինչև վերջ հետևողականորեն չկիրառելու հանգամանքով: Սակայն դա չի խանգարում ու չի խոչընդոտում խնդիր լուսաբանմանը:

Ըստ իրենց պահանջած խնդիրների ձևավորման՝ մտածական բայերը բաժանվում են 2 խմբի՝

ա) բայեր, որոնց համար բնորոշ է հոլովական խնդրառությունը,

բ) բայեր, որոնք կարող են ստանալ թե՛ հոլովաձևերով և թե՛ կապի ու հոլովաձևի զուգորդությամբ արտահայտված խնդիրներ: Քանակապես ավելի շատ են առաջին խմբի բայերը: Հոլովաձևերով խնդիր են պահանջում հետևյալ բայերը՝ գիտակցել, զգալ, զգայել, ընկալել, ըմբռնել, կանխազգալ, կանխատեսել, կանխակռահել, կանխագուշակել, կշռադատել, ճանաչել, մտահանգել, եզրահանգել, եզրակացնել, հասկանալ, գլխի ընկնել, նախագուշակել, պատկերացնել, միտը բերել (ընկնել), եզրակացություն անել և այլն:

Հոլովաձևերով և կապի ու հոլովաձևի զուգորդությամբ արտահայտված խնդիր են պահանջում գիտնալ, գուշակել, դատել, երազել, երեակայել, ենթադրել, իմանալ, խորհել, կռահել, խոկալ, հիշել, վերհիշել, մտածել, կանխամտածել, մտորել, մոռանալ, գլխի գցել և այլն: Անցնենք այդ խմբերից յուրաքանչյուրի քննությանը առանձին-առանձին. նախ՝ հոլովներով ձևավորված խնդիր պահանջող բայերի մասին:

Մտածական բայերի կեսից ավելին հոլովական խնդրառություն է հանդես բերում, այսինքն՝ այնպիսի խնդիր են ստանում, որոնք ձևավորվում են հոլովներով, մասնավորապես՝ տրականով, հայցականով,

բացառականով, գործիականով: Սրանց մեջ գերակշռում են հայցականով խնդիրները. այս երևույթն ամենից առաջ պայմանավորված է այդ բայերի սեռային հատկանիշով: Նրանք մեծ մասամբ ներգործական սեռի են, հետևաբար ամենից առաջ պահանջում են ուղիղ խնդիր, որի զըր-սկորման ձևաբանական հիմնական միջոցը հայցական հոլովն է: Այս-պես՝ Իսկույն կոահում է նրա ակնարկի իմաստը (Գ, 1979, 6, էջ 24): Վիկտորյան գուշակեց Գոհարիկի միտքը (ԱԿ, Օտ., 2, էջ 433): Բայց նա ոչինչ չէր զգում, զգում էր միայն մի բան, զգում էր ծառավ, ոգելից խմիչքի անհուն ծառավ (ՆԴ, 1, էջ 45): Դժբախտաբար չես ըմբռնում խանդի կարևորությունը (ԱԿ, Օտ., 2, էջ 200): Միտքը ման էր ածում գյուղի ծանոթ տներում, աղջիկներին վերհիշում (ԱԲ, Երկ., էջ 30): — Բայց սպասեցեք, — հանկարծ մի բան գլխի ընկնելով ասաց Արմենը (ՎԱ, ՍԱ, էջ 286): Անշուշտ, այս բոլորը ինքը տիրուհին չի գլխի ընկել, այլ ունեցել է խելացի կառավարիչ (Գ, 1979, 1, էջ 26): Միտք ընկավ Զառի աքոր խոսքը (ԱԲ, Երկ., էջ 33): Սահմանափակ են այն բայերը, որոնք ստանում են տրականով, բացառականով կամ գործիականով խնդիր լրացումներ: Քիչ են նաև միաժամանակ երկու հոլովաձևերով խնդիր առնող բայերը: Այդպիսիք են միտք բերել, զգայել, ընկալել, պատկե-րացնել, ըմբռնել, զգալ, կանխագգալ, կանխատեսել, կանխագուշակել և այլն:

Այսպես՝ ընկալում էր արտաքին աշխարհի տպավորությունները միայն երկու զգայարաններով: Մտքով պատկերացնում էր իր վիճակը զառամյալ հասակում և այլն: Այստեղ առկա է կրկնակի խնդրառություն: Ընդգծված բայերը իբրև ներգործական սեռի հատկանիշ կրողներ, ստա-ցել են ուղիղ խնդիր՝ դրսևորված հայցական հոլովաձևով, իսկ ըստ իրենց իմաստի, պահանջել են գործիականով լրացում:

Սահմանափակ են մտածական այն բայերը, որոնք պահանջում են տրականով խնդիր-լրացում: Այդպիսիք են մտահանգել, եզրահանգել և այլն, որոնց խնդիրը ձևավորվում է տրական հոլովաձևով. օրինակ՝ մտա-հանգել հանկարծակի հարձակումով ամրոցի գրավմանը: Եզրահանգել դեղամիջոցների օգտագործման անհրաժեշտությամբ:

Հայցականով ու բացառականով լրացում պահանջող բայերը ևս սահմանափակ են: Դրանց մեջ աչքի է ընկնում հատկապես հասկանալ բայը, որը իբրև ներգործական սեռի բայ ընդունում է հայցական հոլո-վով ձևավորված կրող խնդիր. Երբ պիտի կյանքը հասկանա կարգին (ՊՍ, 1, էջ 232): Ուսուցիչը հասկացավ նրա ակնաբեր (ՎԱ, ՍԱ, էջ 205), իսկ իր իմաստով առնում է բացառականով խնդիր. օրինակ՝

— Ո՞վ, Վիկտորյա:

— Ով որ հասկանում է գրականությունից, բանաստեղծությունից,

ոչ դու, դու ինչ ես հասկանում (ԱԿ, Օտ., 2, էջ 76): Շատ հաճախ հասկանալ բայը միաժամանակ ստանում է հայցականով և բացառականով խնդիր լրացումներ, ընդ որում, իբրև հայցականով խնդիր մեծ մասամբ հանդես է գալիս բան գոյականը և ոչինչ որոշյալ դերանունը, իսկ բացառականով խնդիրը որևէ սահմանափակություն չունի: Այդ դեպքում բայ-ստորոգյալը հիմնականում ժխտական ձևով է կիրառվում: Օրինակ՝ Քո և Ավգուտինի պատմությունից ես ոչինչ չհասկացա (ԱԿ, Օտ., 2, էջ 219): Ու ոչ մի բան չեմ հասկանում ոչ քոզածից, ոչ տաբածից (ՀՍ, ԾԺ, 2, էջ 339): Հաթումի աղջիկը բան չէր հասկանում այդ ամենից (ԱԲ, Երկ., էջ 17):

Նկատենք, որ նման կառույցներում բացառականով խնդիրը մեծ մասամբ արտահայտում է անջատման հարաբերություն, իսկ երբեմն էլ դրա հետ միասին համատեղում է այլ իմաստներ: Ներգոյականով խնդիր պահանջող մտածական բայեր չկան, մի բան, որ պայմանավորված է ներգոյական հոլովով խնդրային կիրառության սահմանափակությամբ: Ներգոյականով հիմնականում պարագայական հարաբերություն է գրսևվորվում, խնդրային հարաբերությունը բնորոշ չէ այդ հոլովին, և միայն մի քանի բայեր ու կապակցություններ են, որ կարող են ստանալ ներգոյականով խնդիր - լրացում, որոնց մեջ մտածական բայեր գրեթե չեն հանդիպում: Հոլովաձևերով և կապային ձևավորմամբ խնդիր պահանջող բայերի մեջ առանձնանում են իմացության և հիշողության հետ կապված գործողություն արտահայտող իմանալ, գիտենալ, հիշել, վերհիշել, մտաբերել, մոռանալ և այլ բայեր: Նշված բայերը սեռի թեւադրանքով պահանջում են հայցականով կրող խնդիր, իսկ ըստ իրենց դրսևորած իմաստի՝ կապով ու կապվող բառով ձևավորված լրացում, ընդ որում, այդ բայերի խնդիր-լրացումը մեծ մասամբ ձևավորվում է մասին կապով. օրինակ՝ Ինքը ժամանակը թույլ չէր տալիս մոռանալ հացի մասին (Գ, 1979, № 1, էջ 2): Մենք մոռացել էինք օրերի մասին (ՄԳ, 1979, № 6, էջ 116): Աշխարհի մասին ինչպես մոռանամ (ՊՍ, 1, էջ 360): Հիմա այդ մասին չէլ ուզում հիշել (Ա. Սեկ., ՈՎՍ, էջ 508): Որքան քիչ գիտեն սովետական այս հանրապետության, հայ ժողովրդի անցյալի դժվարին հակառակ դեպքի մասին (ՀԶ, 18.2.1981): Երբ մարդկոմում իմացան սխալի մասին, արդեն ուշ էր (ՄԳ, 1979, № 6, էջ 117):

Հաճախ միևնույն նախադասության մեջ իմացություն և հիշողություն ցույց տվող մի շարք բայեր միաժամանակ ստանում են երկու խնդիր՝ ուղիղ և վերաբերության, առաջինը սեռի, երկրորդը՝ իմաստի թեւադրանքով: Այդ բայերի կրկնակի խնդրառությունը պայմանավորված է նախադասության կառուցվածքով, հաղորդման նպատակով, ինֆորմացիոն բնույթով և այլ հանգամանքներով. օրինակ՝ Որքան բան գիտեն

ուրիշները իմ ցավերի մասին (Մուր., ԵԺ, 3, էջ 35): Երկու գյուղում էլ գիտեին ճիշտ մասին այնքան տեղեկություն (ԱԲ, Երկ., էջ 47): Հիմարներ ենք եղել և ոչինչ չենք իմացել մեր հանդերի ճնշումների մասին (ՎԱ, ՍԱ, էջ 197):

Իմանալ, հիշել բայերի խնդիրը կարող է ձևավորվել նաև բացառականով՝ արտահայտելով վերաբերության կամ ժամանակային հարաբերություն, այդ դեպքում բացառականի իմաստը համանիշ է կամ սեռական + մասին (վերաբերյալ) կապի արտահայտած նշանակությանը կամ սեռական + ժամանակ բառի բացառականին. օրինակ՝ Պետք է շատ բան իմանալ ժողովրդի կյանքից (Գ, 1979, № 12, էջ 42): Վարպետ Մոկուլը դանադան դեպքեր էր հիշում ջահել օրերից (Ա. Սեկ., ՈւՎՄ, էջ 335): Այստեղ կյանքից հոլովածը վերաբերության խնդրի պաշտոն է կատարում՝ համանիշություն հանդես բերելով ժողովրդի մասին (վերաբերյալ) կապակցությանը: Այստեղ թույլ կերպով զգացվում է նաև անջատման հարաբերություն:

Մտածական բայերի բացառականով լրացումը երբեմն դրսևորում է ոչ թե վերաբերության, այլ անջատման հարաբերություն. օրինակ՝ Որոշեցի, ինչ կերպ ուղում է լինի, իմանալ իշխանից այդ գաղտնիքը (Մուր., ԵԺ, 3, էջ 48): Դուրս եկավ գյուղամեջ, դրացի նաբեաններից իմանալու ավելի ստույգ տեղեկություն (ԱԲ, Երկ., էջ 200): Այստեղ իշխանից, նաբեաններից լրացումները անջատման խնդիրներ են (դրանց մեջ թույլ կերպով համատեղվում է նաև միջոցի խնդրի իմաստը՝ (իմանալ հարևանի միջոցով): Այդ կառույցներում նշվում է, որ իշխանից ու հարևաններից, իբրև սկզբնաղբյուրից, սկզբնավորվում է խնդիր առարկան: Անջատումը այստեղ վերացական է, ոչ թանձրացական, և գաղտնիքն ու տեղեկությունը հաղորդվում, այսինքն՝ անջատվում է իշխանից ու հարևաններից: Նախադասության էությունից պարզ է դառնում, որ իշխանից, նաբեաններից ոչ թե վերաբերության խնդիր են, այլ անջատման, թեև հնարավոր է դրանք փոխարինել սեռական + մասին (վերաբերյալ) կապակցությամբ, ինչպես՝ իմանալ իշխանի մասին (հարևանների մասին): Այստեղից կարելի է եզրակացնել, որ նախադասության կառուցվածքը օգնում է ձիշտ որոշելու նրա անդամների միջև եղած հարաբերությունը: Տրամաբանական չի կարող լինել հետևյալ կառույցը՝ որոշեցի իմանալ իշխանի մասին այդ գաղտնիքը: Մյուս օրինակում թեև հնարավոր է իմանալ տեղեկություն հարևանների մասին կապակցության առկայությունը լեզվի մեջ, բայց հաղորդման բովանդակությունը ոչ թե հարևանների մասին տեղեկություն ստանալն է, այլ հարևանների միջոցով, հարևաններից ստույգ տեղեկություն իմանալն է: Այդ են վկայում նախադասության կառուցվածքը, արտահայտած բովանդակությունը և

արտալեզվական գործոնները: Իմանալ բայի խնդիրները կարող են դրսեվորվել նաև բացառականով և սեռականով ու մասին կապով՝ Մի դեպքում արտահայտելով անջատման, մյուս դեպքում՝ վերաբերության իմաստ. օրինակ՝ Ապագա սերունդները ձեզանից կիմանան մեր վերջին բովեների մասին (Գ, 1978, № 11, էջ 12): Իմանալ բայը միաժամանակ կարող է ստանալ 3 խնդիր՝ կրող, վերաբերության և անջատման՝ համապատասխան ձևավորմամբ: Օրինակ՝ Նա սպասավորից շատ բան չիմացավ սուրհանդակի մասին, որքան ինքը գիտեր (Բ, ԾԺ, 7, էջ 36): Այս կառույցում իմանալ բայը եռարժույթ է՝ հանդես է եկել 3 արժույթով, պահանջելով 3 խնդիր: Որ սպասավորից բռնաձեռ անջատման հարաբերություն է դրսևորում և ոչ թե վերաբերության, երևում է նախադասության կառուցվածքից՝ վերաբերության խնդրի առկայությամբ տվյալ նախադասության մեջ: Նույն ձևով հետևյալ նախադասության մեջ՝ ուղում էս կինոկլարից իմանալ ավելին (ՍՀ, 17.2.1981): Հնարավոր է երկու բացատրություն՝ մեկը շատ թույլ, անորոշ ձևով արտահայտված իմանալ կինոնկարի մասին (վերաբերյալ), իսկ մյուսն՝ որոշակի ու հաստատ, իմանալ ավելին կինոնկարի ցուցադրումից՝ կինոնկարի դիտումից: Առաջին դեպքում վերաբերության հարաբերություն է արտահայտվում, երկրորդ՝ կապակցության մեջ՝ անջատման, որը համատեղում է նաև միջոցի նշանակություն: Անշուշտ, ոչ միշտ է նման տարբերակների առաջացման հնարավորություն ստեղծվում, քանի որ օգնության են գալիս համատեքստը և արտալեզվական գործոնները, որոնց շնորհիվ էլ վերանում է երկիմաստությունը խնդրառության մեջ: Կամ՝ Մի շարք նորությունների մասին էլ նոր էի իմանում զբերից (Ավ., 22, 2. 1981) նախադասության մեջ զբերից բացառականը դարձյալ անջատման խնդրի գործառույթ ունի:

Որոշ դեպքերում իմանալ բայի բացառականով արտահայտված լրացումը ոչ վերաբերության և ոչ էլ անջատման հարաբերություն է արտահայտում, այլ հանդես է գալիս պարագայական գործառույթով. օրինակ՝ Սևադան այդ իմացավ մատուլակի մի պատասխանից (Մուր., ԾԺ, 3, էջ 139): Այստեղ պատասխանից ձևը հիմունքի պարագա է: Եվ իրոք, մատուլակի պատահախանը այն հիմունքն է, որով Սևադան իմանում է այդ (բանը): Նման դեպքերում երկիմաստությունը վերացվում է նախադասության բովանդակությամբ, կառուցվածքով: Որոշ բայերի ներգործականից առաջացած կրավորականը պահպանում է ներգործականի խնդրառությունը. օրինակ՝ հիշել այդ մասին-հիշվել այդ մասին, մոռանալ վեճի մասին-մոռացվել վեճի մասին, մտաբերել այդ մասին-մտաբերվել այդ մասին, իմանալ գողության մասին-իմացվել գողության մա-

սին, հիշեցնել բաժանորդագրության մասին-հիշեցվել բաժանորդագրության մասին և այլն:

Հիշել բայի խնդիրը կարող է ձևավորվել նաև բացառական հոլովա-
ձևով: Այս դեպքում նա կարող է արտահայտել մերթ վերաբերության,
երբեմն էլ անջատման հարաբերություն՝ պայմանավորված նախադա-
սության կառուցվածքով և արտաբերական գործոններով: Այսպես՝ Հնա-
գետը քթի տակ ծիծաղեց, ինչ-որ բան հիշեց մարդու նախնական օրերից
(ԱՔ, Երկ., էջ 195): Ես իմ ընկերոջ պատմածից հիշում եմ այն, որ Երանի
Սեթը գլուղի մանեալով սերմնացանն էր (ն. տ., էջ 239): Առաջին օրի-
նակում օրերից բացառականը վերաբերության իմաստ է արտահայ-
տում, այն կարելի է փոխարինել օրերի մասին (վերաբերյալ) կապակ-
ցությամբ, որի վերաբերության իմաստը երկդիմի է: Մյուս նախադա-
սության մեջ պատմածից բացառականը ոչ թե վերաբերության, այլ ան-
ջատման հարաբերություն է արտահայտում:

Հոլովաձևերով և կապի ու կապվող բառով ձևավորված խնդիր-
լրացումներ են պահանջում նաև գուշակել, դատել (դատողություն անել),
երագել, եերադրել, խորհել, խոկալ, կանխագուշակել, կռահել, կշռադա-
տել, կանխամտածել, մտածել, մտմտալ, գլխի գցել, գլխի բնկնել, զգաց-
նել տալ և այլ բայեր: Սրանք հիմնականում ներգործական սեռի բայեր
են և պահանջում են հայցականով խնդիր. օրինակ՝ Հարկ եղավ կշռա-
դատել կատարվածը (ՍՀ, 15.2.1981): Իսկույն կռահում է նրա ակնարկի
իմաստը (Գ, 1979, № 6, էջ 24): Ու խորհում ես խորին խորհուրդ տան-
ջանքներում շարադետ (ՀԹ, 1, էջ 126): Իրար մեղադրելու փոխարեն
միջոց մտածեմք (ՎԱ, ՍԱ, էջ 133): Երիտասարդը մտռում էր իր անե-
լիքը (ԱԿ, Օտ., 2, էջ 121): Աշխարհի բախտն է նախագուշակում (ՀՍ, ԾԺ,
2, էջ 423): Վեց ամսվա ժամկետում Կիրակոսյանը նոր տարբերակներ
մտմտաց (ՍՀ, 5.5.1981): Հարկ է նշել, որ մտածել, մտորել, խորհել
և նման բայերի կրող խնդիրը առաջ է գալիս իբրև տվյալ բայերի գոր-
ծողության արդյունք ու հետևանք: Այսպես՝ մտածել (մտորել, խորհել)
միջոցներ (անելիքը, եղանակներ) կապակցություններում կրող խնդիր-
ները՝ միջոցներ, անելիքը, եղանակներ, առաջ են եկել նշված բայերի
գործողության հետևանքով, ճիշտ այնպես, ինչպես կառուցել տուն, պատ-
րաստել ծաղկեպսակ կապակցություններում տուն և ծաղկեպսակ խնդիր-
առարկաներն են ստեղծվել բայերի գործողության հետևանքով:

Մատնանշված բայերը կարող են ստանալ նաև կապային ձևավոր-
մամբ խնդիրներ, որոնք հիմնականում վերաբերության հարաբերություն
են արտահայտում: Շատ կենսունակ են հատկապես դատել, դատողու-
թյուն անել, երագել, խորհել, մտմտալ, մտորել, մտածել, մտածել տալ
և այլ բայերի կապային խնդիր լրացումները, որոնք մեծ մասամբ ար-

տահայտվում են անուն խոսքի մաս + մասին կապ կաղապարով: Հանդիպում են նաև շուրջ, վերաբերյալ, վերաբերմամբ, համար և այլ կապերով ձևավորված լրացումներ, որոնք լայն տարածում ու ծավալում չունեն: Բերենք բնագրային օրինակներ՝ — Դու ինչպես կարող էիր դառնել նրա գեղեցկության մասին (ԱԿ, Օտ., էջ 148)⁴¹: Եվ կիրակոսյանները բնականաբար սկսեցին մտառալ այդ մասին (ՍՀ, 5. 5. 1981): Դու քո փրկության մասին ես միայն շեղվում (ՊԶ, ԱԵ, էջ 425): Ես խորհում էի հայ ժողովրդի պատմական բախտի մասին (ԱԿ, Օտ., 2, էջ 508): Քայլում էր Թամարան և մտորում անցած ուղու մասին (ԱՎ., 13. 2. 1981): Առաջացել են մեծաթիվ նոր երևույթներ ու պրոբլեմներ, որոնց մասին այն տարիներին դժվար էր անգամ կռահել (ԵԵ, 15. 12. 1981): (Նկատենք, որ կոահել բայի՝ մասին կապով խնդրառությունը այնքան էլ տարածված չէ գրական հայերենում): Հարկ է նշել, որ երբեմն մտածել և խորհել բայերի վերաբերության խնդիրը ձևավորվում է ոչ թե մասին, այլ վրա կապով, որը բնորոշ է հատկապես Մուրացանի, ԲաժՖու, Նար-Դոսի, Թումանյանի լեզվին: Օրինակ՝ Մայրաքաղաքը առնելու վրա է մտածում (Մուր., ԵԺ, 3, էջ 415): Բեշիրը փախուստի վրա է մտածում (Ն. տ., էջ 358): Ամենքը իրանց կյանքը փրկելու վրա էին մտածում (Ն. տ., էջ 330): Դարձյալ սկսավ Գոռի վրա մտածել (Ն. տ., էջ 326): Իսկ երբ մարդը չէ մտածում ապօրինության վրա, ապօրինի գործ էլ չէ կատարում երբեք (Ն. տ., էջ 306): Եվ խորհում էր քաժանման կամ փախուստի վրա (Ն. տ., էջ 190):

Վրա կապով խնդրառության հանդիպում ենք, իհարկե, ոչ հաճախադեպ նաև մեր օրերի գեղարվեստական գրականության լեզվում. օրինակ՝ — Այո, Ավգուստին, արժե, որ այդ օրինակի վրա մենք մի քիչ խորհենք (ԱԿ, Օտ., էջ 405): Եվ ինչեր էր խորհում քամիների անհոգ անցուղարձի վրա (ՀՍ, ԵԺ, 2, էջ 233): Նա մի պահ կանգ առավ, մտածեց իր ասելիքի վրա (ԳՍԹ, 1, էջ 441): Կարդացի և մտածեցի այն կետի վրա, ուր նա խոսում է ձախ հավասարեցման մասին (ՆԶՀ, էջ 376): Ադիբն էլ չմտածեց առածի վրա (ԳՍԹ, 1, էջ 172): Սրանք շեղում են գրական լեզվի նորմաներից: Մասին կապի իմաստով երբեմն հանդես են գալիս վերաբերմամբ, վերաբերյալ (վերաբերության) և տեղի նշանակություն արտահայտող շուրջ կապերը, որոնք որոշ դեպքերում համանիշ են մասին կապին. օրինակ՝ Իմպերիալիստական շրջանները մյուս

⁴¹ Դառնել բայի այդ խնդրառությունը բնորոշ չէ նրա բոլոր իմաստներին, այն հատուկ է միայն դատողություն անել, կշռադատել, մտածել նշանակություններին, իսկ, չիրեն իրավաբանական տերմին, դատապարտել, պատժի ենթարկել, դատը վարել, գործը քննել, վճիռ ընդունել և այլ իմաստներով չի կարող մասին կապով ձևավորված խնդիր ստանալ:

պետությունների և ժողովուրդների վերաբերմամբ մտածում են տիրապետության և հարկադրանքի կատեգորիաներով (ՍՀ, 24, 2. 1981), Ուստի չի կարելի լրջորեն շմտածել որքան ձեռք բերած հաջողության, առավել ևս այն հարցերի շուրջ, որ պատասխան են պահանջում (ՊՍ, 5, էջ 121): Իսկ ինքը լրջորեն չէր մտածել այդ հարցի շուրջ (Ա. Սեկ., ՈՎՄ, 71): Կանգնեց, երևի ուզում էր առանձին-առանձին ըմբռնել այդ ամենը, խորհել դրանց իմաստի շուրջ, պարզություն մտցնել (Գ, 1978, 11, էջ 24):

Այս կառույցները ոճական տարբերություն են հանդես բերում մասին կապով ձևավորված խնդիրների նկատմամբ, որն արտահայտվում է նրանում, որ նրանց միջոցով վերաբերության հարաբերությունը ավելի ընդհանուր ձևով է դրսևորվում, քան մասին կապով ձևավորված խնդիրների դեպքում: Մտածել հարցի մասին և մտածել հարցի շուրջ կապակցություններից առաջինում մտածելության օբյեկտը ավելի կոնկրետ է, ավելի որոշակի է այն հարցը, որի մասին պետք է մտածել, իսկ մյուս կապակցության մեջ մտածության առարկան ավելի անորոշ է ու ընդհանուր: Այդ հանգամանքը մեծ մասամբ պայմանավորված է շուրջ և մասին կապերի իմաստով: Առաջինը դեռևս լիովին չի կորցրել իր նյութական նշանակությունը և միայն վերաբերական իմաստ չի արտահայտում, այն որոշ չափով պահպանում է նաև գոյականի խոսքի մասային իմաստը՝ չորս կողմ, շուրջ բոլոր և այլն, իսկ մասին-ը վերջնականապես զրկվել է մասն գոյականի իմաստից և վերածվել վերաբերական հարաբերություն արտահայտող բառի, հետևաբար և վերաբերմունքային նշանակությունը խիստ կոնկրետ է ու որոշակի:

Նկատենք նաև, որ միշտ չէ, որ հնարավոր է մասին կապով խնդիրը փոխակերպել շուրջ, վերաբերյալ և այլ կապերով ձևավորված խնդիրներով: Այսպես՝ մտածել հարցի մասին կապակցությունը կարելի է փոխակերպել մտածել հարցի շուրջ (վերաբերյալ), իսկ լսել սիրահարության մասին չի կարելի փոխարինել լսել սիրահարության շուրջ (վերաբերյալ) կապակցությամբ: Այստեղից կարելի է եզրակացնել, որ մասին, շուրջ, վերաբերյալ, վերաբերմամբ կապերը համանիշ չեն ընդհանրապես, նրանք համանիշություն են հանդես բերում մասնակիորեն, ոչ բոլոր դեպքերում:

Հարկ է նշել, որ մտածել, խորհել, մտորել, միտք անել և այլ բայերի վերաբերության խնդիրը երբեմն ձևավորվում է ոչ թե գոյականի սեռական հոլովի ու մասին կապի զուգորդմամբ, այլ ցուցական այս, այն, այդ դերանունների ուղիղ ձևի ու մասին կապի կապակցությամբ: Օրինակ՝ Այս մասին հավանաբար հարկավոր է մտածել (ՍՀ, 24.2.1981): Այդ մասին հավանաբար մտածում էին նաև իմ օգալունները (Գ, 1979, 1, էջ 33): Բոլոր կոմիսարները տանջալից կերպով մտածում էին այն

մասին, թե ինչպես ազատվեն բանտից (Գ, 1978, 11, էջ 7): Գործածական են նաև խորհել (մտորել, միտք անել) այս (այդ, այն) մասին ձևերը, ուր վերաբերության խնդիրը ձևավորվել է այս, այդ, այն ցուցական դերանուններով և մասին կապով:

Իբրև կապվող բառ, բացի նշվածներից, կարող են հանդես գալ հոլովվող բոլոր դերանունների սեռական հոլովաձևերը ևս. օրինակ՝ Խնչ կմտածի իմ մասին (ՊՁ, ԱԵ, էջ 146): — Դու երբեք այդպես չես մտածել քո մասին (Ն. տ., էջ 116): Եվ ինչ կմտածի իր մասին, եթե իմանա, որ բացել է իր ճամպորկը (Գ, 1978, 8, էջ 62): Ու միշտ մի բան եմ բոլորանվեր խորհում քո մասին, իմ անգին մանկիկ (ՀՇ, ՔՀ, էջ 220): ... Եթե վաղօրոք նրա մասին շխորհվի (Բ, ԵԺ, 7, էջ 138): Իսկ ես ոչ ոքի մասին չեի մտածում (Գ, 1978, 8, էջ 73): Իսկ ու՞մ մասին եք դուք ավելի լավ մտածում (Գ, 1979, 12, էջ 5): Գործածական են նաև մտածել (խորհել, մտորել, միտք անել) բոլորի (սրա, դրա, մյուսի, ուրիշի, այստեղի, այդտեղի, ամենքի, ոչ մեկի, ոչնչի, ամեն ինչի) մասին և այլ կապակցություններ, ուր, իբրև կապվող բառ, հանդես են եկել հոլովվող դերանունները:

Իբրև կապվող բառ կիրառվում են նաև անորոշ դերբայի սեռական հոլովաձևերը: Օրինակ՝ Հետո կմտածենք մյուս այրերին հասնելու մասին (ՎԱ, ՍԱ, էջ 205): Իսկ այն օրերին Գիգին լուրջ մտածում էր բնակարանը փոխելու մասին (Գ, 1978, 11, էջ 38): Իսկ Գիքորն սկսեց մտածել փախչելու մասին (ՀԹ, 1, էջ 318): Մեր թատրոնի ղեկավարությունը լրջորեն պիտի մտածի նաև լույս աշխարհ դուրս գալու, հյուրախաղերի մեկնելու մասին (ՍԱ, 1979, 11, էջ 11):

Կապվող բառի դերով կարող են կիրառվել նաև գոյականաբար հանդես եկող ածականների և թվականների սեռական հոլովաձևերը. օրինակ՝ մտածել (խորհել, մտորել, միտք անել) առաջավորների (շարքայինների, սպիտակների, սևերի, հարյուրի, հազարի) մասին և այլն: Նկատենք, որ նման կիրառությունները անհամեմատ սահմանափակ են գրական հայերենում, ինչպես որ տարածված չեն այդ խոսքի մասերի գոյականաբար գործածությունները:

Մտածել, երբեմն էլ խորհել բայերի խնդրի ձևավորմանը առանձին դեպքերում մասնակցում է նաև համար կապը, որը կապվող բառի հետ հանգման խնդրի պաշտոն է կատարում՝ այս կամ այն չափով համատեղելով նաև նպատակայնության ու վերաբերության հարաբերություն: Այսպես՝ Մի հավատար, թե Ամրամ սեպուհը կարող է հայրենիքի համար մտածել (Մուր., ԵԺ, 3, էջ 164): — Ես մինչև այժմ հավատարիմների ապահովության համար էի մտածում (Ն. տ., էջ 196): Կարող էր միայն իր համար մտածել (ՍԳ, 1979, 1, էջ 70): Բերված օրինակներում, ան-

շուշտ, գերիշխում է հանգման հարաբերությունը, սակայն թույլ կերպով դրսևորվում է նաև նպատակայնության ու վերաբերության նշանակություն:

Հաղվադեպ համար կապով ձևավորվում է նաև վերաբերության խնդիրը. օրինակ՝ եւ Պետին ավելի էր մտածում «փորձանքի» համար (ԱՔ, Երկ., էջ 33): Աշխարհը շարժե անքանին, որ մարդ նրա համար մտածե (Բ, ԵԺ, 7, էջ 206): Նրանց ապրուստի համար ոչ ոք չմտածեց (ՍԽ, ՄՍ, էջ 252):

Բերված կառույցները առավել բնորոշ են խոսակցական լեզվին, որտեղից և թափանցում են գրական լեզվի մեջ՝ աստիճանաբար դառնալով սովորական:

3. ՄՏԱԾԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ ԽՆԴԻՐ ԵՎ ՊԱՐԱԳԱ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

Մտածական բայերի ճնշող մեծամասնությունը, ինչպես արդեն նշվել է, ներգործական սեռի է և սեռի թեւադրմամբ պահանջում է կրող խնդիր: Բացի դրանից, ըստ իմաստի դրանք կարող են ստանալ այլ կարգի լրացումներ ևս, որով և առաջ է գալիս կրկնակի և նույնիսկ բազմակի խնդրառություն: Այդ երևույթի մի շարք դրսևորումներ քննարկվել են նախորդ բաժնում, հատկապես ըստ խնդիրների ձևավորման բայերի դասակարգման մեջ: Սակայն այդ վերջին դեպքում խնդրառություն տերմինը կիրառվել է նեղ իմաստով՝ տարածվելով միայն խնդիր (ոչ պարագա) լրացումների վրա, այնինչ, ինչպես մատնացույց է արվել, խնդրառություն-ը տարածվում է նաև պարագաառության վրա, այսինքն՝ տերմինն օգտագործվում է լայն առումով: Այդ նկատառումով էլ այստեղ քննարկում ենք մտածական բայերի խնդիր և պարագա լրացումները միասին, իբրև մի ամբողջական ու անբաժանելի հարց: Դրանով ավելի հստակ ու որոշակի կեներկայացվի մտածական բայերի խնդիր և պարագա լրացումների պատկերը: Այս ամենից հետևում է, որ մտածական բայերի խնդիր և պարագա լրացումների այս բաժնում քննության ենթարկելը լիովին արդարացիվում է ու հիմնավորվում: Մանավանդ որ ոչ քիչ դեպքերում միևնույն լրացման մեջ համատեղվում են խնդրային և պարագայական նշանակություններ:

Մտածական բայերի մեծ մասը կարող է առնել մեկից ավելի լրացումներ՝ արտահայտված կամ տարբեր հոլովաձևերով, կամ էլ հոլովի ու կապի զուգորդմամբ, և այդ դեպքում տվյալ բայը հանդես է գալիս մեկից ավելի արժույթներով: Արժույթը, ըստ Գ. Զահուկյանի, կառավարության (խնդրառության) գաղափարի հետագա ընդարձակումն է: Արժույթ հասկացության տակ նա ըմբռնում է բայի կապակցելիությունը

ենթակայի, խնդիրների և պարագաների հետ: «Արժույթը ոչ այլ ինչ է, եթե ոչ կառավարության (խնդրառության) հետագա ընդարձակումը: Արժույթ տերմինը առաջին անգամ օգտագործել է Լ. Տենիերը՝ այդ անվան տակ հասկանալով բայի կապակցելիությունը ենթակայի և խնդիրների հետ: Ավելի լայն առումով արժույթը բայի կապակցելիությունն է ենթակայի, խնդիրների և պարագաների հետ: Կարելի է ասել, որ արժույթը որոշում է բայի էությունը՝ որպես զանազան կարգի առարկայական հարաբերությունների լեզվական արտահայտություն»⁴²:

Ըստ կապակցության միավորների քանակի մտածական բայերը լինում են միարժույթ, երկարժույթ, եռարժույթ, քառարժույթ և այլն:

Մտածական բայերի մեծ մասը միաժամանակ կարող է ստանալ թե՛ խնդիր, թե՛ պարագա լրացումներ: Ընդ որում, եթե պարագաները արտահայտվում են մակբայներով (նաև ածականներով), հոլովաձևերով, կապով ու կապվող բառով, ապա խնդիրները ձևավորվում են կա՛մ հոլովաձևերով, կա՛մ էլ հոլովաձևի ու կապի զուգորդմամբ⁴³, Մակբայներն ու ածականները որևէ դեր չեն կատարում խնդիր լրացումների ձևավորման մեջ:

Մեկից ավելի արժույթով հանդես գալը պայմանավորված է ոչ միայն մտածական բայերի իմաստով, սեռով կամ այլ հատկանիշով, այլև հաղորդման նպատակով, ինֆորմացիայի բնույթով և լեզվական ու արտալեզվական այլևայլ գործոններով:

Իմանալ բայը ըստ սեռի պահանջում է կրող խնդիր (իմանալ տեղեկություն), ըստ իմաստի՝ այլ բնույթի խնդիրներ (իմանալ տեղեկություն հիվանդի մասին, բժշկից իմանալ տեղեկություն հիվանդի մասին և այլն): Այս վերջին կառույցում իմանալ-ը հանդես է եկել երեք արժույթով՝ պահանջելով երեք լրացումներ՝ բժշկից, տեղեկություն և հիվանդի մասին, ուր բացառականով դրվածը անջատման, հայցականով կիրառվածը՝ կրող, իսկ մասին կապով ձևավորվածը՝ վերաբերության խնդիր է: Մավալելով այս կառույցը՝ կարելի է ստանալ՝ հեռախոսով բժշկից իմանալ տեղեկություն հիվանդի մասին, ուր բայի թելադրմամբ գործածվել են չորս լրացումներ, եղածի վրա ավելացել է միջոցի խընդիրը՝ արտահայտված գործիական հոլովաձևով: Ընդարձակելով կառույցը՝ կստանանք ավելի ծավալուն կապակցություն՝ անընդհատ հեռախոսով բժշկից տեղեկություն իմանալ հիվանդի մասին, ուր եղածի վրա ավելացել է ձևի պարագան՝ արտահայտված ընդհանրական մակբայով: Ձևի պարագան կարելի է փոխարինել ժամանակի, տեղի, չափի և այլ

42 Գ. Բ. Զանույան, Նշված աշխ., էջ 466:

43 Նկատի չունենք այն դեպքերը, երբ խնդիրները, նաև պարագաները արտահայտվում են զանազան կարգի ու բնույթի բառակապակցություններով:

պարագաներով (կեսօրին հեռախոսով տեղեկություն իմանալ հիվանդի մասին, առանձնասենյակից հեռախոսով տեղեկություն իմանալ հիվանդի մասին և այլն): Այդ դեպքում բայի հետ տարբեր բնույթի միավորների քանակը չի փոխվում, և բայը հանդես է գալիս այնքան արժույթով, որքան նախորդ կապակցության մեջ: Սակայն կարելի է ոչ թե պարագաների բնույթը փոխել, այլ ավելացնել նոր լրացումներ՝ պարագաներ (կեսօրին առանձնասենյակից հեռախոսով անընդհատ տեղեկություն իմանալ հիվանդի մասին): Այս դեպքում միավորների քանակը փոխվում է, և բայը հանդես է գալիս ավելի արժույթով: Իհարկե, կառույցի ծավալումը անսահման չէ, այն չի կարելի անսահման մեծացնել ու ընդարձակել՝ ծանրաբեռնելով նորանոր լրացումներով: Կառույցն ունի որոշակի սահմաններ, որոնց շրջանակներում միայն կարող է ծավալվել: Մավալման, ընդարձակման հնարավորությունները բոլոր դեպքերում սահմանափակ են, և դա ինքնըստինքյան հասկանալի է: Այդ են պահանջում խոսքի ճշգրտությունն ու հստակությունը: Խոսքի այդ պահանջները անտեսելու դեպքում կառույցը կիճողվի բազմաթիվ լրացումներով, կդադարի հասկանալիությունից, և ինֆորմացիան չի ծառայի իր նպատակին, կզրկվի իր ներգործությունից ու մատչելիությունից:

Պետք է նշել, որ բայերի կապակցելիությունը տեսականորեն ավելի շատ միավորների է ենթադրում, քան իրացվում է բուն խոսքի մեջ: Այսինքն՝ հնարավոր բոլոր կապակցությունները խոսքի մեջ միաժամանակ չեն կիրառվում: Այստեղ դեր են խաղում խոսքին ներկայացվող վերը նշված պահանջները՝ հստակությունը, որոշակիությունը, մատչելիությունը, որոնք և արգելք են հանդիսանում կառույցի ավելորդ ծանրաբեռնվածությանը: Իմացություն ցույց տվող ճանաչել բայի լրացումները ևս կարող են թե՛ խնդիր և թե՛ պարագա լինել, իհարկե, ստանալով համապատասխան արտահայտություն ու ձևավորում: Այսպես՝ իսկույն ճանաչել ընկերոջը՝ կապակցության մեջ բայը հանդես է եկել երկու արժույթով՝ ստանալով մեկական խնդիր ու պարագա լրացումներ: Ընդ որում, կրող խնդիրը հանդես է եկել բայի սեռի, իսկ պարագան՝ իմաստի թելադրմամբ ու պահանջով: Ընդարձակելով կապակցությունը՝ կստանանք՝ ձայնից իսկույն ճանաչել ընկերոջը, ուր ճանաչել բայը կիրառվել է երեք արժույթով՝ ստանալով երեք լրացում, կրող խնդիր՝ արտահայտված հայցականով և ձևի ու հիմունքի պարագաներ՝ դրսևորված մակբայով (իսկույն) և բացառական հոլովաձևով (ձայնից):

Նշված բայը թեև չի կարող կրող խնդրից բացի ուրիշ բնույթի խնդիր-լրացումներ ստանալ, սակայն ազատ կերպով ունակ է զանազան բնույթի պարագաներ ստանալու: Ընդ որում, վերջիններս կարող են ձևավորվել ինչպես մակբայներով, այնպես էլ հոլովաձևերով, այլև կապի ու հոլո-

վածակի ղուգորդամբ (երբեմն ճանաչել ընկերոջը, առավոտվանից ճանաչել ընկերոջը (բժշկին), հինգ մատեների պես ճանաչել ընկերոջը, երեսնայի պես ճանաչել ծիածանի գույները): Նշված բայի համար (ճանաչել) լրացումների քանակը որոշ սահմանափակություն ունի. հնարավոր չէ նույն կապակցության մեջ այդ բայը ծանրաբեռնել տարբեր բնույթի վեցից ավելի լրացումներով: Օրինակ՝ առավոտյան բանտում ձայնից իսկույն ճանաչել ֆենիչին: Այստեղ բայը հանդես է եկել հինգ արժույթով՝ ստանալով շորս պարագա և մեկ խնդիր լրացումներ՝ արտահայտված մակբայներով (առավոտյան, իսկույն) և հոլովածներով (ձայնից, բանտում, քննիչին):

Թեև տեսականորեն (երբեմն նաև գործնականորեն) հնարավոր է մեկ (կամ էլ ավելի) միավորներով ավելացնել ճանաչել բայի կապակցության անդամների քանակը, սակայն խոսքի մեջ այն չի կարող իրացվել, քանի որ խոսքի նշանակության ըմբռնման վտանգ կստեղծվի:

Մտածել բայը, ինչպես մատնացույց է արվել, սեռի պահանջով ստանում է կրող խնդիր, նշանակությամբ՝ վերաբերության (մտածել միջոցներ թշնամուն ջախջախելու մասին): Մավալելով կապակցությունը՝ կարելի է ստանալ՝ լեզվով միջոցներ մտածել թշնամուն ջախջախելու մասին: Մտածել բայը այս դեպքում հանդես է գալիս երեք արժույթով՝ ստանալով տարբեր խնդիրներ՝ միջոցի արտահայտված գործիականով, կրող՝ արտահայտված հայցականով և վերաբերության՝ ձևավորված մասին կապով: Բացի խնդիր լրացումներից, մտածել-ը կարող է առնել նաև տարբեր բնույթի պարագաներ. օրինակ՝ գիշերը վրանում անընդհատ միջոցներ էր մտածում թշնամուն ջախջախելու մասին: Այս դեպքում բայն ստացել է հինգ լրացումներ. երկուսը՝ խնդրային, երեքը՝ պարագայական: Վերաբերության խնդիրը բերված կապակցության մեջ կարելի է փոխարինել նպատակի պարագայով: Այսպես՝ վրանում գիշերը անընդհատ միջոցներ մտածել թշնամուն ջախջախելու համար: Համար կապով ձևավորված անդամը նպատակի պարագա է, որը փոխարինել է մասին կապով ձևավորված վերաբերության խնդրին: Մտածել բայի հետ կապակցվող պարագաները կարող են լինել ժամանակի, տեղի ու շափի, կամ ժամանակի, տեղի ու ձևի, վերջապես՝ կարող են լինել տեղի, ժամանակի, շափի ու ձևի և այլն: Օրինակ՝ գիշերը հիվանդանոցում մեկ ժամի շափ միջոցներ մտածել հիվանդի կյանքը փրկելու մասին, երբեմն ցերեկը հիմնարկում մի ժամի շափ միջոցներ մտածել հիվանդի կյանքը փրկելու մասին, առանձնապես կյանքը գիշերը մեկ ժամի շափ անընդհատ միջոցներ մտածել հիվանդի կյանքը փրկելու մասին: Նկատենք, որ պարագաների շարադասությունն այնքան էլ կայուն չէ: Նրանք կարող են

փոխել իրենց տեղերը՝ նայած կապակցության տրամաբանական շեշտին, հաղորդման նպատակադրմանը և այլն:

Մտածել բայի նման տարրեր բնույթի պարագաներ և խնդիրներ ստանալը բնորոշ է նաև խորհել-ին. օրինակ՝ Երբեմն ցերեկը մեկ ժամի չափ հիվանդանոցում միջոցներ խորհել զինվորի կյանքը փրկելու մասին: Հարկ է նշել, որ այդ կապակցության մեջ կարելի է ավելացնել ձևի պարագա. այսպես՝ երբեմն ցերեկը մեկ ժամի չափ հիվանդանոցում հանգիստ խորհել միջոցներ զինվորի կյանքը փրկելու մասին: Այս դեպքում խորհել բայը ստանում է վեց լրացումներ, որոնցից չորսը՝ պարագայական, երկուսը՝ խնդրային:

Մտածել, խորհել բայերին բնորոշ խնդրատեսիլուն են ցուցաբերում նաև միտք անել, մտորել, մտմտալ, դատել և այլ բայեր, միայն այն տարբերությամբ, որ միտք անել-ը և դատել-ը, իբրև չեզոք սեռի բայեր, չեն կարող կրող խնդիր ստանալ: Պարագաների քանակն ու վերաբերության խնդիրը բոլորի մոտ էլ նույնն է: Այսպես՝ Գիշերը հիմնարկում մեկ ժամի չափ հանգիստ միջոցներ մտորել ծանր հիվանդներին փրկելու մասին, գիշերը հիմնարկում մեկ ժամի չափ հանգիստ միջոցներ մըտմտալ ծանր հիվանդներին փրկելու մասին, ննջասենյակում ֆենուց առաջ հանախ մեկ ժամի չափ հանգիստ միտք անել (դատել) ծանր հիվանդներին փրկելու մասին: Բերված բոլոր կապակցություններում բայերի կապակցելիությունը տարածվել է թե՛ խնդիր, թե՛ պարագա լրացումների վրա և առկա է բազմակի խնդրատեսիլուն:

Բազմակի խնդրատեսիլուն են ցուցաբերում նաև հասկանալու, ըմբռնելու իմաստ արտահայտող հասկանալ, գիտակցել, կոսնել, գուշակել, գլխի բնկնել, ըմբռնել, կշռադատել, պատկերացնել և այլ բայեր, որոնք, իբրև ներգործական սեռի բայեր, պահանջում են կրող խնդիր:

Ընդ որում, կրող խնդրի գործառնությունը մեծ մասամբ կիրառվում են իր ցույց տվող բառերը, բացատրություն են կազմում հասկանալ և պատկերացնել բայերի լրացումները, որոնք կարող են ցույց տալ թե՛ անձ, թե՛ իր. իր մատնանշողները քանակապես գերիշխում են անձի իմաստ ունեցողներին: Այսպես՝ գիտակցել սխալը, կոսնել միտքը, գուշակել ապագան, ըմբռնել իրողությունը, կշռադատել հանգամանքները, պատկերացնել աշխարհը (մեկին), հասկանալ ընկերոջը (պատճառները) և այլն: Նշված բայերից մի քանիսը կարող են ստանալ նաև այլ բնույթի (ոչ կրող) խնդիրներ. օրինակ՝ մտքով պատկերացնել ապագա աշխարհը, փաստերով հասկանալ իրողությունը և այլն, ուր գործիական հոլովով կիրառված լրացումները միջոցի խնդրի հարաբերություն են դրսևորում, առկային այդ իմաստի հետ որոշ չափով համատեղվում է նաև պարա-

գայական նշանակություն՝ ձևի հարաբերություն (պատկերացնել (հասկանալ) ինչպե՞ս):

Հասկանալու, կռահելու իմաստ ունեցող բայերին առավել բնորոշ է պարագաառությունը: Այդ բայերը կարող են ստանալ տարբեր բնույթի պարագա լրացումներ՝ արտահայտված հոլովաձևերով, մակբայներով, ածականներով, հոլովի ու կապի զուգորդությամբ և այլն. օրինակ՝ ծայնից կռահել (գուշակել, գլխի ընկնել), վերաբերմունքից հասկանալ (գլխի ընկնել, կռահել, գուշակել, պատկերացնել), անմիջապես հասկանալ (գլխի ընկնել, կռահել, գուշակել, ըմբռնել, պատկերացնել, գիտակցել), ճիշտ հասկանալ (ըմբռնել, կռահել, գուշակել, պատկերացնել), առանց դժվարության հասկանալ (ըմբռնել, գուշակել, գլխի ընկնել), հոր պես հասկանալ (ըմբռնել, կռահել, գուշակել, գլխի ընկնել, գիտակցել), շուտ հասկանալ (կռահել, գուշակել, ըմբռնել, գլխի ընկնել, պատկերացնել, գիտակցել), բանակում հասկանալ (կռահել, գուշակել, գլխի ընկնել, պատկերացնել, գիտակցել, ըմբռնել), երբեմն հասկանալ (գլխի ընկնել, գուշակել, կռահել, ըմբռնել) և այլն:

Ինչպես տեսնում ենք, մատնացույց արված բայերի պարագա լրացումները տարբեր կապակցությունների մեջ տարբեր բնույթի են և ունեն տարբեր դրսևորումներ: Միևնույն կապակցության մեջ ևս հասկանալու, ըմբռնելու իմաստ արտահայտող յուրաքանչյուր բայ կարող է ստանալ մեկից ավելի պարագա լրացումներ՝ ձևավորված լեզվական տարբեր միջոցներով: Այսպես՝ իսկույն կռահել, ճիշտ գուշակել, անմիջապես հասկանալ կապակցությունները ծավալելով կստանանք՝ խոսակցությունից իսկույն կռահել, ելույթներից ճիշտ գուշակել, հարցաքննությունից անմիջապես հասկանալ և այլն, ուր բայերը հանդես են եկել երկու արժույթով՝ ստանալով տարբեր բնույթի երկու պարագա լրացումներ, եղածի վրա ավելացել է հիմունքի պարագան՝ արտահայտված բացառական հոլովով:

Շարունակելով կապակցության ծավալումը՝ կարելի է մեկ միավորով ավելացնել պարագաների քանակը, այդ դեպքում բայերը հանդես կգան երեք արժույթով՝ կապակցվելով տարբեր բնույթի երեք պարագա լրացումների հետ. օրինակ՝ փողոցում խոսակցությունից իսկույն կռահել, ժողովում ելույթներից ճիշտ գուշակել, դատարանում հարցաքննությունից անմիջապես հասկանալ: Բերված կապակցություններում եղածների վրա ավելացել է տեղի պարագան՝ արտահայտված ներգոյական հոլովով: Կարելի է փոխել լրացումների բնույթը, նրանց քանակը թողնելով անփոփոխ. օրինակ՝ երեկոյան խոսակցությունից իսկույն կռահել, երբեմն ելույթներից ճիշտ գուշակել, առավոտյան հարցաքննությունից անմիջապես հասկանալ: Այստեղ տեղի պարագաները փոխարինվել են

ժամանակի պարագաներով: Կարելի է նորից ընդարձակել կապակցու-
 թյունը՝ ավելացնելով լրացումների քանակը. օրինակ՝ երեկ փողոցում
 խոսակցությունից խսկույն կռահել, այսօր ժողովում ելույթներից ճիշտ
 գուշակել, առավոտյան դատարանում հարցաքննությունից անմիջապես
 հասկանալ և այլն: Եղածի վրա ավելացել է ժամանակի պարագան:
 Բերված կապակցությունները այլևս հնարավոր չէ ծավալել՝ ավելացնե-
 լով պարագա լրացումներ: Հնարավոր է միայն եղածի վրա ավելացնել
 խնդիր լրացումներ, այն էլ սահմանափակ քանակով. օրինակ՝ երեկ փո-
 ղոցում խոսակցությունից խսկույն կռահել մտադրությունը, այսօր ժո-
 ղովում ելույթներից ճիշտ գուշակել քարտուղարի միտքը, առավոտյան
 դատարանում հարցաքննությունից անմիջապես հասկանալ հանցանքի
 ծանրությունը: Այս կապակցություններում բայերը հանդես են եկել հինգ
 արժույթով՝ ստանալով չորս պարագա և մեկ խնդիր լրացումներ: Կարե-
 լի է կապակցությունը ծանրաբեռնել նաև վերաբերության խնդիր-լրա-
 ցումներով: Այդ դեպքում պարագա լրացումներից մեկնումսկը կարող
 է դուրս թողնվել, իսկ երբեմն էլ մնալ իր տեղում՝ նայած կապակցու-
 թյան իմաստային ծանրաբեռնվածությանը, հաղորդման հասկանալիու-
 թյանն ու մատչելիությանը: Այսպես՝ երեկ դարածում շարժիչի աշխա-
 տանքից ճշտորեն շատ բան հասկանալ մեքենայի անսարքությունից,
 բանակցությունների ընթացքում առաջարկություններից ճշտորեն շատ
 բան հասկանալ դեպքերի դարգացման ընթացքից: Եղածի վրա ավե-
 լրացել է վերաբերության խնդիրը՝ ձևավորված բացառական հոլովով: Հե-
 տաբրբրություն են ներկայացնում հիշողություն ցույց տվող հիշել, վեր-
 հիշել, մտապահել, մտահաւ անել, մտապատկերել, մտաբերել, վերաբ-
 րադրել, մոռանալ և այլն բայերի լրացումները: Հիշատակված բայերը
 ևս կարող են ստանալ թե՛ խնդիր, թե՛ պարագա լրացումներ, որոնք
 բնույթով տարբեր են և հանդես են գալիս տարբեր դրսևորումներով: Որ-
 պես ներգործական սեռի բայեր նրանք պահանջում են կրող խնդիր, իսկ
 ըստ իմաստի կարող են ստանալ տարբեր բնույթի պարագաներ, երբեմն
 էլ վերաբերության կամ այլ բնույթի խնդիրներ: Այսպես՝ հիշել անցած
 օրերը, վերհիշել դեպքերը, մտապահել. քրոջ պատկերը, մտապատկերել
 դերասանուհու գեղեցկությունը, մտաբերել անցյալը, վերաբրադրել սո-
 վորածը, մոռանալ ցավը և այլն: Բերված կապակցություններում բայերը
 ստացել են կրող խնդիր լրացումներ: Հարկ է նկատել, որ մտապահել,
 վերաբրադրել և այլ բայերի խնդիր լրացման դերով հիմնականում կի-
 րառվում են իր ցույց տվող բառեր, հիշել, վերհիշել, մտաբերել և այլ
 բայեր կարող են ստանալ թե՛ իր, թե՛ անձ ցույց տվող լրացումներ,
 իսկ միայն անձ ցույց տվող լրացում պահանջող բայեր չկան:

Վերևում հիշատակված կապակցությունները կարելի է ընդարձակել՝ ստանալով ավելի ծավալուն կապակցություններ, ուր բացի խնդիր լրացումներից, հանդես կգան նաև պարագա լրացումներ: Այսպես՝ իսկույն հիշել անցած օրերը, անմիջապես վերհիշել կատարված դեպքերը, ճիշտ մտապահել նյութոսնի օրենքը, հեշտությամբ մտաբերել անցյալը, դժվարությամբ վերարտադրել սովորածը, իսկույն մոռանալ ցավը և այլն: Կարելի է ավելի ծավալել այդ կապակցությունները՝ ավելացնելով պարագա լրացումների քանակը: Այսպես՝ Երևանում իսկույն հիշել անցած օրերը, ճանապարհին անմիջապես վերհիշել կատարված դեպքերը, տանը հեշտությամբ մտաբերել անցյալը, լսարանում դժվարությամբ վերարտադրել սովորածը, հիվանդանոցում իսկույն մոռանալ ցավը և այլն: Այստեղ բայերն ստացել են երեք լրացումներ, մեկը՝ խնդրային, մյուսները՝ պարագայական: Եղածի վրա ավելացել են տեղի պարագաները՝ ձևավորված գոյականի հոլովաձևերով (ներգոյական, տրական): Ծավալելով կապակցությունները՝ կատանանք բայերի քառարժույթ գործածություններ՝ համապատասխան լրացումներով. օրինակ՝ հիվանդանոցում բժիշկների ներկայությունից իսկույն մոռանալ ցավը, դատարանում վկաների ցուցմունքներից անմիջապես վերհիշել կատարված դեպքերը և այլն: Եղածի վրա ավելացել են պատճառի պարագաները՝ արտահայտված բացառական հոլովաձևով (ներկայությունից, ցուցմունքներից):

Կարելի է ավելացնել կապակցության միավորների քանակը ևս մեկ միավորով. ինչպես՝ դատարանում հարցաքննության ժամանակ վկանների ցուցմունքներից անմիջապես վերհիշել կատարված դեպքերը, առավոտյան հիվանդանոցում բժիշկների ներկայությունից իսկույն մոռանալ ցավը: Այստեղ բայերի հետ կապակցվել են հինգ լրացումներ, որոնցից չորսը՝ պարագայական: Եղածի վրա ավելացել են ժամանակի պարագաները՝ արտահայտված բառակապակցությամբ (հարցաքննության ժամանակ) և մակբայով (առավոտյան): Այս կապակցություններում կարելի է ավելացնել նաև չափի պարագա. օրինակ՝ դատարանում հարցաքննության ժամանակ մի քանի անգամ վկանների ցուցմունքներից անմիջապես վերհիշել կատարված դեպքերը, առավոտյան հիվանդանոցում բժիշկների ներկայությունից մի քանի անգամ լիովին մոռանալ ցավը և այլն: Սրանից ավել գրեթե անհնար է կապակցության ծավալումը: Արդեն վտանգ է ստեղծվում կապակցության իմաստը ըմբռնելու մեջ: Նկատենք նաև, որ պարագաների շարադասությունը նման կապակցություններում բավական ազատ է, և հեշտությամբ դրանք կարող են իրենց տեղերը փոխել: Մեծ մասամբ ժամանակի ու չափի պարագաները նախորդում են պարագաների մյուս տեսակներին, սակայն այդ շարադասությունը

կարող է փոխվել՝ առանց գրական նորմաների դեմ մեղանշման: Այսպես՝ գիշերը մի քանի անգամ անտառում հանկարծ մտաբերել պատերազմի արհամիրքները, անտառում գիշերը մի քանի անգամ հանկարծ մտաբերել պատերազմի արհամիրքները, հանկարծ գիշերը անտառում մի քանի անգամ մտաբերել պատերազմի արհամիրքները, մի քանի անգամ գիշերը անտառում հանկարծ մտաբերել պատերազմի արհամիրքները և այլն: Ինչպես տեսնում ենք, պարագաների նման շարադասությունները խորթ չեն գրական լեզվին:

Երբեմն վերոհիշյալ կապակցություններից մի քանիսի մեջ հանդես է գալիս վերաբերության խնդիրը: Այդ դեպքում մի տեսակ ավելորդ է դառնում կրող խնդրի կիրառությունը, և վերջինս փոխարինվում է վերաբերության խնդրով. օրինակ՝ ... հիշել տեղի ունեցած դեպքը, հիշել տեղի ունեցած դեպքի մասին, ... վերհիշել աշխատանքից ազատվելը, վերհիշել աշխատանքից ազատվելու մասին, մոռանալ անցյալը, ... մոռանալ անցյալի մասին և այլն:

Հիշողության բայերին բնորոշ խնդրառություն են ցուցաբերում նաև զգայության բայերը՝ զգալ-ը, զգայել-ը, տեսնել-ը, լսել-ը և այլն, որոնք ըստ սեռի դարձյալ պահանջում են կրող խնդիր, ըստ նշանակության զանազան բնույթի պարագաներ, երբեմն էլ խնդիր լրացումներ. օրինակ՝ զգալ ցավ (վիշտ, ուրախություն, արհամարհանք, սառնություն), տեսնել ընկերոջը (ամուսնուն, լեռնագագաթը, արևամուտը), լսել ձայնը (աղմուկ, երաժշտություն, դուփյուն, կոնյայուն և այլն):

Այս կապակցություններում բայերի սեռի թեւադրանքով գործածվել են կրող խնդիրներ: Դրանք ըստ նշանակության կարող են ստանալ նաև միջոցի խնդիր. օրինակ՝ աչքերով տեսնել, ականջով լսել, զգայարաններով զգայել և այլն: Միևնույն կապակցության մեջ կարող են հանդես գալ կրող և միջոցի խնդիր լրացումներ. օրինակ՝ աչքերով տեսնել արևամուտը, ականջով լսել դերասանի ձայնը: Հարկ է նշել, որ միջոցի խնդրի կիրառությունը նման կապակցություններում ավելորդ է, քանի որ տեսնելը իրականանում է աչքի միջոցով, լսելը՝ ականջի, զգայելը՝ զգայարաններով և այլն: Նկատենք նաև, որ տեսնելը, լսելը կարող են իրացվել նաև մտքով, ոչ տեսողության ու լսողության զգայարաններով: Լսել բայը, բացի կրող և միջոցի խնդիրներից, կարող է ստանալ նաև վերաբերության և անջատման խնդիրներ. օրինակ՝ լսել պարզեկատրման մասին, լսել դիրեկտորից: Այս երկու խնդիրները կարող են կրող խնդրի հետ միասին հանդես գալ միևնույն կապակցության մեջ: Այսպես՝ դիրեկտորից լսել լուրը պարզեկատրման մասին: Ծավալելով այս վերջին կապակցությունը՝ կարելի է ստանալ՝ երեկ փողոցում պատահականորեն դիրեկտորից լսել լուրը պարզեկատրման մասին կառույցը, ուր բայը հան-

դեմ է եկել վեց արժույթով՝ ստանալով վեց լրացումներ, որոնցից երեքը՝ խնդրային, երեքը՝ պարագայական: Նկատենք, որ վերոհիշյալ կապակցության մեջ վերաբերության խնդիրը կարող է կապվել ոչ միայն լսել բայի, այլև լուրը գոյականի հետ (լուր պարգևատրման մասին):

Զգայության բայերը ըստ նշանակության ստանում են զանազան բնույթի պարագաներ՝ ձևավորված լեզվական տարբեր միջոցներով: Այսպես՝ հիվանդ լինելու պատճառով երեկ տանը ծնողների ակնարկից իսկույն չզգալ սխալը, երեկ փողոցում հանկարծ մեկ ժամի չափ ցավ զգալ, երեկոյան դահլիճում երկու ժամի չափ հանգիստ լսել երաժշտություն, այսօր թույլ լուսավորության պատճառով դահլիճում լավ չտեսնել երգչուհու դեմքը: Նշված կապակցությունից առաջինում զգալ բայն ստացել է վեց լրացում, որոնցից հինգը՝ պարագայական, մեկը՝ խնդրային: Մյուսներում կիրառվել են հնգական լրացումներ՝ չորսը՝ պարագայական, մեկը՝ խնդրային: Այս կապակցություններն այլևս հնարավոր չէ ընդարձակել, քանի որ նորանոր լրացումներով խճողելն առաջ կբերի անհասկանալիություն, կապակցության իմաստի ըմբռնման դժվարություն:

Քննությունից պարզ է դառնում, որ մտածական բայերի խնդիր և պարագա լրացումները հասնում են վեցի: Դրանից ավելի բայը ունակ չէ նոր լրացումներ ստանալու: Իսկ որոշ բայերի հետ կապակցվում են հինգից ոչ ավելի լրացումներ, վեցերորդ լրացումով ծանրաբեռնելը անհնարին է դառնում. առաջ է գալիս անհասկանալիության, կապակցության իմաստը ըմբռնելու վտանգ: Ահա թե ինչու լեզուն խոսսափում է լրացումներով շատ ծանրաբեռնված կապակցություններից:

4. ՍՏՈՐԱԿԱՍԱԿԱՆ ՆԱԽԱՎԱՍՈՒԹՅԱՄԲ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ԽՆԴՐԱՌՈՒԹՅՈՒՆ

Մտածական բայերի խնդիրներն ու պարագաները կարող են արտահայտվել նաև երկրորդական նախադասություններով: Այդ դեպքում ստորադասական նախադասությունը հիմնականում գերադաս նախադասության բայ-ստորոգյալի (կրբեմն էլ բայով արտահայտված այլ անդամի) խնդիրը կամ պարագան է լինում, և դրանց բնույթը պայմանավորված է բայի սեռով, իմաստով, նախադասության կառուցվածքով և այլ հանգամանքներով:

Հետաքրքրություն են ներկայացնում գիտակցել, գիտենալ, իմանալ, զգալ, ըմբռնել, մտածել, գուշակել, գլխի բնկնել և այլ բայերի լրացումները՝ արտահայտված ստորադասական նախադասությամբ, որոնք գերադաս նախադասության հետ կապակցվում են որ, քե, եք, որպեսզի, որովհետև, եթե ... ապա և այլ շաղկապներով: Հատկապես տարածված են մտածական բայերի կրող խնդիր երկրորդական նախա-

դասութիւնները, որոնք կատարում են նույն պաշտոնը, ինչ պարզ նախադասութեան կրող խնդիրը՝ արտահայտված բառով կամ բառակապակցութեամբ: Սահմանափակ են մտածական բայերի հանգման, միջոցի և անշատման խնդիրները՝ արտահայտված ստորադասական նախադասութեամբ, ճիշտ այնպես, ինչպես սակավ են այդ բայերի՝ բառով կամ բառակապակցութեամբ արտահայտված հանգման, միջոցի և անշատման խնդիրները:

Մտածական բայերի լրացումները կարող են կիրառվել նաև պարագայի պաշտոնով՝ արտահայտված ստորադաս նախադասութեամբ: Ստորադաս նախադասութեամբ ձևավորված պարագաները իրենց բնութիւնով նույնպես համընկնում են պարզ նախադասութեան պարագաներին՝ արտահայտված բառով կամ բառակապակցութեամբ⁴⁴:

Խնդիրները, ինչպես հայտնի է, գործառու են թե՛ բայիմաստով, թե՛ բայի սեռով: Սեռի պահանջով խնդրառութիւնը բնորոշ է ներգործական և կրավորական բայերին, որոնք ստանում են կրող կամ ներգործող խնդիրներ՝ պայմանավորված տվյալ բայի սեռային հատկանիշով, ընդ որում, ներգործական բայերը պահանջում են կրող, իսկ կրավորականները՝ ներգործող խնդիր (կրավորական կառուցվածքի նախադասութիւններում), բայիմաստով են պայմանավորված միջոցի, հանգման, վերաբերութեան և մյուս խնդիրները: Մտածական բայերը մեծ մասամբ ներգործական սեռի են, ուստի պահանջում են կրող խնդիրներ, իսկ ըստ իմաստի կարող են ստանալ նաև միջոցի, վերաբերութեան, անշատման խնդիրներ՝ արտահայտված ստորադասական նախադասութեամբ: Բայիմաստով է պայմանավորված նաև պարագառութիւնը: Մատնացույց արված բայերը կարող են ստանալ հայերենի բոլոր տեսակի պարագաները՝ արտահայտված ինչպես բառով կամ բառակապակցութեամբ, այնպես էլ երկրորդական նախադասութիւններով:

Կրող խնդիր երկրորդական նախադասութիւնը գլխավոր նախադասութեան ներգործական սեռի բայ-ստորոգյալի կամ բայով արտահայտված այլ անդամի սեռի պահանջով առաջ եկած լրացումն է, որի վրա անմիջապես անցնում է գործողութիւնը:

Կրող խնդիր երկրորդական նախադասութիւնը գլխավորի հետ կապվում է երկու եղանակով՝ ա) շաղկապներով, բ) շարահարութեամբ: Տարածված է շաղկապավոր կապակցութիւնը, իսկ մյուսը քիչ է հանդիպում և մեծ մասամբ առավել բնորոշ է խոսակցական լեզվին: Շաղկապներից կիրառվում են հատկապես առ-ը և քե-ն: Որոշ նախադասութիւններ կապակցվում են առ շաղկապով, որոշ դեպքերում կիրառվում է քե-ն,

⁴⁴ Այստեղ քննութեան են առնվում մտածական բայերի թե՛ խնդիր, թե՛ պարագա լրացումները՝ արտահայտված ստորադասական նախադասութեամբ:

իսկ շատ հաճախ կապակցումը կարող է տեղի ունենալ թե՛ մեկ, թե՛ մյուս շաղկապներով, առանց խտրականության⁴⁵։

Մտածական բայերի՝ կրող խնդիր երկրորդական նախադասությունները մեծ մասամբ վերջադաս են կիրառվում, չեն բացառվում նաև առաջադաս և միջադաս գործածությունները, որոնք հանդիպում են հատկապես, երբ հարկավոր է լինում ընդգծել երկրորդական նախադասությամբ արտահայտված միտքը (այդ դեպքում առաջին պլանի վրա է մղվում ստորադասական նախադասության բովանդակությունը, իսկ գլխավորին երկրորդական, ոչ էական տեղ է հատկացվում) կամ էլ երբ գլխավոր նախադասության մեջ առկա է որևէ հարաբերյալ։

Բերենք վերջադաս կիրառության օրինակներ՝ Բայց ոմանք նաև գլխի ընկան, որ չի կարելի անպատիժ կերպով շարաշահել նրա համբերությունն ու թվացյալ անդորրությունը (ՍԱ, 1979, 11, էջ 39)։ Պարզ գիտակցում էր, որ իրեն այլ կյանք է սպասում (Գ, 1976, 11, էջ 17)։ Ամենքն էլ գիտեին, որ ոչ մի դեպքում մեղավորն արդար չի դուրս գալ (Ն-Դ, 1, էջ 292)։ Զկարողացա իմանալ, թե ինչ ցավ է (ԱԲ, Երկ., էջ 66)։ — Ախր դուք չեք հասկանում, թե ինչ գործ եք կատարել (ՎԱ, ՍԱ, էջ 319)։ Տեսնողը կմտածեր, թե նա պատրաստվում էր մճռականորեն ներս մտնել ու մի խելահեղ բան անել (ՊԶ, ԱԵ, էջ 423)։

Առաջադաս ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունները, ինչպես նշվել է, քիչ են հանդիպում։ Դրանք հատկապես այն դեպքում են կիրառվում, երբ անհրաժեշտություն է զգացվում ընդգծել երկրորդական նախադասության միտքը, այսինքն, երբ հատուկ կարևորություն է ստանում երկրորդական նախադասության մեջ բովանդակված ինֆորմացիան և հատկապես այն ժամանակ՝ ա) երբ երկրորդական նախադասությունը հարցական երանգի է, իսկ գլխավոր նախադասության ստորոգյալի դերում հանդես են գալիս իմանալ, գիտենալ, հասկանալ, գուշակել, կռահել և այլ բայեր. ընդ որում, նման դեպքերում ստորադաս և գլխավոր նախադասության կապակցումը իրացվում է առանց շաղկապի և այդ պատճառով էլ թվում է, թե բարդ նախադասության բաղադրիչները կապված են ոչ թե ստորադասական, այլ համադասական հարաբերությամբ։ Նույնիսկ այդ նախադասությունների միջև եղած դադարը բավական մեծ է լինում և մոտենում է համազոր բաղադրիչներով նախադասությունների միջև իրականում եղած դադարին։ Սակայն մտքի ավարտվածության ու ինքնուրույնության տեսակետից այդ նախադասությունները ստորադասական են, չնայած այն բանին, որ երբեմն դադարը մեծ լինելու պատ-

⁴⁵ Այդ մասին մանրամասն տե՛ս «Ժամանակակից հայոց լեզու», հ. 3, էջ 653—664։

Ճառով դրանք իրարից տրոհվում են վերջակետով. օրինակ՝ ՈւՐ գնաց, ինչի՞ գնաց, շիմացա (ԳՍԹ, 1, էջ 160): — Ինչքա՞ն է կորուստը, իմացա՞ր (ՍԽ, ՄՍ, էջ 144): Դեսպանները հավատացի՞ն՝ դժվար էր գուշակել (ն. տ., էջ 431): Խաները ինքնագլուխ էին արդյոք հարձակվել Հայաստանի վրա, թե՞ Թահմազի հրամանն էր դա: Զգիտեր (ն. տ., էջ 23): Կարելի՞ է արդյոք, լիովին հասկանալ գրող Դիկկենսին — չգիտեմ (Գ, 1979, 12, էջ 2): Թե ինչ էր լինելու չգիտեր: Ու թե ինչ էր անելու, նույնպես չգիտեր (ՎԽ, ԳԼ, 1, էջ 42): Բայց ու՞մ վրա էին գլորում, — իրանք ես չգիտեին (Բ, ԵԺ, 7, էջ 258): բ) Երկրորդական նախադասությունները կարող են առաջադաս կիրառվել նաև այն դեպքում, երբ գլխավոր նախադասությունը համառոտ է՝ արտահայտված կամ միայն ստորոգյալով, կամ էլ ենթակալով և ստորոգյալով և արտահայտում է մի տեսակ եզրահանգում, իբրև ստորադասական նախադասություն արտահայտված մտքի հետևություն. օրինակ՝ Երևանցիները քաջ կռվողներ են, իմացի՞ր (ՍԽ, ՄՍ, էջ 287): Սրտոտ ու քաջ ես, գիտեմ (ն. տ., էջ 438): — Իսկ Մելիք Բարխուդարը մեր ուխտին միաբան է, իմացի՞ր (ն. տ., էջ 60): — Երևի այսօր Մխիթարը կկախի Բարխուդարին, — կռահեց Նաչին (ն. տ., էջ 76): — Մինիստրն էլ մեղ հետ էր, գիտե՞ս (ԳՍԹ, 1, էջ 250):

Միջադաս կրող խնդիր երկրորդական նախադասությունները առաջադասի համեմատությունում առավել սահմանափակ են և «միջադաս կարող են լինել միայն այն դեպքում, երբ լրացնում են դերբայով արտահայտված անդամի և կամ գլխավոր նախադասության մեջ կա հարաբերյալ»⁴⁵: Օրինակ՝ Հասմիկը, շիմանալով, որ Լևոնը դառնալու է Հացավանի կոլխոզի նախագահը, մոտեցավ նրան (ՆՁՀ, էջ 306): Ընդհանուր առմամբ ամենից քիչ են կիրառվում միջադաս կրող խնդիր երկրորդական նախադասությունները: Առաջադաս գործածություն ունեցող խնդիր երկրորդական նախադասությունները միջադասների համեմատությամբ շատ են, թեև չեն անցնում 10—15 տոկոսից: Ամենից տարածվածը վերջադաս գործածության երկրորդական նախադասություններն են, որ կադմում են ամբողջի երեք՝ քառորդից ավելին:

Հարկ է նշել, որ մտածել, խորհել, մտռել, միտք անել բայերի պահանջով դրված երկրորդական նախադասությունը մեծ մասամբ հանդես է գալիս իբրև մեջբերվող խոսք, որ առաջ է եկել ուղղակի խոսքի՝ անուղղակիի վերածումով: Այս դեպքում, ինչպես հայտնի է, տեղի են ունենում որոշ փոփոխություններ. հանդես է գալիս շաղկապը, փոխվում են ուղղակի խոսքի մեջ գործածված բայի եղանակածամանակային և դիմային ձևերը, փոփոխություն է առաջանում նախադասության կառուցվածքի ու

⁴⁵ Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, էջ 654:

բնույթի մեջ և այլն: Բերենք նշված բայերի թելադրանքով առաջ եկած կրող խնդիր երկրորդական նախադասության օրինակներ: Միտք էր անում, թե ինչպես պիտի դասավորի իր կյանքը (ՊՁ, ԱԵ, էջ 168): Եվ Սոնան հանկարծ մտածեց, որ իր համար այս թանկ մարդու հետ ինքը ընդամենը երկու անգամ է մենակ մնացել (ՍԳ, 1980, 4, էջ 113): Ես մտածում եմ, որ կան կանայք, Որոնց մարմինն ասես ճշում ու հայցում է (ՊՍ, 2, էջ 131): Չես էլ մտորում, թե ինչպես է կատարվում երաժշտական ասելիքի աստվածային այդ խոստովանանքը (ՀԶ, 11, 2. 1981):

Իմացություն ցույց տվող իմանալ, գիտենալ, ճանաչել, հասկանալ, ըմբռնել, կռաճել, գլխի ընկնել, գուշակել, գիտակցել և այլ բայերի կրող խնդիր երկրորդական նախադասությունները ոչ թե մեջբերվող խոսքն են բովանդակում, այլ ներկայացնում են այն առարկաներն ու երևույթները, իրադրություններն ու վիճակները, հատկանիշները և այլն, որոնք գիտակցվում կամ ըմբռնվում են գերադաս նախադասության ենթակայի կամ գործողություն կատարող անձի կողմից: Այսինքն՝ երկրորդական նախադասության բովանդակությունը կամ արտահայտած միտքը արդյունք է գերադաս նախադասության բայ-ստորոգյալի գործողություն կատարողի իմացության կամ ըմբռնման: Օրինակ՝ Նա գիտակցում էր, որ ասելով այդ բառը, անհնարին է դարձնում իրենց միատեղ աշխատանքը (Ա. ՍԵԿ., ՈՎՄ, էջ 193): Հանկարծ նա հասկացավ, որ ճանաչարհը կորցրել է (Գ, 1978, 12, էջ 23): Իսկ ո՞վ չի ճանաչի, որ դրանցից մեկը հայ է, մյուսը՝ ռուս (ՍԽ, ՄՍ, էջ 108): Եվ չէր կարող ըմբռնել, որ դժգոհ մեղիքները դավադրություն կարող են սարքել (Ն. տ., էջ 491): Անգամ ծեր դռնապան Ալին ուսանողների խոսակցությունից կռահել էր, թե խոսքն ինչի մասին է (ԳՍԹ, 1, էջ 19): Էլուշն իսկույն գուշակեց, որ այդ կնոջից պիտի զգուշանալ (ՆԶՀ, էջ 105): Զանոն ոչ մի կերպ չէր ուզում ըմբռնել, որ բացի իրենից Սեդան էլ կարող է սիրել Վահրամիս (Ա. ՍԵԿ., ՈՎՄ, էջ 456):

Կրող խնդիր երկրորդական նախադասություն կարող է դրվել նաև զգալ, կանխազգալ, ընկալել, մոռանալ, հիշել, վերհիշել, մտաբերել, միտքը բերել, պատկերացնել և այլ բայերի պահանջով: Այդ դեպքում երկրորդական նախադասությամբ ներկայացվում են այն առարկաները, երևույթները, վիճակները, գործողությունները, որոնք հիշվում կամ կանխազգացվում են գլխավոր նախադասության ենթակայի կամ գործողություն կատարող այլ անձի կողմից: Այսինքն՝ երկրորդական նախադասությամբ հաղորդված միտքը հետևանք է բայ-ստորոգյալի գործողության կատարողի կանխազգացման կամ հիշողության: Այսպես՝ Եվ հայրը զգաց, որ ամբողջ մարմնով դողում է (Ն-Դ, 1, էջ 6): Աստղիկը կանխազգաց, որ հիմա ահավոր բան է կատարվելու (ՍԳ, 1980, 4, էջ 52):

Բաղին չէր էլ հիշում, թե քանի տարվա տավարած էր (ԱԲ, Երկ., էջ 8):
Կաթողիկոսը մի պահ մոռացավ, թե ինքը որտե՞ղ և ի՞նչ է անում (ՊՍ,
4, էջ 20): Ներքուստ միայն նախազգույն էր, որ վերին աստիճանի քա-
ղաքավարության տակ թաքնված է նենգամիտ մի բան (ԳՍԹ, 1, էջ 312):
Ալֆանը վերհիշում էր, որ Դը Դուրը անտարբեր էր մնում ԱՄՆ-ի և Բոսնի
աղաղակների, սպառնալիքների և տրտնջոցների նկատմամբ (ՍՀ, 2,
4, 1981):

Մտածական բայերի պահանջով դրված կրող խնդիր երկրորդական
նախադասությունները ղերադասի հետ հիմնականում կապակցվում են
ուր շաղկապով: Օրինակ՝ — Ես գիտեմ, որ որսորդը վայրի կենդանի տես-
նելիս իրեն կորցնում է (ՎԱ, ՍԱ, էջ 323): — Այո, հիշում եմ, որ առա-
վտից մինչև հիմա բան չեմ կերել (Գ, 1978, 8, էջ 59): Եվ մոռանանք,
Որ մենք նոր ենք ծանոթացել (ՊՍ, 2, էջ 166): Եվ այդ օրերին տարտա-
մորեն մտածում էր, որ երկրադունդը կլոր է և պտտվում է իր առանցքի
շուրջը (Գ, 1978, 8, էջ 86): Հասկացավ, որ սպարապետը նեղն է լծել
նրան (ՍԽ, ՄՍ, էջ 87): էլ ավելի հաճելի է գիտակցել, որ դրանցից շատե-
րից հետագայում կարելի կլինի հրաժարվել (ՀԶ, 18, 2, 1981):

Մտածական բայերի ուղիղ խնդիր երկրորդական նախադասությու-
նը գլխավորի հետ կապվում է նաև քե շաղկապով, որը այս դեպքում ուր
շաղկապի համեմատությամբ սահմանափակ կիրառություն ունի: Թե
շաղկապը դրվում է հատկապես հետևյալ դեպքերում:

ա) Երբ ստորադասական նախադասության կազմում հանդես են
գալիս ով, ինչ, երբ, որ, որտեղ, որքան, ինչքան, ինչպես, ինչպիսի, որ-
պիսի, ինչու և այլ հարցահարաբերական ղերանուններ անփոփոխ կամ
հղովմած ձևով՝ հարցական երանգ հաղորդելով նախադասությանը: Հնա-
րավոր է, որ երկրորդական նախադասության կազմում միաժամանակ
հանդես գան երկու կամ ավելի հարցական բառեր: Օրինակ՝ Արմենակի
պատմությունից մենք արդեն գիտենք, թե ով էր նա (Ն-Դ, 2, էջ 52):
Վազում էինք և մինչև չիմանայինք, թե ու՞մ հյուրն է, նրան բաց չէինք
թողնում (ԱԲ, Երկ., էջ 131): Հյուրերը կարծես կռահել էին, թե ինչն է
պակասում այս առումում (Գ, 1976, 11, էջ 15): Նրանցից ամեն միքը
զգում էր, թե երկիրը որքան շատ է տուժել գժտությունից (Մուր., ԵԺ, հ.
3, էջ 389): Ես զգում եմ, թե դուք ինչպես եք Բարեհոգի ժպտում Սրբա-
դան մի նկարի նման (Գ, 1978, 10, էջ 65): Եվ այստեղից հրճվանքով
տեսնում ու զգում էին, թե ինչպես զովանում, լվացվում է երաշտից թալ-
կացած հողը (ՎԱ, ՍԱ, էջ 195): Ամեն մեկը մտքում ուղում էր գուշա-
կել, թե ինչքան ձուկ կհավաքվի ցանցի «տուպրակում» (ն. տ., էջ 17):
Տքնաչան այդ աշխատանքի նպատակը հեշտությամբ հասկանալի կդառ-
նար, եթե հիշենք, թե Թումանյանը ինչպիսի կարևորություն էր տալիս

(Գ, 1978, 10, էջ 69): Թող բոլորն էլ իմանան, թե ինչով եք Սերյոժան ու դու զբաղվում (Գ, 1978, 10, էջ 16): Այդ դու պետք է լավ գիտենաս, թե որտեղ է նա և ինչ է շինում (Բ, ԾԺ, 7, էջ 325): Բայց արի ու իմացիր, թե ո՞ր սատանան է արել (ն. տ.: էջ 262): Այնուհետև դու ինքդ կհասկանաս, թե ինչու համար եկա և կամ ուր եմ գնում (ն. տ., էջ 179): Պարում էր, երգում, մերկանում, ծափ զարնում, առանց խոսքի պաղատում, բայց մոռացել էր, թե ինչի համար (ՊՁ, ԱՆ, էջ 166): Վերջին երկու օրինակներում ինչ հարցական դերանունը կիրառվել է համար կապի հետ (ինչի) ինչու (համար), որը նույնպես հարցում է արտահայտում:

բ) Երբ գլխավոր նախադասության բայ-ստորոգյալը ժխտական բնույթի է, իսկ ստորադասական նախադասության կազմում կիրառվում են հարցա-հարաբերական, երբեմն էլ անորոշ դերանուններ կամ էլ հարցում արտահայտող կապակցություններ: Հնարավոր է քե-ի գործածությունն նաև այն դեպքում, երբ գլխավոր նախադասության բայ-ստորոգյալը ժխտական բնույթի է, բայց երկրորդական նախադասության մեջ բացակայում են հարցահարաբերական և անորոշ դերանուններ կամ հարցում արտահայտող կապակցություններ: Այսինքն՝ գլխավոր նախադասության ստորոգյալի ժխտական բնույթը մեծ մասամբ պահանջում է քե շաղկապի կիրառություն երկրորդական նախադասության սկզբում, որը կարծես պարտադիր է դառնում, հատկապես, երբ երկրորդական նախադասության կազմում հանդես են գալիս հարցահարաբերական և անորոշ դերանուններ կամ էլ հարցական բառակապակցություններ. օրինակ՝ Բոլորովին չիմացավ, թե ինչպես անցավ ճանապարհը (ՆԳ, 1, էջ 132): Ոչ մի կերպ չէր հասկանում, թե որտեղի՞ց, ինչպե՞ս նրանք հայտնվեցին այդտեղ (ԳՍԹ, 1, էջ 223): — Ինչպե՞ս դու չես ուզում ըմբռնել, թե ինչ է նշանակում ինձ համար այդ բոլորը (ԱԿ, Օտ., 2, էջ 500): Չեմ կարող գուշակել, թե դու ինչ կպատասխանեիր իմ տարակուսանքին (Գ, 1979, 10, էջ 37): Աշխարհում ոչ մի կին արարած դեռ չգիտի, թե որքան քնքուշ կարող են լինել տղամարդու ձեռքերը (ՊՁ, ԱՆ, 29): Նա չէր հասկանում, թե ինչու պատահեց էն ամենը, ինչ որ ինքը տեսավ (ՀԹ, 1, էջ 375): Ոչ ոք չէր պատկերացնում, թե ուրիշը Արեւլանից հետո կհանդգնի էլիզբարովի դերը խաղալ (Գ, 1978, 8, էջ 73): Ու չէր հասկանում, թե ինչու է տատը համբուրում այդ սևացած քարը (ԱԲ, Երկ., էջ 65):

Եթե գլխավոր նախադասության ստորոգյալը ժխտական է, իսկ երկրորդական նախադասությամբ հավաստիացվում, հաստատ համոզմունք է արտահայտվում տվյալ երևույթի կամ գործողության իրական լինելու մասին, ապա քե-ի փոխարեն կիրառվում է ու շաղկապը. օրինակ՝ նա

չգիտեր, այո, որ այդ բոլոր տառապանքները յուր պատճառով են կատարվում (Բ, ԵԺ, 7, էջ 415): Անցնում են ու չեն էլ իմանում, որ իրենց համար ես ծերացել (ՀՄ, ԵԺ, 2, էջ 139): Ու ոչ ոք չգիտի, որ ինքը, վերջապես, կարող է ստիպել այս անցորդներին, փողոցի այս անծանոթ մարդկանց հիանալ, դարմանալ (Գ, 1978, 10, էջ 85):

գ) Երբ կամ գլխավոր, կամ էլ երկրորդական նախադասությունը հարցական բնույթի է, կիրառվում է քն շաղկապը. ընդ որում, երբ գլխավոր նախադասությունը հարցական բնույթ ունի, երկրորդական նախադասության մեջ կարող են դրվել հարցահարաբերական կամ անորոշ դերանուն, կամ էլ հարցում արտահայտող որևէ բառ կամ կապակցություն, որով ավելի է ընդգծվում, շեշտվում երկրորդական նախադասության բովանդակությունը. օրինակ՝ Մտածե՛լ ես երբեկից, թե ինչու ոչ ոք այս երկրում մեծություն չի դառնում (ՊՁ, ԱԵ, էջ 88): — Ընկեր Արշակյան, կարո՞ղ եք իմանալ, թե սրանցից ո՞րն է ավելի ուժեղը (Ա. Սեկ., ՈՎՄ, էջ 46): Նա ճգնում էր հիշել, թե երբևիցե՞ սկսեց սիրել Լևոնին (ՆՁՀ, էջ 306): Ուրեմն այդպես էլ չիմացա՞ր, թե ովքեր են սարքել գրքերի պատմությունը (ԳՄԹ, 1, էջ 263): Սակայն ո՞վ կարող էր իմանալ, թե ինչ կա նրա գրպանում (Ն. տ., էջ 352):

դ) Երբ գլխավոր նախադասության բայ-ստորոգյալը արտահայտում է անհաստատ, ենթադրական, անհավանական գործողություն: Մտածական բայերից աղպիսի նշանակություն են արտահայտում ենթադրել, կարծել, կասկածել. բայերը, ուստի նրանց պահանջով դրված խնդիր երկրորդական նախադասությունը գլխավորի հետ կապվում է քն շաղկապով. օրինակ՝ Շատերը կարծում են, թե ոեալիդը կյանքի լուսանկարչական պատճենումն է (Գ, 1980, 3, էջ 41): Նա կարծում էր, թե Լևոնը իրեն մեղադրում է հետամնացության և նեղսրտության մեջ (ՆՁՀ, էջ 186): Միաժամանակ և կասկածում էր, թե արդյոք նրանք ուղիղ ճանապարհով են տանում (Ն. տ., էջ 418):

Եթե նշված բայերը կիրառվում են (հատկապես ժխտական խոնարհման) ներկա ժամանակով և նախադասության բնույթով ու կառուցվածքով պայմանավորված դրսևորում են խոսողի հաստատ համոզմունքը ստորադասական նախադասությամբ հաղորդածի իրական լինելու վերաբերյալ, ապա այդ նախադասությունների կապակցումը հիմնականում տեղի է ունենում ու շաղկապով⁴⁷. օրինակ՝ Նա այլևս չէր կասկածում, որ դա հենց Զուրաբի աղջիկն է (ՆՁՀ, էջ 65): Բայց ես կարծում եմ, որ դա մեր բարեկամների գործն է (ԳՄԹ, 1, էջ 263): Մի՞թե կարծում ես, որ քեզից բացի աշխարհում մեկնումեկը կարող է հետաքրքրել ինձ (Ն. տ.,

⁴⁷ Տե՛ս «Ժամանակակից հայոց լեզու», հ. 3, էջ 657:

էջ 411): — Ես չեմ կասկածում, որ նա շատ լավն է (ն. տ., էջ 431): Հարկ է նկատել, որ քե շաղկապի գործածութիւնը վերելում նշված բոլոր դեպքերի համար բացարձակ չէ, այն ունի որոշ բացառութիւններ ու շեղումներ: Այսպես՝ երբեմն քե-ի փոխարեն որ շաղկապ է դրվում, երբ գլխավոր նախադասութեան ստորոգյալը ժխտական է կամ էլ հարցական. օրինակ՝ Զգիտե՞իր, որ Դավոյենց Առաքելն էլ աշքեր ուներ դրած ձորակին (ԱՔ, Երկ., էջ 77): Նա չգուշակեց, որ այդ նոր միտքը դուր եկավ պարտկազմակերպութեան քարտուղարին (ՎԱ, ՍԱ, էջ 37): Շապուհը չէր կարող երեակայել, որ ես այդ շնորհը կխնդրեի (Բ, ԵԺ, 7, էջ 246): Իհարկե, մենք ամենեկին էլ չգիտեինք, որ Սամարղանդի հետ մեր միակ հանդիպումը չէ (ՍԳ, 1979, 6, էջ 117): Երբեք էլ չէինք կարող կռահել, որ մեկ շաբաթ հետո ստիպված պետք է վերադառնանք (ն. տ., էջ 117): Զանոն ոչ մի կերպ չէր ուզում ըմբռնել, որ բացի իրենից Սեդան էլ կարող է սիրել Վահրամիւն (Ա. Սեկ., ՈՎՄ, էջ 456):

Երբեմն էլ քե շաղկապն է գործածվում որ-ի փոխարեն պայմանավորված կամ բարեհնչյունութեամբ, կամ հաղորդվածի անհավանականութիւնը շեշտելու և այլ հանգամանքով. օրինակ՝ Տեսնողը իսկույն պիտի հասկանար, թե գործ ունի ազնիվ, թանկագին մետաղի հետ (ՎԱ, ՍԱ, էջ 370): Եթե կողմնակի մարդ լիներ, կմտածեր, թե առնվազն մարդասպանների հետ գործ ունի (ՊԶ, ԱԵ, էջ 98): Մտածում եմ, թե այս բոլորը կորել է անգարձ (Մուր., ԵԺ, հ. 3, էջ 67):

Մտածել, խորհել և այլ բայերի կրող խնդիր երկրորդական նախադասութիւնը հաճախ հանդես է գալիս որպէս մեջբերվող խոսք, ուր նշված բայերով կազմված հեղինակի խոսքը գլխավոր նախադասութեան դեր է կատարում, որի հետ կապվում է ուղղակի խոսքով արտահայտված երկրորդական նախադասութիւնը, որը կարող է թե՛ առաջադաս և թե՛ վերջադաս կիրառութիւն ունենալ. օրինակ՝ Որ սատանան մոլորեցրեց մեզ, — մտածում էր նա (Բ, ԵԺ, 7, էջ 260): Բայց վշտալի երիտասարդը յուր մտքում այս էր խորհում. «Որքան ուսումնասիրել են այդ մարդիկը շարութեան գործը» (ն. տ., էջ 479): Հետո թագավորը և ավագանին իրենց մեջ խորհեցին. «Դա եկել է և այդպիսի քարոզներով կամենում է զրկել մեզ մեր կյանքի պետքերը հայթայթելու քաջութիւնից» (ն. տ., էջ 107): Սուրիան անվերջ մտածում էր՝ մի՞թե դա տղաներն են արել (ԳՍԹ, 1, էջ 332): Մտածական բայերի ուղիղ խնդիր երկրորդական նախադասութիւններին գլխավոր նախադասութեան մեջ երբեմն համապատասխանում են մի բան, ամեն ինչ, այս, այն և այլ ձևական կրող խնդրի պաշտոն կատարող հարաբերյալներ, որոնք ծառայում են երկրորդական նախադասութեան իմաստի ընդգծմանը, հաղորդված մտքի հաստատմանը, այն ավելի համոզիչ դարձնելուն. օրինակ՝ Նրանք գիտեին և այն, թե

այլևս ինչեր պիտի աներ Մերութանը (Բ, ԾԺ, 7, 312): — Իզուր ես մտածում ես այն, թե մենք աշխատում ենք կործանելու մեր արքայական հարազատ գահը (ն. տ., էջ 296): Ես իմ ընկերոջ պատմածից հիշում եմ այն, որ Երանի Սեթը գյուղի ամենալավ սերմնացանն էր (ԱԲ, Երկ., էջ 195): Այդ ամենի հետ գիտեր ես այն, որ կայսրուհին այժմ ես զորք չի կարող ուղարկել — Հայաստան (ՄՆ, ՄՍ, էջ 514):

Կրող խնդիր երկրորդական նախադասությունները գլխավոր նախադասության հետ կարող են կապակցվել առանց շաղկապի, շարահարության: Այդ դեպքում շարահարությունը համեմատաբար ազատ է, սակայն առավել տարածված են վերջադաս, քան առաջադաս կիրառության երկրորդական նախադասությունները: Ս. Աբրահամյանը երկրորդական նախադասության առաջադաս կիրառության երկու դեպք է նշում՝ ա) երբ երկրորդական նախադասությունը հարցական է. բ) երբ երկրորդական նախադասությունը պարունակում է եզրահանգում, հետևություն:

Նկատենք, որ միայն այդ երկու դեպքով չեն սահմանափակվում երկրորդական նախադասության առաջադաս կիրառությունները, մանավանդ որ հանդիպում են դեպքեր, երբ երկրորդական նախադասությունը հարցական է, սակայն հանդես է գալիս վերջադաս գործածությամբ. օրինակ՝ Եվ յուր լսելիքների բոլոր զորությամբ աշխատում էր ըմբռնել, արդյոք չէ՞ լսում որևէ շշուռ Ներսիսի (Բ, ԾԺ, 7, էջ 405): — Ցանկանում էի իմանալ, արդյոք ի՞նչ կարգադրություններ է արել նա (ն. տ., էջ 313): — Ես չեմ հասկանում, ինչու համար ես հիշեցնում ինձ այդ բոլորը (ն. տ., էջ 294):

Կրող խնդիր երկրորդական նախադասության առաջադաս կիրառությունը պայմանավորված է նաև նախադասության կառուցվածքով, տրամաբանական շեշտով, հաղորդման նպատակով և արտաբերական այլևս գործոններով: Առանց շաղկապի խնդիր երկրորդական նախադասությունները առավել բնորոշ են խոսակցական լեզվին, որտեղից էլ թափանցում են հատկապես գեղարվեստական ոճի մեջ: Բերենք բնագրային օրինակներ՝ Մտածեց՝ գուցե քամին խորտակել էր վրանները, և մարդիկ շտապել են փախչել (Բ, ԾԺ, 7, էջ 512): Չգիտե՞ր՝ ինչ պատասխանել (ն. տ., էջ 279): Հայրը չգիտե՞ր՝ ինչպես բացատրել Սամվելի նկատողությունները (ն. տ., էջ 458): Եթե գիտե՞նա՝ կոխվել և պատերազմը քո համար է, դու քեզ կձգես թշնամու գիրկը (ն. տ., էջ 418): Մտածում է՞ր՝ ի՞նչ աներ այդ սոսկալի դրությունից ելնելու համար (Ն-Դ, 1, էջ 52): Փորձեք կռահել՝ ո՞վ եմ ես (Գ, 1978, 9, էջ 17): Չիմացանք՝ ինչ է նշանակում (ՍԳ, 1979, 1, էջ 81): Ուզում ես իմանալ՝ ինչու են ծիծաղում (Գ, 1978, 11, էջ 50): Որ դժվար է մարդ գլխի բնկնում՝ Բերածդ ի՞նչ էր, տարածդ ի՞նչ (ՀՍ, ԾԺ, 2, էջ 271): Բայց չգիտեին՝ որտեղով է հոսում:

և զգիտեին ուր են գնում իրենք (ՎԱ, ՍԱ, էջ 418): Իմացիւր, այժմ նա դողում է՝ մեր լեռներին նայելուց (ՍԽ, ՄՍ, էջ 274): Իմացիւր՝ կկոպենք անդարձ (ն. տ., էջ 422): Հասկացալ՝ Բեկն ապրում է իր կյանքի վերջին պահերը (ն. տ., էջ 481): Մտածում եմ՝ ի՞նչ է պատահել սրանց, ինչու՞ հանկարծ այս մաքուր ավազանի ջուրը պղտորվեց (ԳՍԹ, 1, էջ 160): — Իսկ մենք մտածում էինք՝ այդ ութե՞ր են, որ ինստիտուտում այդպես ցանկանում են օգնել դոկտոր Ազադիին (ն. տ., էջ 477):

Ինչպես երևում է բերված օրինակներից, անշաղկապ երկրորդական նախադասությունները դրվում են հատկապես այն ժամանակ, երբ գերադաս նախադասության ստորոգյալը արտահայտված է հասկանալ, մտածել, գիտեմալ, իմանալ, մասամբ նաև կռահել, գլխի բնկնել բայերի դրական կամ ժխտական խոնարհման ձևերով: Նրբեմն շարահարուսթյամբ կապակցված բարդ նախադասության բաղադրիչների միջև դադարը չափազանց փոքրանալու հետևանքով այդ նախադասությունը չի դիտվում որպես առանձին միավորներից կազմված նախադասություն, այլ ըմբռնվում է որպես մի պարզ ընդարձակ նախադասություն, ուր երկրորդական նախադասության ստորոգյալի հիմնական հատկանիշը՝ ստորոգումը, կարծես վերանում է և այն հանդես է գալիս որպես նախադասության ստորոգյալի մի մաս կամ էլ գլխավոր նախադասությունը կորցնում է նախադասության իր հատկանիշը՝ վերածվելով երանգային կամ եղանակային բառի կամ բառակապակցության, այսինքն՝ գլխավոր նախադասությունը ձուլվում է ամբողջ նախադասությանը՝ երանգավորելով կամ եղանակավորելով տվյալ խոսքը: Այդ դեպքում փաստորեն մենք գործ ունենք ոչ թե երկու առանձին նախադասությունների հետ, որոնք կապված են ստորադասական հարաբերությամբ, այլ մեկ նախադասության, ուր կամ երկու նախադասությունների ստորոգյալներն են միանում և միասնաբար մեկ իմաստ արտահայտում, կամ էլ գլխավոր նախադասությունը դադարում է այդպիսին ըմբռնվելուց և սոսկ եղանակավորող դեր է կատարում տվյալ կառույցի համար⁴⁸: Գլխավոր նախադասությունը եղանակավորող դեր է կատարում հատկապես այն դեպքում, երբ իբրև ենթակա կիրառվում է ով դերանունը, իսկ ստորոգյալի դերում հանդես են գալիս գիտեմալ բայի սահմանական եղանակի ներկա և անցյալ ժամանակի և իմանալ բայի ըղձական եղանակի ապառնի ժամանակի ձևերը և կամ էլ ենթական չի արտահայտվում, իսկ իբրև ստորոգյալ, գործածվում են գիտեմալ բայի ներկա ժամանակը ժխտական ձևով կամ իմանալ բայի ըղձական եղանակի բայաձևերը. վերջինիս հետ սերտորեն կապակցվում են ինչ, ինչպես բառերը: Այսպիսով, առաջ են գա-

⁴⁸ Տե՛ս «Ժամանակակից հայոց լեզու», հ. 3, էջ 662—663:

լիս որոշ ձևեր ու կապակցութիւններ (ով գիտե, ով իմանա, ինչ իմանամ, ինչ իմանաս, ինչպես իմանամ, չգիտես), ուր ենթակայի և ստորոգյալի իմաստները կարծես մթագնված են կամ էլ ստորոգում չկա բառի բուն նշանակութեամբ:

Այդպիսի դեպքերում ենթական և ստորոգյալը միասին առնված կամ էլ ստորոգյալը իր լրացման հետ (կամ առանձին) մի տեսակ դարձվածային միավորի արժեք են ստանում, որով էլ հենց պայմանավորվում է գլխավոր նախադասութեան հղանակավորող նշանակութիւնը: Բնագրային օրինակներ՝ Ով իմանա, պետք է փախցնեն Յոթգլխանի դեերից (ՀԹ, 1, էջ 227): Ո՞վ գիտե, ինչ դավեր են հիմա թուրքերը նյութում իրենց դեմ (ՍԽ, ՄՍ, էջ 531): Վանք կգնաս, կնկատեն, ո՞վ իմանա՝ ինչեր կմտածեն (ն. տ., էջ 269): Ո՞վ իմանա՝ երկա՞ր կտևի այդ վայելքը (ն. տ., էջ 276): Գումակը խրվել էր Շիրակի լեռներում, և ո՞վ իմանա, երբ տեղ կհասնի (ն. տ., էջ 362): Զգիտես, երբ կարող ես հարմար մի տեղ գտնել, ամուսնանալ (ն. տ., էջ 99): Նվ ապա՝ ինչ միտք ունի գնալ Փարիզ, մի անծանոթ երկիր, ուր չգիտես ինչ է սպասում քեզ (ն. տ., էջ 99):

Նրբեմն հարցական երանգի գլխավոր նախադասութեանը ստորադասվում է այնպիսի նախադասութիւն, որը սկսվում է գուցե հղանակավորիչ բառով, որով ավելի է ընդգծվում այդ նախադասութեան արտահայտած մտքի ոչ հաստատ, երկբայական լինելը. օրինակ՝ Ո՞վ գիտե, գուցե դա այն վերջին շողն է, որ տեսնում է Հակոբը (ՍԽ, ՄՍ, էջ 149): — Ո՞վ գիտե, գուցե և հայրս արդարացի է (ԳՍԹ, 1, էջ 304): Ո՞վ իմանա, գուցե հենց խանի ախոռից են (ՍԽ, ՄՍ, էջ 302): Իսկ ո՞վ գիտի, գուցե հենց այս պահին անգութ մեղիք Բարխուդարը մորթում է նրա մորը, եղբորը, հարազատներին (ն. տ., էջ 69): Նման կառույցներում գուցե-ի կիրառութիւնը իր հերթին հաստատում է, որ գլխավոր նախադասութիւնը արտահայտում է հղանակավորող նշանակութիւն և այն կարծես երանգավորող բառակապակցութիւն է, որը զգալի չափով հեռացել է գլխավոր նախադասութեան արժեքից:

Հանդիպում են դեպքեր, և այն էլ ոչ սակավադեպ, որ այսպես ասած, գլխավոր նախադասութեան ստորոգյալը դեմքով համընկնում է ստորադասականի ստորոգյալի հետ, որով ավելի է փոքրանում այդ նախադասութիւնների միջև եղած դադարը և սերտանում դրանց կապը: Նման կառույցներում, իբրև գլխավոր նախադասութեան ստորոգյալներ, կիրառվում են դարձյալ գիտեմալ, իմանալ բայերը հղանակածամանակային ու դիմային տարբեր ձևերով: Օրինակ՝ նա նայում էր այդ ուրվականներին ու շէր իմանում ինչ աներ (ՍԽ, ՄՍ, էջ 305): Սպարապետն անհամբերութիւնից չգիտե՞ր՝ ինչ աներ (ն. տ., էջ 137): Բարկութիւնից

չեմ իմանում՝ ինչ անեմ (ն. տ., էջ 150): Ու չէր իմանում՝ ինչից սկսի (ՆՁԷ, էջ 169): Զարմանքից, սարսափից և կատաղությանից չգիտեի՝ ինչ պատասխանեմ (Ն-Դ, 2, էջ 198): Ու ինձ նման՝ Ձի իմանում՝ ժպտա՞, Բե՞ լա (ՊՍ, 1, էջ 9): Երբեմն ստորոգյալների դիմային համընկնում չի լինում և մտածական բայի հետ կապակցվում է ոչ թե բայի եղանակային ձև, այլ անորոշ դերբայը. օրինակ՝ Վերավորանքից չգիտեի ինչ անել (Գ, 1978, 11, էջ 41): Վահրամը չգիտեի ինչ պատասխանել (Ա. Սեկ., ՈՎՄ, էջ 52): Գիտե՞նք երբ ուրախանալ, երբ տխրել (Գ, 1980, 3, էջ 60): Հանկարծակիի եկած, շփոթված, նա չգիտեի ինչ պատասխանել (ԳՄԹ, 1, էջ 503): Այդ դեպքում սովորաբար բայի եղանակային ձևի ու անորոշ դերբայի միջև դրվում է հարցահարաբերական կամ այլ դերանուն, և դա չի խանգարում ստորոգյալների միասնությունը: Փաստորեն առաջ է գալիս բայական բաղադրյալ ստորոգյալ՝ արտահայտված բայի եղանակային ձև + անորոշ դերբայ կաղապարով: Մոտավորապես այնպես, ինչպես ունենք եղանակավորիչ բայ + անորոշ դերբայ կառույցը, միայն այն տարբերությամբ, որ այս դեպքում խոնարհված բայաձևի եղանակավորման իմաստը թույլ է արտահայտված (հմմտ. ուզում եմ աշխատել և գիտեմ տխրել, շարունակում եմ երգել և գիտեի պատասխանել): Այս ամենից հետևում է, որ նման տիպի կառույցները երկու կերպ կարող են ըմբռնվել՝ մեկ որպես բարդ ստորադասական, մեկ էլ պարզ նախադասություն: Այդ երկուսի հատկանիշներն էլ ինչ-որ չափով ու ձևով համատեղվում են նշված կառույցներում: Դրանք կարելի է նույնիսկ առանձնացնել և դիտել որպես ինքնուրույն տիպի նախադասություններ, որոնք միջին դիրք են գրավում բարդ և պարզ նախադասությունների միջև, այսինքն՝ ինչ հատկանիշով մոտենում է բարդին, նույն հատկանիշով էլ զանազանվում է պարզից և ընդհակառակն՝ որքանով նա մոտենում է պարզին, այնքանով էլ տարբերվում է բարդից: Պարզ է, սակայն, որ նշված նախադասությունների բաղադրիչների կապը չափազանց սերտ է՝ դադարը քիչ լինելու հետևանքով և այդ բաղադրիչ նախադասությունները կարող են դիտվել նաև որպես պարզ նախադասություններ:

Մտածական բայերից մի քանիսի պահանջով կիրառվում են վերաբերության և անջատման խնդիր երկրորդական նախադասություններ:

Վերաբերության խնդիր երկրորդական նախադասությունները, անշուշտ, դրվում են բայիմաստի թելադրմամբ և ցույց են տալիս այն առարկան կամ անձը, որին վերաբերում է գերադաս նախադասության բայ-ստորոգյալի կամ բայով արտահայտված այլ անդամի գործողությունը: Վերաբերության խնդիր նախադասությունները մոտենում են մտածական բայերի ուղիղ կամ կրող խնդիր նախադասություններին, բայց չեն նույնանում նրանց հետ: Վերաբերության խնդիր երկրորդական նա-

խաղաասութիւնն են պահանջում հատկապես մտածել, խորհել, իմանալ, գիտենալ և այլ բայեր, որոնց վերաբերութեան խնդիրը ոչ միշտ է հստակորեն տարբերվում կրող խնդիր երկրորդական նախադասութիւնից: Այսպես՝ — Այժմ խորհնք, թե ինչ պետք է անել (Բ, ԵԺ, 7, էջ 56): Առավտը կանուխ իմացան, որ նրան էլ են բանտարկել (ԱԲ, Երկ., էջ 20): Երբ մանուկ էի, միտք էի անում, թե գիշերն արեւն ո՞ր է չքանում (ՀԾ, ԲՀ, էջ 21): — Ես էլ ահա մի տարի է մտածում եմ, թե էս ծովային կենդանին առանց ոտի ո՞նց է ճանճաքար բարձրացել (ՎԱ, ՍԱ, էջ 292): Այստեղ երկրորդական նախադասութիւնները կարելի է մեկնաբանել երկու իմաստով, դիտելով թե՛ կրող խնդիր, թե՛ վերաբերութեան խնդիր (խորհել անելիքը, անելիքի մասին. իմանալ նրան բանտարկելը, բանտարկելու մասին): Որոշ կառուցներում վերաբերութեան խնդրի իմաստը համեմատաբար որոշակի է, և երկդիմութիւն գրեթե չի առաջանում, ուստի և համարյա չի շփոթվում կրող խնդրի հետ. օրինակ՝ Սարսափով մտածում էի, որ այդ կատարյալ գեղեցկութիւնը կարող էր ինչոր մի պահ այլևս գոյութիւն չունենալ (Գ, 1980, 3, էջ 9): Նա գիտեր, որ այդ գոյութիւնները տրվում են իրան առերես (Մուր., ԵԺ, 3, էջ 358): Ինչու՞ նա չպիտի գիտենա, որ յուր քույրը պսակված է Մերութանի հետ (Բ, ԵԺ, 7, էջ 95): Երբեմն քնելուց առաջ մտածում էր, որ մեքենա վարելը խաղաղ գործ չէ (Գ, 1978, 11, էջ 43): Մանասը երբեմն միտք էր անում, թե Առաքելը ոխը հանելու համար գնաց տանուտեր եղալ (ԱԲ, Երկ., էջ 79): Բերված ոչ բոլոր օրինակներում է վերաբերութեան խնդրի իմաստը հստակ ու որոշակի: Մի քանի կառուցներում վերաբերութեան և կրող խնդրի իմաստները համատեղվում են և հավասարապես գիտակցվում: Վերաբերութեան խնդիր երկրորդական նախադասութեան իմաստը միանգամայն որոշակի է լինում, երբ գլխավոր նախադասութեան մեջ արդեն կա ձևական վերաբերութեան խնդիր. օրինակ՝ Նա չէր էլ մտածում այն մասին, թե Լևոնը կբաժանվի՞ իր կնոջից, թե ոչ (ՆՁՀ, էջ 423): Այն մասին, որ խանի տանը վագր կա, գիտեին շրջապատի բոլոր գյուղերում (ԳՍԹ, 1, էջ 288): Այս բարդ նախադասութիւնները պարզեցնելու դեպքում կստանանք վերաբերութեան խնդիր պարունակող պարզ նախադասութիւններ, ընդ որում, գլխավոր նախադասութեան ձևական վերաբերութեան խնդիրը կվերանա՝ փոխարինվելով պարզեցված նախադասութեան համանուն խնդրով, ավելի ճիշտ՝ գլխավոր նախադասութեան մասին կապով ու կապի խնդրով արտահայտված վերաբերութեան խնդրի կապվող բառը կփոխարինվի ստորադասական նախադասութեան համապատասխան կապվող բառով, որը մասին կապի հետ կկատարի վերաբերութեան խնդրի պաշտոն:

Գրեթե չեն հանդիպում մտածական բայերի պահանջով դրված ան-
շատման, միջոցի, մատուցման, ներգործող, հանգման և այլ բնույթի
երկրորդական նախադասություններ, մի բան, որ ամենից առաջ պայմա-
նավորված է մտածական բայերի դրսևորած իմաստով: Մտածական բա-
յերի խմբում համարյա չկան անպիսի բայեր, որոնց թեկադրմամբ կարող
էին դրվել անշատման, հանգման և մատուցման խնդիր երկրորդական
նախադասություններ: Այդ պատճառով էլ չեն քննվում նշված բնույթի
երկրորդական նախադասությունները, որոնք իսկապես շատ սահմանա-
փակ են գրական հայերենում:

Մտածական բայերի պահանջով կարող են դրվել ոչ միայն խնդիր,
այլև պարագա երկրորդական նախադասություններ, որոնք գերադասի
հետ կարող են կապվել շաղկապներով կամ հարաբերական բառերով:
Պարագա երկրորդական նախադասությունների կապակցումը գերադասի
հետ սովորաբար առանց շաղկապի չի իրացվում: Կապակցական դերով
հանդես են գալիս տարբեր տիպի շաղկապներ՝ պայմանավորված պարա-
գա երկրորդական նախադասության բնույթով: Եթե պարագա երկրորդա-
կան նախադասությամբ արտահայտվում է պատճառի հարաբերություն,
ապա կապակցումը կատարվում է պատճառի իմաստ ունեցող շաղկապնե-
րով, եթե նպատակ է դրսևորվում, հանդես են գալիս նպատակի շաղ-
կապներ և այլն: Տարածում ունեն հատկապես պատճառի, ձևի, նպա-
տակի, տեղի, ժամանակի և այլ պարագա երկրորդական նախադասու-
թյունները, որոնք անշուշտ գործածվում են գերադաս նախադասության
բայ-ստորոգյալի պահանջով: Օրինակ՝ Եթե երազ է, պետք է գոնե ինչ-
որ բան այնպես հիշել, որ երբեք չմոռացվի (ՄԳ, 1980, 4, էջ 123): Բայց
ոչինչ չտեսնել չկարողացավ, որովհետև վրանի վարագույրները ցած էին
թողած (Բ, ԵԺ, 7, էջ 453): Դու պետք է գիտենաս բոլորը, որպեսզի
միասին խորհենք մեր ընտանիքի ապահովության մասին (ն. տ., էջ
155): Մոռանում է, որովհետև ամեն օր չի տեսնում (ՊԶ, ԱԵ, էջ 135):
Վաղօրոք կշռադատում էր իր ասելիքը, որպեսզի հանկարծ Աստղիկը
վատ բան չկարծի և չխռովի իրենից (ԳՍԹ, 1, էջ 73): Բերված և նման
բայերի համար պարագաներ առնելը պարտադիր չէ:

Երբեմն պարագա երկրորդական նախադասություն է դրվում այն
դեպքում, երբ գլխավոր նախադասության մեջ արդեն առկա է ձևական
որևէ պարագա: Օրինակ՝ Բայց թող իմանան այն ժամանակ, երբ թագա-
վորի զորքն այստեղ կլինի (ՍԽ, ՄՍ, էջ 136):

5. ՄՏԱԾԱԿԱՆ ԲԱՅԵՐՈՎ ԲԱՂԱԴՐՅԱԼ ՍՏՈՐՈԳՅԱԼՆԵՐ

Ստորոգյալը, ինչպես հայտնի է, լինում է պարզ և բաղադրյալ:
Բաղադրյալ ստորոգյալը ըստ բաղադրիչների խոսքի մասային պատկա-

նելուժյան ստորակարգվում է բայականի և անվանականի: Բայական բաղադրյալ ստորոգյալը կազմվում է եղանակավորող իմաստ արտահայտող խոնարհված բայաձևի և անորոշ դերբայի հարադրմամբ: Այդ կապակցություններում բուն գործողությունը դրսևորվում է անորոշ դերբայով, իսկ խոնարհված բայաձևը միայն եղանակավորման, երանգավորման նշանակություն է արտահայտում, այսինքն՝ մի տեսակ կերպավորում է բուն գործողությունը (ցանկանում է աշխատել, սկսում է նիրհել, հարկադրված եմ զեկուցել): Նշված երկու բաղադրիչները միասնաբար կազմում են բայական ստորոգյալ, նրանց նշանակությունները անանջատ են:

Մտածական բայերը ևս մասնակցում են բաղադրյալ ստորոգյալի կազմությանը, մեկ որպես անորոշ դերբայ, հարադրվելով եղանակավորող խոնարհված բայաձևին, մեկ էլ որպես խոնարհված բայաձև, որին հարադրվում է անորոշ դերբայը: Տարածված են հատկապես առաջին եղանակով կազմությունները: Բայական բաղադրյալ ստորոգյալի կազմում հանգես եկող եղանակավորող, երանգավորող, կերպավորող նշանակություն արտահայտող բայաձևերը մի քանի տասնյակի են հասնում: Դրանք կարելի է բաժանել հետևյալ խմբերի⁴⁹:

1. Բայեր, որոնք արտահայտում են գործողության սկիզբը, ընթացքը և ավարտը: Այդպիսիք են սկսել, շարունակել, ավարտել, դադարել և այլն: Մատնանշված բայերին հարադրվելով մտածական բայերը՝ ձևավորում են բայական բաղադրյալ ստորոգյալը. օրինակ՝ Սկսեց մտածել Արուսյակի ու Մովսեսի մասին (ՍԽ, ՄՍ, էջ 269): Սկսել եմ կամաց-կամաց ինձ ճանաչել ու հասկանալ (ՀՍ, ԵԺ, էջ 93): Շարունակում եմ խորապես մտածել Հայաստանի մասին (Գ, 1979, 10, էջ 45): Սեղան շարունակում էր մտածել մերթ նրա, մերթ մոր մասին (Ա. Սեկ., ՈՎՄ, էջ 22):

2. Բայեր, որոնք արտահայտում են մի բան անելու ցանկություն, կարողություն և այլն: Այդպիսիք են ցանկանալ, կամենալ, ուզենալ, փափագել, երագել, կարողանալ և այլն: Օրինակ՝ Վերջապես լեռներ ցանկացավ իմանալ, ճիշտ է արդյոք, որ Լիպարիտը ազատված է աշխատանքից և գնում է սովորելու (ՆՁԶ, էջ 301): Կցանկանայի գիտենալ, թե ով էր այդ համարձակ ձիավորների առաջնորդը (Բ, ԵԺ, 7, էջ 537): Ցանկանում եմ հիշել, թե ում մոտ և որտեղ է շարախոսել Վսուդիի մասին (ԳՄԹ, 1, էջ 321): Ուզում էի իմանալ աղջկա անունը (ԱԲ, Երկ., էջ 122): Եվ նա չէր կարողանում հասկանալ, թե ինչ է կատարվում իր հետ (ՆՁԶ, էջ 306): Ոչ ոք չկարողացավ կռահել, թե ինքը՝ գահերեց զորավարն ինչ է կամենում (ՍԽ, ՄՍ, էջ 124): Այո, եթե մի ժամ, մի վայրկյան դու

⁴⁹ Այդ մասին տե՛ս Վ. Ասաֆյան, Հայերենի շարահյուսություն, հ. 1, 1958:

Պարտզանայի ըմբռնել այդ վշտի էությունը ... (Մուր., ԵԺ, 3, էջ 420):

Երբեմն եղանակիչ բային հարադրվում է ոչ թե անորոշ դերբայը, այլ եղանակային որևէ բայածե, հատկապես երրորդ դեմքով. օրինակ՝ Պետին շէր կարողանում մտահան անի կրակով վառած տավարը (ԱԲ, Երկ., էջ 35): Այս դեպքում դեմքով համընկնում են եղանակիչ բայածեն ու անորոշ դերբայի փոխարեն կիրառված խոնարհված բայը: Ոչ հաճախադեպ, երբ եղանակիչ բայածեք առաջին դեմքով է կիրառվում, նրան կարող է հարադրվել առաջին դեմքի մտածական բայածե, ինչպես՝ ուզում եմ մտածեմ, փորձում եմ ճանաչեմ և այլն, որոնք առավել բնորոշ են խոսակցական լեզվին:

3. Բայեր, որոնք արտահայտում են մի բան անելու ձգտում, վճիռ, հրաման, որոշում և այլն: Դրանք են՝ ձգտել, փորձել, աշխատել, ջանալ, վճել, ստիպել, որոշել, մտադրվել և այլն: Օրինակ՝ ինքը կաշխատի մոռանալ Գոհարին, մոռանալ ընդմիշտ, անդարձ (ՄԽ, ՄՄ, էջ 45): Եվ աշխատում էր հասկանալ, թե ինչ կա այնտեղ (ՎԱ, ՍԱ, էջ 497): Ու աշքերը փակ փորձում էր մոռանալ անվերջանալի պատկերը (Գ, 1979, 12, էջ 25): Ձգտում էր ըմբռնել նրա կերպարների բարդ հոգեբանությունը (Գ, 1978, 11, էջ 85): Սպարապետը ջանում էր ամեն կերպ մոռանալ իր սիրեցյալին, չնիշել նրան (ՄԽ, ՄՄ, էջ 8):

4. Բայեր, որոնք արտահայտում են խնդրանք, խուսափում, հակում, շտապողականություն, դժվարություն, հաջողվածություն և այլ նշանակություններ: Դրանք են խնդրել, աղերսել, աղաչել, հակվել, տրամադրվել, շտապել, դժվարանալ, հաջողվել, սովորեցնել և այլն: Օրինակ՝ հետո խնդրեց մոռանալ երեկվա իր զառանցանքները Մակինցյանի եղբորորդու, փարիզյան առանձնատան մասին (ՄԳ, 1980, 4, էջ 55): Բոլորն շտապում էին իմանալ, թե հաշվապահն ինչու է փախել գյուղից և ինչպես է փախել (ՆԶԶ, էջ 339): Նալբանդյանն էր սովորեցնում հայերեն մտածել (Գ, 1980, 3, էջ 49): — Ու, չհաջողվեց իմանալ ոչինչ (ԳՄԹ, 1, էջ 263): Ու երեկ առաջին անգամ դժվարացավ կռահել (ՄԳ, 1980, 4, էջ 119):

Գործածական են նաև աղաչում եմ շնորհել, տրամադրվում է հասկանալ, աղերսում էր չնիշել և այլն: Երբեմն նման կառույցներում անորոշ դերբայի փոխարեն կիրառվում է տվյալ բայի խոնարհված ձևը ցանկացած դեմքով, որը կարող է դիմային համաձայնության մեջ լինել եղանակիչ բայի հետ: Այսպես՝ — ինչորում եմ՝ ինձ ճիշտ հասկանալ (Գ, 1978, 9, էջ 5): Այստեղ առաջին դեմքի բայածեի հետ (խնդրում եմ) կիրառվել է երկրորդ դեմքի բայածեք (հասկանալ):

5. Բայեր, որոնք արտահայտում են հոգեվիճակ, զգացմունք և այլն: Այդպիսիք են՝ վախենալ, սարսափել, սոսկալ, սիրել և այլն: Նկատենք, որ մատնանշված բայերի կապակցելիությունը մտածական բայերի անո-

րոշ դերբայի հետ բավականին սահմանափակ է: Առավել մեծ կապակցելիությունը ենթադրված առաջին և երկրորդ խմբերում ընդգծված բոլոր բայերը և երրորդ խմբից մի քանիսը: Դրանք, ինչպես նշվել է, արտահայտում են գործողության սկիզբը, ընթացքը, ավարտը, այլև մի բան անելու ցանկություն, կարողություն, ձգտում, վճիռ և այլն:

Հոգեվիճակ, զգացմունք և այլ իմաստ արտահայտող բայերը, հարադրվելով մտածական բայերի անորոշ դերբայի հետ, կազմում են բայական բաղադրյալ ստորոգյալ: Առաջին անգամ նա վախեցավ վերհիշել այն բոլոր կրքոտ վեճերը, որոնք.... (Ա. Սեկ., ՈւլՄ, էջ 545):

Գործածական են վախենում եմ մոռանալ (մտածել, խորհել, հասկանալ, ըմբռնել, ճանաչել, հիշել), սարսափում եմ հիշել (վերհիշել, մտածել, հասկանալ, պատկերացնել), սիրում է մտածել (խորհել, հասկանալ, հիշել, ճանաչել և այլն):

Բաղադրյալ ստորոգյալ են կազմում հնարավորություն, կարելիություն, պարտավորություն, կարողություն, անհրաժեշտություն և այլ նշանակություն արտահայտող պետք է, պիտի, անհրաժեշտ է, հարկավոր է, կարող է, անկարող է, կարելի է, անկարելի է, հնարավոր է, անհնար է, անհնարին է, դժվար է, հեշտ է, պատրաստ է, ապարդյուն է, արժեք և այլ ձևերն ու կապակցությունները մտածական բայերի անորոշ դերբայի հետ: Սրանք, որ հիմնականում կազմված են ածականից, մակբայից կամ մի այլ խոսքի մասից և բայական հանգույցից (բացառությամբ արժեք և պիտի ձևերից, որոնք չեն հարադրված հանգույցին), հարադրվելով մտածական բայերի անորոշ դերբային, դրսևորում են մեկ գործողություն՝ հանդես գալով որպես բաղադրյալ ստորոգյալ անդամ նախադասությունների համար: Այդ կապակցություններում դարձյալ անորոշ դերբայով արտահայտվում է բուն գործողությունը, իսկ նրան հարադրող մասը երանգավորող, եղանակավորող իմաստ է հաղորդում գործողությանը, կրելով եղանակավորող բայաձևի գործառույթ: Նկատենք, որ բավականին մեծ է նշված բառերի կամ բայաձևերի կապակցելիությունը մտածական բայերի անորոշ դերբայի հետ, բացառությամբ պատրաստ է, ապարդյուն է և այլ կապակցությունների, որոնք մյուսների համեմատությամբ պակաս արդյունավետ են: Անհրաժեշտ է ընդգծել, որ վերը նշված եղանակով կազմված բաղադրյալ ստորոգյալների դրսևորած գործողությունը կապվում է ոչ թե որևէ դեմքի հետ, այլ վերաբերում է ընդհանուրին: Իսկ դա պայմանավորված է նրանով, որ բաղադրյալ ստորոգյալի առաջին բաղադրիչը բայ չլինելու պատճառով գուրկ է դիմային հատկանիշից, և թեև հանգույցը կիրառվում է միայն երրորդ դեմքով, բայց ամբողջ կապակցությունը դիմային որոշակիություն չունի և հավասարապես կարող է վերաբերել թե՛ երրորդ և թե՛ մյուս դեմքերին: Հնարավոր

է հաճաշել, կարելի է կռահել և նման կապակցութիւններում գործողութիւնը որեւէ կոնկրետ դեմքի հետ չի կապւում, այն հավասարապէս կարող է վերաբերել թե՛ առաջին, թե՛ երկրորդ, թե՛ երրորդ դեմքերին: Օրինակներ բաղադրյալ ստորոգյալների կիրառութիւնների՝ կազմված եղանակավորող իմաստ արտահայտող որեւէ բառով, բայական հանգույցով և մտածական բայերի անորոշ դերբայով: Մի՞թե առանց զարհուրանքի նրանք կարող են նույնիսկ մտածել այդպիսի բաներ (Ն-Դ, 2, էջ 198): Ոչ ոք չէր կարող գուշակել, թե ինչ է սպառնում մեզ շարությամբ լի այս անապատում (ՍԽ, ՄՍ, էջ 510): Դժվար չէր իմանալ, որ անտառում տեսած աղջկա անունը Խոնարհ էր (ԱՔ, Երկ., էջ 122): Նրա անշարժ, մի թեթեւ գունատ դեմքից ոչինչ չէր կարելի կռահել (ՍԽ, ՄՍ, էջ 124): Նրան լիովին կարելի է հասկանալ (Գ, 1979, 12, էջ 2): Հարկավոր է մտածել նաև մարդկանց գեղեցկության, բնության հետ շփվելու մասին (Գ, 1979, 10, էջ 81): Այս ամենի մասին նույնիսկ շարժեք մտածել (Ա. Սեկ., ՈՎՄ, էջ 148):

Երբեմն մտածական բայերի անորոշ դերբայի կամ եղանակային ձևի հետ կապակցվում են ոչ միայն պետք է, պիտի եղանակիչները, այլ դրանց հետ միասին բայի դերբայական կամ եղանակային ձևեր, որոնք միասին առնված բաղադրյալ ստորոգյալ են կազմում. օրինակ՝ Բնության գիրքն էլ պետք է կարդալ իմանա (ՎԱ, ՍԱ, էջ 26): —Մեզանում ամեն ոք պետք է կովել, դիմանալ իմանա (ՍԽ, ՄՍ, էջ 259): Մենք պետք է հայերեն մտածել սովորեն (ԱԶ, ՆՆԺ, էջ 76): Մտածական բայերից մի քանիսը, հատկապես՝ մտածել, գիտենալ և այլն բայական բաղադրյալ ստորոգյալի կազմությանը մասնակցում են, իբրև խոնարհված բայաձևեր, հարադրվելով անորոշ դերբային: Այդ դեպքում վերը թվարկված բայախմբերի նման մի տեսակ եղանակավորվում են գործողութիւնը՝ հանդես գալով եղանակավորող գործառութիւնով, իսկ անորոշ դերբայով դրսևորվում է բուն գործողութիւնը: Օրինակ՝ Այժմ Միր Բաշիրը մտածում էր գրավել նաև Պարսկաստանի հյուսիսային նահանգները (ՍԽ, ՄՍ, էջ 346): Տանտերը չմտածեց էլ որեւէ խոսքով հանգստացնել նրան (Ա. Սեկ., ՈՎՄ, էջ 393): Նա մտածեց կշտամբել մոր համակրութիւնը դեպի Վաղեսի վարժունքը (Բ, ԵԺ, 7, էջ 49): Գոհարը գիտեք չըբախցնել ամենափոքր ուրախութիւնն անգամ (ՍԽ, ՄՍ, էջ 179): Նրանք գիտեին սիրել ու առել, Գիտեին խորհել ու համեմատել (ՊՍ, 4, էջ 180):

Երբեմն մտածական բայը հարադրվում է հարադրական բայի անորոշ դերբային: Այդ դեպքում ամբողջը միասին մեկ գործողութիւն է արտահայտում՝ հանդես գալով որպէս բայական բաղադրյալ ստորոգյալ. օրինակ՝ Նա մտածում էր կանչել տալ ներքինապետին և նրանից հար-

ցովորձ անել (Բ, ԵԺ, 7, էջ 120): Նա մտածեց փոքր ինչ զգալ տալ սպա-
րապետին (Ն. տ., էջ 388): Հուսահատությունից մտածում էր վերջ տալ
իր կյանքին (ՍԽ, ՄՍ, էջ 217):

6. ՄՏԱԾԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ՝ ՄԱԿՐԱՅ, ԱԾԱԿԱՆ ԵՎ ԴԵՐԱՆՈՒՆ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

Ժամանակակից գրական հայերենում մտածական բայերի լրացման
դերում կարող են կիրառվել նաև մակբայը, ածականն ու դերանունը՝ կա-
տարելով պարագայական զանազան պաշտոններ:

ա) Մակբայն իբրև լրացում

Մակբայի իմաստային բոլոր խմբերը կապակցվում են մտածական
բայերին առանց խտրության, սակայն բոլոր մակբայները բայի հետ
կապակցելիության տեսակետից միեւնույն արդյունավետությունն ու ազ-
տիվությունը չեն ցուցաբերում: Որոշ մակբայներ ավելի մեծ կապակցե-
լիությամբ են օժտված, քան մյուսները:

Մտածական բայերի հետ կապակցության ավելի մեծ ակտիվու-
թյուն են հանդես բերում ժամանակի մակբայները (իհարկե, ոչ բոլորը),
անհամեմատ փոքր է ընդհանրական և տեղի մակբայների կապակցելիու-
թյունը (կան որոշ բացառություններ), իսկ ձևի ու չափի մակբայների
կապակցելիությունը միջին դիրք է գրավում այդ երկուսի համեմատու-
թյամբ:

Ժամանակի մակբայներից մտածական բայերի հետ կապակցելիու-
թյան մեծ ակտիվություն են հանդես բերում հատկապես հետևյալները.
միշտ, այժմ, հիմա, շուտ, վերջում, վերջես, հախօրոք, դեռ, դեռևս,
տակավի՛ն, ի վերջո, ուշ, հետո, վաղուց և այլն: Ցածր է հար, հավետ,
առհավետ, հավիտյան, ընդմիշտ, հնում, գիշերով, ցերեկով, ամսեամիս,
բոպե առ բոպե, օրնիբուն, առաջուց, հնուց, այնուհետև, ժամանակով,
առժամանակ, ցմա՛հ և այլն մակբայների կապակցությունը: Ընդ որում,
առավել, ցածր է հար, հավետ, առհավետ, հավիտյան, օրնիբուն և այլ
մակբայների կապակցելիությունը, որոշ ակտիվություն ունեն այնուհետև,
առաջուց և այլ մակբայներ, որոնք կարող են կապակցվել մտածական
բոլոր բայերի հետ, ի տարբերություն հար-ի, հավետ-ի, առհավետ-ի,
հավիտյան-ի, օրնիբուն-ի և այլն, որոնց կապակցելիությունը չի տա-
րածվում ժամանակի բոլոր մակբայների վրա (կան չնչին բացառություն-
ներ):

Քննենք ակտիվությամբ օժտված մակբայների կապակցելիությունը:

Միշտ մակբայը կապակցություն է կազմում մտածական գրեթե բո-
լոր բայերի հետ, և այդ կապակցությունները մեծ տարածում ունեն գրա-

կան լեզվի գրեթե բոլոր ոճերում: Այսպես՝ միշտ գիտակցել (գուշակել, գլխի ընկնել, կռահել, հասկանալ, ըմբռնել, ընկալել, իմանալ, զգալ, խորհել, մտածել, մտորել, մտմտալ, միտք անել, հիշել, մոռանալ, ճանաչել, երևակայել, կարծել և այլն):

Այժմ-ով կազմված կապակցությունները ևս տարածված են գրական հայերենում: Այսպես՝

• Այժմ գիտակցել (գուշակել, գլխի ընկնել, կռահել, հասկանալ, ըմբռնել, ընկալել, խորհել, մտածել, մտորել, միտք անել, հիշել, մոռանալ, ճանաչել, դատել, զգալ և այլն):

Հիմա-ով են կազմված հետևյալ կապակցությունները՝

Հիմա գիտակցել (գուշակել, կռահել, գլխի ընկնել, հասկանալ, ըմբռնել, ընկալել, զգալ, դատել, խորհել, մտածել, մտորել, հիշել, մոռանալ և այլն):

Ակտիվություն են ցուցաբերում նաև վերջերս, վերջում, շուտ, ուշ, հետո, նախօրոք, նախապես և այլ մակբայներ, որոնցով կազմված կապակցությունները բավական տարածում ունեն գրական լեզվում: Այսպես՝

Վերջերս գիտակցել (գուշակել, գլխի ընկնել, կռահել, հասկանալ, ըմբռնել, ընկալել, դատել, զգալ, իմանալ, մտածել, մտորել, միտք անել, խորհել, հիշել, մոռանալ, ճանաչել և այլն):

Շուտ գիտակցել (գուշակել, գլխի ընկնել, կռահել, հասկանալ, ըմբռնել, ընկալել, զգալ, դատել, իմանալ, մտածել, հիշել, մոռանալ, ճանաչել և այլն):

Վերջում գիտակցել (գուշակել, գլխի ընկնել, կռահել, իմանալ, զգալ, ըմբռնել, ընկալել, հասկանալ, մտածել, խորհել, մտորել, հիշել, ճանաչել, մոռանալ և այլն):

Ուշ գիտակցել (գուշակել, գլխի ընկնել, կռահել, հասկանալ, իմանալ, ճանաչել, խորհել, մտածել, մտորել, հիշել, մոռանալ, ըմբռնել, ընկալել, զգալ և այլն):

Հետո գիտակցել (գուշակել, կռահել, գլխի ընկնել, հասկանալ, ըմբռնել, զգալ, ճանաչել, իմանալ, մտածել, խորհել, հիշել, մոռանալ և այլն):

Նախօրոք գիտակցել (կռահել, գլխի ընկնել, հասկանալ, իմանալ, ըմբռնել, զգալ, դատել, մտածել և այլն):

Նախապես գիտակցել (կռահել, գլխի ընկնել, հասկանալ, ըմբռնել, զգալ, ճանաչել, մտածել և այլն):

Դեռևս, տակավին և այլ մակբայների հետ մտածական բայերը ավելի հակված են ժխտական, քան դրական ձևով կիրառվելուն: Ինչպես՝ դեռևս, տակավին (չզգալ, չըմբռնել, չկռահել, չհասկանալ, չմոռանալ, չիմանալ, չճանաչել և այլն):

Մտածական բայերի հետ կապակցություն ստեղծելու մեջ զգալի ակտիվությամբ են օժտված ձևի ու շարք մակբայներ, հատկապես կամաց-կամաց, արագ, արագ-արագ, արագորեն, դանդաղ, դանդաղորեն, հանկարծ, միանգամից, աստիճանաբար, մեն-մենակ, միասին, լրջորեն, խորապես, հաճախ, գերազանցապես, հիմնականում, ամբողջովին, լիովին, ամենևին, քիչ-քիչ, ավելի, նորից, դարձյալ, կրկին և այլն։ Սրանց մի մասը ունի կապակցելիության որոշ սահմանափակություն, այսինքն՝ կապակցությունը չի տարածվում մտածական բոլոր բայերի վրա, իսկ մեծ մասամբ նրանք կարող են կապակցվել նշված խմբի գրեթե բոլոր բայերի հետ։

Այսպես՝ կամաց (կամաց-կամաց) գլխի ընկնել (կռահել, հասկանալ, ըմբռնել, մտածել, խորհել, մոռանալ, հիշել, ճանաչել և այլն)։

Արագ (արագ-արագ, արագորեն) մտածել (կռահել, ըմբռնել, գլխի ընկնել, մոռանալ, հիշել, ճանաչել և այլն)։

Դանդաղ (դանդաղորեն) մտածել (խորհել, մտորել, միտք անել, գուշակել, գլխի ընկնել, ըմբռնել, հասկանալ, հիշել, մոռանալ և այլն)։

Հանկարծ (միանգամից, աստիճանաբար) գիտակցել (գլխի ընկնել, կռահել, գուշակել, իմանալ, զգալ, ըմբռնել, հասկանալ, հիշել, մոռանալ, ճանաչել և այլն)։

Մեն-մենակ (միասին) գուշակել (դատել, խորհել, մտածել և այլն)։

Լրջորեն գիտակցել (դատել, ըմբռնել, զգալ, մտածել, խորհել և այլն)։

Հաճախ գիտակցել (գլխի ընկնել, գուշակել, կռահել, դատել, զգալ, ըմբռնել, խորհել, մտածել, հասկանալ, մոռանալ, հիշել և այլն)։

Գերազանցապես գիտակցել (կռահել, գուշակել, իմանալ, զգալ, խորհել, մտածել, մտորել, միտք անել, հիշել, մոռանալ և այլն)։

Հիմնականում գիտակցել (գուշակել, գլխի ընկնել, կռահել, դատել, զգալ, ըմբռնել, ընկալել, խորհել, մտածել, մտորել, միտք անել, հիշել, մոռանալ, ճանաչել և այլն)։

Ամբողջովին (լիովին) գիտակցել (գուշակել, կռահել, գլխի ընկնել, զգալ, ըմբռնել, ընկալել, հասկանալ, իմանալ, ճանաչել և այլն)։

Քիչ-քիչ գիտակցել (գլխի ընկնել, կռահել, գուշակել, հասկանալ, զգալ, ըմբռնել, ընկալել, իմանալ, մտածել, խորհել, մտորել, միտք անել, մտապահել, հիշել, մոռանալ և այլն)։

Նորից (դարձյալ, կրկին) գիտակցել (կռահել, գուշակել, գլխի ընկնել, զգալ, ըմբռնել, իմանալ, հասկանալ, խորհել, մտածել, միտք անել, մտորել, ճանաչել, հիշել, մոռանալ և այլն)։

Ամենեին մակբայի հետ մտածական բայերը հիմնականում կիրառվում են ժխտական ձևով։ օրինակ՝ ամենևին չգիտակցել (գլխի չընկնել,

զգալ, ըմբռնել, ընկալել, շտորհել, շտածել, շտորել, հիշել, շոռանալ, հասկանալ, ճանաչել և այլն)։

Տեղի և ընդհանրական մակբայներից մտածական բայերի հետ կապակցություն են կազմում մի քանիսը. հատկապես ամենուր, ամենուրեք, առաջ, մեկ-մեկ, անընդհատ, անդադար, շարունակ և այլն։

Սրանց կապակցությունը նույնպես որոշ սահմանափակություն ունի. չի տարածվում նշված խմբի բոլոր բայերի վրա։ Օրինակ՝ ամենուրեք գիտակցել (գլխի ընկնել, կռահել, գուշակել, դատել, զգալ, ըմբռնել, խորհել, մտածել, մտորել, միտք անել, հասկանալ, հիշել, մոռանալ, ճանաչել և այլն)։

Առաջ գիտակցել (գլխի ընկնել, կռահել, գուշակել, իմանալ, զգալ, ըմբռնել, հասկանալ, մտածել, մտորել, միտք անել, խորհել, ճանաչել, հիշել, վերհիշել, մոռանալ, մտապահել, մտաբերել և այլն)։

Մեկ-մեկ գիտակցել (գլխի ընկնել, կռահել, գուշակել, զգալ, ըմբռնել, հասկանալ, հիշել, վերհիշել, մտաբերել, մտապահել, մտածել, խորհել, միտք անել, մտորել, ճանաչել և այլն)։

Անընդհատ գիտակցել (խորհել, մտածել, մտորել, միտք անել, հիշել, վերհիշել, մտապահել, մտապատկերել, մտաբերել, մոռանալ, զգալ, ըմբռնել և այլն)։

Անդադար խորհել (մտածել, մտորել, միտք անել, հիշել, վերհիշել, մտաբերել, մտապահել և այլն)։

Շարունակ խորհել (մտածել, մտորել, մտմտալ, միտք անել, հիշել, վերհիշել, մոռանալ, զգալ և այլն)։

Նշված խմբերի մնացած մակբայները կամ բոլորովին կապակցության մեջ չեն մտնում մտածական բայերի հետ կամ էլ չափազանց փոքր է նրանց կապակցելիության գործակիցը։ Բերենք մտածական բայերի՝ մակբայ լրացումների բնագրային մի քանի օրինակներ։ Նա անձամբ հաճախում էր մի քանի ընտանիքների (ԱԿ. Օտ., 2, էջ 449)։ Արփիկը կամաց-կամաց հաճախում էր տխրությունը (Ա. Սեկ., ՈՎՄ, էջ 105)։ Մենք ձեզ միշտ հիշում ենք (Գ, 1980, 3, էջ 11)։ Ճանապարհին անընդհատ մտմտում էր ծերունին (Գ, 1976, էջ 11)։ Հետո մտածեմ մյուս այրերին հասնելու մասին (ՎԱ, ՍԱ, էջ 205)։ Կողքից դիտողը կարող էր անմիջապես կռահել, որ ... (ՊԶ, ԱԵ, էջ 31)։ Վաղուց, վաղուց մտորում է իմ մեջ մի անհուն ցանկություն (ԵԶ, ԸԵ, էջ 298)։ Բայց չի գիտակցվել խորապես (ՊՍ, 5, էջ 129)։ Եվ անմիջապես հասկացավ աղջկան սպառնացող վտանգը (ԱՎ., 11. 2. 1981)։ Բայց ամենեին էլ ինձ չեն հասկանում (Գ, 1979, 12, էջ 3)։ Կարելի է, արդյոք, լիովին հասկանալ գրող Դիկկենսին (Գ, 1979, 12, էջ 2)։

բ) Ածականն իբրև լրացում

Մտածական բայերի լրացման դերում հանդես են գալիս նաև ածականները: Կապակցություն են ստեղծում միայն որակական ածականները և այն էլ ոչ բոլորը: Որակական ածականների մեծ մասը մտածական բայերի լրացում չի դառնում, մի բան, որ պայմանավորված է մի կողմից ածականների բուն նշանակությամբ, մյուս կողմից՝ այդ բայերի դրսևորած իմաստներով: Նկատենք նաև, որ որակական որոշ ածականներ կարող են կապակցվել մտածական գրեթե բոլոր բայերի հետ, իսկ մի շարք ածականների կապակցությունը տարածվում է միայն մի քանի բայերի վրա, այսինքն ընդգրկում է սահմանափակ թվով բայեր:

Կապակցության մեջ ակտիվություն են ցուցաբերում հատկապես լավ, վատ, ճիշտ, սխալ, դժվար, հեշտ և այլ ածականներ, որոնցից առաջին երկուսը՝ լավ-ը և վատ-ը կարող են լրացում դառնալ մտածական գրեթե բոլոր բայերի համար, իսկ մյուսների կապակցությունը որոշ սահմանափակություն ունի և չի ընդգրկում այդ խմբի բոլոր բայերը: Այսպես՝ լավ (վատ) գիտակցել (գուշակել, կռահել, գլխի ընկնել, դատել, իմանալ, զգալ, ըմբռնել, ընկալել, հասկանալ, հիշել, վերհիշել, մտապահել, մտաբերել, ճանաչել, մտածել, խորհել, մտորել և այլն)։

Ճիշտ (սխալ) գուշակել (կռահել, գլխի ընկնել, դատել, իմանալ, զգալ, ըմբռնել, ընկալել, հասկանալ, մտածել, խորհել, մտապահել, մտաբերել և այլն)։

Դժվար (հեշտ) գուշակել (գլխի ընկնել, կռահել, հասկանալ, ըմբռնել, ընկալել, իմանալ, զգալ, ճանաչել, հիշել, մոռանալ, մտապահել, մտաբերել և այլն)։

Կապակցություն են ստեղծվում նաև ճշգրիտ, պարզ, պարզորոշ, հաստատ, երկար, լուռ, տխուր, խոր և այլ ածականներով, որոնց կապակցելիությունը այնքան էլ մեծ չէ, հատկապես փոքր է խոր, լուռ, տրտուր, հաստատ և այլ ածականների կապակցելիության գործակիցը:

Այսպես՝ ճշգրիտ գուշակել (կռահել, գլխի ընկնել, հասկանալ, դատել, իմանալ, ըմբռնել, հիշել և այլն)։

Պարզ հասկանալ (ըմբռնել, ընկալել, հիշել, վերհիշել և այլն)։

Պարզորոշ ըմբռնել (ընկալել, իմանալ, հասկանալ և այլն)։

Հաստատ իմանալ (ճանաչել, հիշել, հասկանալ և այլն)։

Լուռ (երկար, խոր, տխուր) մտածել (միտք անել, խորհել, խորհրդածել, մտորել և այլն)։

Կան ոչ քիչ թվով ածականներ, որոնք կարող են կապակցություն կազմել միայն մի երկու բայերի հետ: Այսպես՝ քաջ գիտակցել (ըմբռնել),

կարճ մտածել (խորհել), աղոտ հիշել (վերհիշել, զգալ), որոշակի իմանալ (ըմբռնել) և այլն:

Բերենք մտածական բայերի՝ ածական լրացման բնագրային մի քանի օրինակներ. Ոչ ոք գյուղի հանդն ու սարը Բաղուց լավ չգիտեք (ԱԲ, Երկ., էջ 8): Բայց չէ, սրանք լավ գիտեին իրար ինչ են ասում, իրար լավ են ճանաչում, կոշիկի գույնից էլ կկոահեն՝ ո՞վ ինչ է (Գ, 1979, 12, էջ 30): Իմ մասին շատ վատ են մտածում (ԳՍԹ, 1, էջ 411): Ես կաշխատեմ ճշգրիտ իմանալ նրա մտքերը (ՊՁ, ԱԵ, էջ 79): Բայց Արմենը գոհ մտածում էր (ՎԱ, ՍԱ, էջ 22): Պարզորոշ չենք ըմբռնում ժամանակի ընթացքում նրանցում ծագող հակասությունների էությունը (ՍԱ, 1979, 11, էջ 45):

Ինչպես նշել ենք, որական ոչ բոլոր ածականներն են մասնակցում մտածական բայերի հետ կապակցություն ստեղծելուն: Կապակցվում են հատկապես այն ածականները, որոնց համար սովորական է նաև մակբայական կիրառությունը, այսինքն՝ այն ածականներն, որոնք ընդունակ են արտահայտելու նաև հատկանիշի հատկանիշ, իսկ դրանց քանակը շատ մեծ է: Բայի վրա դրվող ածականները չեն զրկվում իրենց խոսքիմաստային բուն նշանակությունից և չեն անցնում մակբայների շարքը: Նրանք այդ դեպքում ձեռք են բերում մի նոր գործառույթ՝ մակբայական կիրառություն՝ չկորցնելով ածականի խոսքիմաստային իմաստը, չդադարելով ածական խոսքի մաս լինելուց:

գ) 'Իերանունն իբրև լրացում

Մտածական բայերի լրացում են դառնում նաև դերանունները: Կապակցություն են կազմում հատկապես ցուցական և հարցահարաբերական դերանունները և այն էլ ոչ բոլորը, այլ միայն նրանց մի մասը: Իբրև օրենք, անձնական դերանունները չեն կապակցվում բայերի, այդ թվում նաև մտածականների հետ, քանի որ ցույց են տալիս անձ: Ցուցականներից անձ կամ առարկա մատնանշողները, այլև որոշյալ ու անորոշ այն դերանունները, որոնք նույնպես անձի իմաստ ունեն, ևս չեն կարող բայի լրացում դառնալ: Կապակցություն են կազմում ցուցական այն դերանունները, որոնք արտահայտում են առարկայի (այսքան, այդքան, այնքան, այսչափ, այդչափ, այնչափ) կամ գործողության (այսպես, այդպես, այնպես, այստեղ, այդտեղ, այնտեղ) հատկանիշ: Ընդ որում, այսքան, այդքան, այնքան դերանունները կատարում են չափի, այստեղ, այդտեղ, այնտեղ դերանունները՝ տեղի, իսկ այսպես-ը, այդպես-ը, այնպես-ը՝ ձևի պարագայի պաշտոն: Կապակցության տեսակետից ավելի մեծ ակտիվություն ունեն այսպես, այդպես, այնպես դերանունները:

Սրինակ՝ այսպես (այդպես, այնպես) գուշակել (գլխի ընկնել, կռահել, գիտենալ, դատել, հասկանալ, ըմբռնել, ընկալել, հիշել, վերհիշել, մտապահել, մտաբերել, մտածել, մտորել, միտք անել, խորհել և այլն)։

Այսֆան (այդֆան, այնֆան) իմանալ (հասկանալ, գիտենալ, հիշել, մտածել, խորհել, մտորել, միտք անել և այլն)։

Այսչափ (այդչափ, այնչափ) գլխի ընկնել (իմանալ, զգալ, հասկանալ, ըմբռնել, խորհել, մտածել, միտք անել, մտորել, հիշել, վերհիշել, մտապահել և այլն)։

Այստեղ (այդտեղ, այնտեղ) իմանալ (զգալ, կռահել, գլխի ընկնել, մտածել, խորհել, հիշել, մոռանալ և այլն)։

Մտածական որոշ բայերի հետ կապակցվելիս այսպես, այդպես, այնպես դերանունները երբեմն ցույց են տալիս ոչ միայն գործողության կատարման ձևը կամ եղանակը, այլ գործողության արդյունքը, նրա բովանդակությունը։ Այդ դեպքում նախ ընդգծվում, շեշտվում է սովյալ գործողության բովանդակությունը, ապա դրա հետ միաժամանակ նրա հատկանիշը, և գործողության կատարման եղանակը երկրորդական պլանի վրա է մղվում, առաջնային նշանակություն է ստանում նրա հետևանքը, արդյունքը կամ բովանդակությունը։ Այսպես՝ — Ես ձեր ասածներից այնպես եմ հասկանում, որ... (ԱԿ, Օտ., 2, էջ 33)։ Այս նախադասության մեջ այնպես-ը ոչ այնքան հասկանալու ձևը կամ եղանակն է նշում, որքան նրա բովանդակությունը կամ արդյունքը՝ հասկանալ այն։

Ս. Աբրահամյանը նուրբ դիտողություն է անում այդ կապակցության մասին։ Նա գրում է. «Այսպես, այդպես, այնպես դերանունները կարծես, ասել, խոսել, մտածել, խորհել, զգալ, հասկանալ, ըմբռնել և նման բաների հետ գործածվելիս հաճախ ցույց են տալիս ոչ թե գործողության ձևը, նրա կատարման եղանակը, (ինչպես սովորաբար), այլ գործողության արդյունքը, այսպես ասած, արտադրանքը և միաժամանակ սրա հատկանիշը»⁵⁰։

Ս. Աբրահամյանը բերում է համապատասխան օրինակներ ու հավաստում իր միտքը (ես այդպես էլ կարծում էի... տղամարդը չպետք է օգտվի կնոջ աշխատանքից։ Անվայել բան է։ Հա՞ այդպես ես մտածում եմ։ — Հենց այդպես)։ Այստեղ այդպես դերանունը ոչ թե կարծել, մտածել, գործողությունների ձևն է ցույց տալիս, այլ հենց կարծածը, մտածածը, սրանց բովանդակությունը և վերջինիս հատկանիշը հանձին այդ բովանդակության, բնույթի⁵¹։

Ս. Աբրահամյանն իր տեսակետը հիմնավորելու համար այլ փաստարկ էլ է բերում։ Նման դեպքերում, նշում է հեղինակը, այդ դերա-

50 Ս. Աբրահամյան, Արդի հայերենի դերանունները, 1956, էջ 303։

51 Նույն տեղում, էջ 304։

նունների համար կարելի է տալ ոչ միայն ինչպե՞ս, այլ ի՞նչ հարցը ի՞նչ են կարծում, ի՞նչ են մտածում, ասում և այլն⁵²:

Մտածական բայերի լրացման գործառույթ ունեն նաև հարցահարաբերական որոշ դերանուններ, հատկապես նրանք, որոնք գործողության հատկանիշ են արտահայտում: Այդպիսիք են՝ ինչու, ոնց, ինչպես, երբ, որտեղ, ինչքան, որքան, երբեք, երբեիցե և այլն:

Այն դերանունները, որոնք հոլովվում են, լրացում կարող են դառնալ նաև հոլովված ձևով (որտեղ-որտեղից, երբ-երբվանից և այլն): Երբեք, երբեիցե անորոշ դերանունները սովորաբար կիրառվում են հարցական, երբեմն էլ նաև բացականչական բնույթի նախադասություններում, իսկ հաստատական նախադասության մեջ հանդես չեն գալիս: Դեռ ավելին, նրանք չեն կարող կիրառվել հրամայական և ըղձական եղանակների, այլև սահմանականի ներկա ժամանակի բայերի հետ, քանի որ դերանունների նշանակությունը անորոշ է, իսկ թվարկված եղանակների ժամանակների իմաստը, հատկապես սահմանականի ներկայինը որոշակի է: Սակայն երբ սահմանական եղանակի բայաձևը կոնկրետ ժամանակների հետ չի կապվում, այլ ընդհանուր ժամանակակիտ է նշում, նրա հետ կարող են հանդես գալ երբեք, երբեիցե դերանունները: Այսպես՝ սովորական են երբեք մտածում ես (մտածելու ես, մտածել ես) այդ մասին: Երբեիցե մտածում ես (մտածելու ես, մտածել ես) այդ մասին:

Մտածական բայերի հետ, ինչպես արդեն նշվել է, կապակցություն են կազմում երբ, ինչու, ինչպես, որքան, ինչքան, որտեղ, երբեք, երբեիցե և այլ դերանուններ, որոնք կապակցելիության տեսակետից բավական ակտիվություն են ցուցաբերում: Այսպես՝

Ինչու մտածել (խորհել, միտք անել, մտորել, իմանալ, գիտենալ, հասկանալ, ըմբռնել, հիշել, վերհիշել, մոռանալ և այլն)։

Ինչպես մոռանալ (կռահել, գուշակել, զգալ, իմանալ, մտածել, խորհել, միտք անել, մտորել, ընկալել, հիշել, վերհիշել, մտապահել, մտաբերել, մոռանալ, ճանաչել և այլն)։

Որքան մտածել (խորհել, մտորել, միտք անել, հասկանալ, ճանաչել, գլխի ընկնել, կռահել, գուշակել, հիշել, վերհիշել, մտապահել, մտաբերել, մոռանալ և այլն)։

Որտեղ մտածել (խորհել, խորհրդածել, իմանալ, ճանաչել, հիշել, մոռանալ, հասկանալ, կռահել, գլխի ընկնել և այլն)։

Երբ մտածել (խորհել, խորհրդածել, մտորել, միտք անել, գիտակցել, ճանաչել, իմանալ, հիշել, վերհիշել, մտապահել, մտաբերել, կռահել, գլխի ընկնել, գուշակել, հասկանալ, ըմբռնել, ընկալել և այլն)։

Երբեք (երբեիցե) մտածել (մտորել, միտք անել, խորհել, խորհրդա-

⁵² Նույն տեղում:

ծել, իմանալ, կռահել, գուշակել, գլխի ընկնել, գիտակցել, ըմբռնել, ընկալել, զգալ, հիշել, վերհիշել, մտապահել, մտաբերել, մոռանալ և այլն): Բեթենք մտածական բայերի՝ դերանուն լրացումների բնագրային օրինակներ. նստել այսպես միտք եմ անում (ՉՍ, ԾԺ, 2, էջ 239): Այդպես ենք խորհում մենք ևս (ՍԽ, ՄՍ, էջ 214): Ոչ ոք այդ տանը իրերի տեղն այնպես չգիտեր, ինչպես նա (ԳՍԹ, 1, էջ 158): Ախ, ինչպես, ո՞նց իմանաւ Արհամիւրքն այն օրերի (ՊՍ, 4, էջ 185): Ինչու՞ է ճիշտ անցածը (ՍԽ, ՄՍ, էջ 253): — Ինչ որ տեղից ես նախաշում (Ա. Սեկ., ՈՎՄ, էջ 98): — Իսկ դու որտեղի՞ց կռահեցիր (ն. տ., էջ 155): Մտածե՞լ ես երբևիցե, թե ինչու ոչ ոք այս երկրում մեծություն չի դառնում (ՊՁ, ԱԵ, էջ 88):

7. ՄՏԱԾԱԿԱՆ ԲԱՅԵՐՈՎ ԿԱԶՄՎԱԾ ԲԱԶՄԱՆԴԱՄ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գրական հայերենում զգալի տարածում ունեն մտածական բայերով ստեղծված բաղմանդամ բառակապակցությունները, որոնք հիմնականում առաջ են գալիս բառակապակցություն + մտածական բայ կաղապարով: Պատրաստի այս կամ այն կապակցությունը, միանալով մտածական բայերին, առաջ է բերում ավելի ծավալուն բառակապակցություն: Դրանք՝ պատրաստի կապակցությունները, մեծ մասամբ մակբայական, երբեմն էլ ածականական նշանակություն ունեն, որը և հնարավորություն է տալիս նրանց իբրև լրացում կիրառվելու մատնանշված բայերի հետ: Այսպես՝ այլ կերպ մտածել (խորհել, հասկանալ, ըմբռնել, ընկալել, զգալ և այլն): Այստեղ այլ կերպ կապակցությունը մակբայական նշանակություն ունի, որի շնորհիվ էլ ավելի ծավալուն բառակապակցություն է ստեղծել՝ դառնալով լրացում մտածել և թվարկված մյուս բայերի համար: Հինգ մատի պես նախաշել բառակապակցության մեջ առանձնանում է ճինգ մատի պես-ը, որը իբրև ինքնուրույն կապակցություն, դարձյալ մակբայական իմաստ ունի: Այն լրացնելով նախաշել բային՝ առաջ է բերել ավելի ծավալուն բառակապակցություն՝ ճինգ մատի պես նախաշել, ուր պատրաստի կապակցությունը՝ հինգ մատի պես, լրացման գործառութով է հանդես եկել մտածական նախաշել բայի համար: Այսպիսով, բաղմանդամ բառակապակցություններ են ստեղծվում մակբայական նշանակություն ունեցող պատրաստի այս կամ այն կապակցությունը կիրառելով իբրև լրացում մտածական բայերի համար: Այդ դեպքում փաստորեն մտածական բայերի լրացումը արտահայտվում է մեկից ավելի բառերի կապակցությամբ, որոնք թեև բառային մեկ միավորի արժեք չունեն, սակայն միասնաբար են կիրառվում իբրև լրացում: Զի բացառվում, որ նրանցից մի քանիսը ժամանակի ընթացքում վերածվեն բառային մեկ միավորի, բայց

այժմ դրանք սոսկ կապակցութիւն են՝ բառային մեկ առանձին միավորի արժեքից զուրկ։ Մտածական բայերի լրացման դերով հանդես եկող կապակցութիւնները կազմվում են տարբեր խոսքի մասային արժեք ունեցող բառերից։ Հատկապես տարածում ունեն հետեւյալները՝

1. Գոյականի բացառական հոլով + գոյականի ուղղական հոլովածե (առավոտից-երեկո),
2. Գոյականի բացառական հոլով + կապ + գոյականի ուղղական հոլովածե (առավոտից մինչև երեկո, երեկվանից մինչև այսօր),
3. Դերանուն + գոյական (այլ կերպ, ոչ մի կերպ, ուրիշ կերպ, ամբողջ գիշեր, ամբողջ օր, մի քանի օր, մի քանի րոպե),
4. Դերանուն + դերանուն։ Այդ դեպքում կամ անձնական դերանվան 3-րդ դեմքի ուղղական հոլովածեին կապակցվում է նույն դերանվան տրականը կամ էլ տրականին կապակցվում է տրականը (ինքն իրեն, իրեն-իրեն),
5. Դերանվան (նաև բայի անորոշ դերբայի) բացառական հոլով + մակբայ (ածական) (ամենից առաջ, ամենից հետո, բոլորից առաջ, բոլորից հետո, քեզնից առաջ, նրանից հետո, ամենից ճիշտ (սխալ, կարճ, դժվար), գրելուց հետո, հանգստանալուց առաջ),
6. Թվական + գոյականի ուղղական, բացառական կամ ներգոյական հոլով (մեկ ժամ, հինգ րոպե, տասը օր, երեք ամսում, երկու օրում, առաջին հայացքից),
7. Մակբայ + մակբայ (կապ) (մինչև հիմա, մինչև վերջ, շատ ուշ, շատ շուտ),
8. Այս (այդ, այն, առաջին, երկրորդ, երրորդ... վերջին, մեկ, երկու, երեք և այլն) + անգամ։ Օրինակ՝ այս անգամ, այդ անգամ, առաջին անգամ, երկրորդ անգամ, մեկ անգամ, տասն անգամ և այլն։ Մատնանշված կապակցութիւնները կարող են լրացում դառնալ մը-տածական բայերից շատերի համար։ Ընդ որում, եթե մի քանի կապակցութիւններ կարող են հանդես գալ մտածական գրեթե բոլոր բայերի հետ, ապա շատերի համար այդ հնարավորութիւնը սահմանափակ է։ Այսպես՝ այլ կերպ մտածել (խորհել, միտք անել, ըմբռնել, հիշել, հասկանալ, զգալ, ընկալել), ոչ մի կերպ չհասկանալ (չըմբռնել, չկռահել, չտեսնել, չհիշել, չզգալ, չլսել, չճանաչել), ինքն իրեն մտածել (խորհել, մտորել, միտք անել, մտմտալ), այս (այդ, այն, առաջին, վերջին, մեկ, երկու) անգամ տեսնել (լսել, շոշափել, գիտակցել, կռահել, ճանաչել, մտածել, ըմբռնել և այլն), շատ շուտ (ուշ) իմանալ (հասկանալ, ըմբռնել, ընկալել, ճանաչել, զգալ,

հիշել, մոռանալ, մտածել, գիտակցել և այլն), առաջնորդից մինչև երեկո մտածել (խորհել, հիշել, վերահիշել), հինգ բայն մտածել (խորհել, միտք անել), մինչև հիմա (մինչև վերջ) մտածել (միտք անել, խորհել, չհասկանալ, չկռահել, չիմանալ, չըմբռնել, չզգալ, չհիշել, չմոռանալ և այլն), ամենից (բոլորից) առաջ (հետո) իմանալ (կռահել, ճանաչել, հասկանալ, զգալ, մտածել, միտք անել, խորհել, հիշել, լսել, տեսնել), ամենից (բոլորից) ճիշտ (սխալ) իմանալ (մտածել, խորհել, կռահել, հասկանալ, ըմբռնել, ընկալել, ճանաչել, զգալ):

Այս վերջին օրինակներում լրացման գործառույթով հանդես է եկել ածականի գերադրական աստիճանը, որը վերլուծական կազմությամբ մի առանձին կապակցություն է՝ կազմված ամեն, բոլոր գերանունների բացառականի հարադրումով ածականի ուղիղ ձևին:

Բավարարվենք բնագրային մի քանի օրինակների ցուցադրումով. Ադամյանը այլ կերպ է հասկացել Համլետին (ՊՍ, 5, էջ 291): Եվ Թե-րեզը ոչ մի կերպ չի հասկանում, ինչից է, որ (Գ, 1978, 8, էջ 89): Այդ կսկիծն առաջին անգամ զգաց նա վաղ, մանուկ հասակում (ՆՁԶ, էջ 3): — Ոչ այդ բոլորի համար ես ուրիշ կերպ կմտածեի (Մուր., ԵԺ, 3, էջ 251): — Նա ինձից ու քեզից էլ լավ է իմանում (Ա. Սեկ., ՈՎՄ, էջ 118): — Ահսոս, որ մինչև հիմա չեմ ճանաչել քեզ (Ն. տ., էջ 166): Այդպիսի-ները մինչև վերջ չեն գիտակցում, չեն հասկանում, որ իրենց դիմաց մարդ է (Ավ., 15. 2. 1981): Բեկը բոլորին ճանաչում էր առաջին հա-յացքից (Սն, ՄՍ, էջ 117):

Մտածական բայերի լրացումը կարող է արտահայտվել գերբայա-կան դարձվածով, որը առանձին վերցրած մի կապակցություն է՝ ծա-վալուն կամ ոչ ծավալուն. օրինակ՝ Նա աչքերը գետնին հառած մտա-ծում էր (Մուր., ԵԺ, 3, էջ 472):

Խոտի վրա մեկնված՝ մտածում էր և տարբեր գույնավորություններ անում քրոջ մասին (ԳՍԹ, 1, էջ 220): Արմենը տեղում կանգնած մտածում էր (ՎԱ, ՍԱ, էջ 194):

Ինչպես տեսնում ենք, մտածական բայերով ստեղծված բազմա-ն-դամ բառակապակցությունները ակտիվ կիրառություն են ցուցաբերում գրական հայերենում:

ՀՈԳԵՎԻՃԱԿԱՅԻՆ ԲԱՅԵՐԻ ԽՆԴՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

1. ՀՈԳԵՎԻՃԱԿԱՅԻՆ ԲԱՅԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Հոգեվիճակային բայերը քանակապես գերազանցում են մտածական-բայերին: Նրանց քանակը հասնում է մոտ 150-ի: Հոգեվիճակային բա-

յերը հետաքրքիր են հատկապես իրենց դրսևորած նշանակությունների և խնդիրների ձևավորման տեսակետից: Այս բայերն ըստ գործողության բնույթի առանձին խմբերի շին բաժանվում: Նրանց դրսևորած գործողությունը հիմնականում բնորոշ է մարդուն՝ բանական էակին: Կան որոշ բայեր, որոնց գործողությունը կարող է տարածվել նաև կենդանիների վրա: Այսպես՝ գազազել, վախենալ, սարսափել կարող են ոչ միայն մարդիկ, այլև կենդանիների որոշ տեսակներ, իսկ այդ նշանակում է, որ այդ բայերի գործողությունը բնորոշ է թե՛ մարդուն և թե՛ կենդանիներին: Այդպիսի բայերը, սակայն, չենք առանձնացնում ու առանձին քննության չենք ենթարկում, որովհետև՝ ա) դրանց քանակը սահմանափակ է, բ) այդ բայերով արտահայտված գործողությունը առավել բնորոշ է մարդուն, գ) առանձնակի կարևորություն չեն ցուցաբերում խնդրառության մեջ:

Ըստ առարկայի կամ խնդրի նկատմամբ ունեցած հարաբերության կամ ավելի ճիշտ՝ խնդրառական հատկանիշի, հոգեվիճակային բայերը մտածական բայերի նման բաժանվում են երկու խմբի՝

ա) բայեր, որոնք կարող են գործածվել խնդիր-լրացում չպահանջելով,

բ) բայեր, որոնք պահանջում են խնդիր-լրացումներ, առանց որոնց նախադասությունը մի տեսակ անավարտ, ոչ ամբողջական, կիսատ ու թերի է լինում:

Առաջին խմբի բայերից են լալ, հեկեկալ, ֆնել, ծիծաղել, ժպտալ, գառաճել, պապաճովել, կարկամել, հեծկտալ, հեկեկալ, հորաճել, մրոայլվել, մրափել, ճնշել, նիրհել, ողբալ, սգալ, տխրել, տրամել և այլն: Այսպես՝ երեխան լալիս է (լաց է լինում, քնում է, ննջում է, ծիծաղում է),

մայրը հեկեկում է (ողբում է, սգում է, նիրհում է, հորանջում է), նա պապանծվեց (տխրեց, մռայլվեց, տրտմեց, կարկամեց, զառանցեց) և այլն:

Այս նախադասությունների խմաստը թերի կամ կիսատ չէ, և միայն ենթական բավական է, որ նախադասությունը լրիվ ու ամբողջական լինի, այսինքն՝ լրացումների առկայությունը կարևոր կամ անհրաժեշտ չէ նախադասության ամբողջականության համար:

Երկրորդ խմբի բայերից են սարսափել, վախենալ, գոհանալ, հպարտանալ, բարկանալ, զայրանալ, ջղայնանալ, դժգոհել, վրդովվել և այլն: Այսպես՝ մենք սարսափում ենք նրա տեսքից: Ուսուցիչը բարկանում է երեխայի վրա: Սովետական ժողովուրդը հպարտանում է իր զավակների մեծագործություններով: Մարդիկ գոհանում են իրենց վարձատրությամբ: Ոչ ոք չի դժգոհում իր վիճակից և այլն:

Հարկ է նշել, որ բայերի այս խմբավորումը զգալի չափով պայմանական է: Առաջին խմբի որոշ բայեր կարող են նաև խնդիր-լրացումներ պահանջել, որպեսզի նախադասությունն առավել ամբողջական ու ավարտուն լինի, իսկ երկրորդ խմբի մի շարք բայեր հաճախ կիրառվում են՝ լրացում չպահանջելով, առանց, սակայն, նախադասության կամ խոսքի ամբողջականության վրա աղդելու: Վերոհիշյալ դասակարգման պայմանականությունը պայմանավորված է նրանով, որ դասակարգման հիմքում դրված է բայերի առավել բնորոշ հատկանիշը, և անտեսված են ոչ էական հատկանիշները:

Ըստ իրենց դրսևորած նշանակությունների, հոգեվիճակային բայերը բաժանվում են մի քանի խմբերի:

Դրանք են՝

1. Բայեր, որոնք արտահայտում են վախ, երկյուղ. օրինակ՝ վախենալ, սարսափել, ահաբեկվել, երկյուղել, երկյուղ կրել, վեհերոտել, սահմեկել, սարսել, սոսկալ, զարհուրել, զարզանդվել, երկնչել, վախ զգալ, սարսափ զգալ, սիրտը դողալ, սիրտը ճաքել, լեղին պատռել, լեղին պատռվել, պոռշը ճաքել, դողալ (փոխ.) և այլն.

2. Բայեր, որոնք արտահայտում են բարկություն. օրինակ՝ բարկանալ, ջղայնանալ, դայրանալ, գաղաղել, կատաղել, նյարդայնանալ, ներվայնանալ, շարանալ, նեղանալ, մոլեգնել, հերսոտել, սրտմտալ և այլն.

3. Բայեր, որոնք արտահայտում են ուրախություն, ծիծաղ, վիշտ և այլն. օրինակ՝ ուրախանալ, ցնծալ, բերկրել, ծիծաղել, ժպտալ, հռհռալ, քրքջալ, խնդալ, շարախնդալ, կշկշալ, հրճվել, երջանկանալ, տխրել, թախծել, վշտանալ, տրտմել, մռայլվել, դառնանալ, տրտնջալ, սևակնել, դժգոհել և այլն.

4. Բայեր, որոնք արտահայտում են հուզմունք, վրդովմունք, տագնապ, մտահոգություն, հուսահատություն և այլն. օրինակ՝ հուզվել, վրդովվել, խռովվել, խոժոռվել, տաքնապել, տանջվել, տառապել, տվայտել, ընկճվել, ցնցվել, մտատանջվել, մտահոգվել, վհատվել, հուսահատվել, հուսադրվել, սրտնեղել, փշաքաղվել, անհանգստանալ, հիասթափվել, հալ ու մաշ լինել, սիրտը թրթռալ, բորբոքվել, եփվել (փոխ.) և այլն.

5. Բայեր, որոնք արտահայտում են հափշտակություն, գայթակղություն, ոգևորություն, ներշնչանք և այլն. օրինակ՝ հափշտակվել, կախարդվել, գերվել, հմայվել, հրապուրվել, զմայլվել, գայթակղվել, դյուլթվել, կլանվել, ներշնչվել, ոգևորվել, ոգեշնչվել, քաջալերվել, խանդավառվել, խրախուսվել, գրավվել (փոխ.), տարվել (փոխ.) և այլն.

6. Բայեր, որոնք արտահայտում են վարանում, շփոթմունք, ափսոսանք և այլն. օրինակ՝ վարանել, երկմտել, տատանվել, տարակուսել,

երկբայել, տատամսել, շփոթվել, շշկլել, շշկլվել, շվարել, շաղվել, մո-
լորվել, գլուխը կորցնել, զղջալ, ափսոսալ և այլն.

7. Բայեր, որոնք արտահայտում են խելագարություն, ցնորվածու-
թյուն և այլն. օրինակ՝ խելագարվել, ցնորվել, ցնդել, խենթանալ, գծվել,
զառանցել, հիմարանալ, անմտանալ, խենթանալ, ուշաթափվել, ուշքից
գնալ, նվաղել, խելքը թոցնել, խելքը կորցնել, խելքը ետ տալ և այլն.

8. Բայեր, որոնք արտահայտում են լաց, նիրհ, քուն և այլն. օրի-
նակ՝ լալ, լաց լինել, լացակումել, արտասվել, հառաչել, հեկեկալ, հեծ-
կըլտալ, հեծել, հեծեծել, սգալ, սուգ անել, կոծել, լաց ու կոծ անել,
ախ ու վախ անել, ողբալ, կսկծալ, մորմոքել, մղկտալ, սիրտը մղկտալ,
ննջել, նիրհել, հորանջել, անրջել, քնել, մրափել, արթնանալ, զարթնել,
սիրտը ճմլվել, փղձկալ և այլն.

9. Բայեր, որոնք արտահայտում են ձանձրույթ, զարմանք, կար-
կամություն և այլն. օրինակ՝ ձանձրանալ, տաղտկանալ, զարմանալ, ապ-
շել, կարկամել, պապանձվել, լալկել, լալկվել, համրանալ, լեզուն կապ-
վել, ընդդարմանալ, քարանալ (փոխ.) և այլն.

10. Բայեր, որոնք արտահայտում են հպարտություն, պարծանք և
այլն. օրինակ՝ հպարտանալ, հիանալ, սքանչանալ, պարծենալ, պան-
ծալ և այլն.

11. Բայեր, որոնք արտահայտում են մեծամտություն, լկտիություն,
երեսառածություն և այլն. օրինակ՝ մեծամտել, գոռոզանալ, հղփանալ,
շփանալ, շարամտել, լկտիանալ, լպիրշանալ, անառականալ, լկտվել,
օձանալ (փոխ.) և այլն.

12. Բայեր, որոնք արտահայտում են ցանկություն, տենչանք և այլն.
օրինակ՝ տենչալ, փափագել, ցանկանալ, տուփալ, տարփածել և այլն.

13. Բայեր, որոնք արտահայտում են զզվանք. օրինակ՝ զզվել, խոր-
շել, գարշել, նողկալ և այլն.

14. Բայեր, որոնք արտահայտում են ըմբոստություն. օրինակ՝ ըմ-
բոստանալ, ընդվզել, լարվել (փոխ.) և այլն:

Հարկ է նկատել, որ նշված խմբերը խստորեն սահմանադատված
չեն միմյանցից, ուստի և հնարավոր են որոշ տեղափոխություններ դը-
րանց միջև, մի բան, որ պայմանավորված է ամենից առաջ նրանով, որ
միշտ չէ, որ հնարավոր է եղել պահպանել բաժանման անդամների՝ միմ-
յանց բացառելու օրենքը, բացի դրանից, բայերի մի մասը բաղմիմաստ
է, որը և հնարավորություն է ընձեռում նրանց՝ մեկ իմաստով մտնելու
մեկ խմբի մեջ, մեկ ուրիշ իմաստով՝ մեկ այլ խմբի: Սակայն դրանք մեծ
քանակ չեն կազմում և, որ կարևոր է, պահպանում են իրենց առանձնա-
հատկությունը ու չեն խուլնդոտում ընդհանուր խնդրի լուսաբանմանը:
Անկախ նրանից, թե այդ բայերը որ խմբի մեջ են միավորված, ունեն

իրենց խնդրառական յուրահատկությունները, որոնք և բացահայտվում են քննության ընթացքում: Անհրաժեշտության դեպքում, իհարկե, տրվում են լրացուցիչ բացատրություններ:

Հոգեվիճակային բայերը, թեև ըստ լրացումների ձևավորման, առանձին խմբերի չեն բաժանվում, քանի որ բոլոր բայերի լրացումներն էլ կարող են ձևավորվել (իհարկե, ոչ միևնույն շափով) թե՛ հոլովաձևերով, թե՛ կապի ու կապվող բառի զուգորդմամբ, սակայն եթե մի շարք բայերի համար առավել բնորոշ ու տիպական են հոլովական լրացումները, ապա բազմաթիվ բայերի համար առավել հատկանշականը կապային խնդրառությունն է: Վերջապես կան նաև այնպիսի բայեր, որոնց լրացումները հավասարապես կարող են դրսևորվել թե՛ հոլովաձևերով, թե՛ կապով ու կապվող բառով: Այդ առումով հոգեվիճակային բայերի կազմում կարելի է առանձնացնել երեք խումբ.

ա) բայեր, որոնց համար առավել բնորոշ է հոլովական խնդրառությունը (որոշ դեպքերում սրանց լրացումները կարող են ստանալ նաև կապային ձևավորում).

բ) բայեր, որոնց լրացումները մեծ մասամբ ձևավորվում են կապի ու կապվող բառի զուգորդմամբ (չի բացառվում նաև սրանց հոլովական խնդրառությունը).

գ) բայեր, որոնց լրացումները հավասարապես կարող են ձևավորվել թե՛ հոլովաձևերով, և թե՛ կապի ու կապվող բառի զուգորդմամբ:

Բայերի այս խմբավորումը կատարելիս նկատի է առնվել նրանց առավել բնորոշ ու տիպական խնդրառությունը: Եթե տվյալ բայի համար առավել բնորոշ է հոլովական խնդրառությունը, ապա այն մտցվում է հոլովական խնդրառություն հանդես բերող բայերի շարքը, թեև նա կարող է երբեմն ստանալ նաև կապային լրացում: Իսկ այն բայերը, որոնց լրացումները հիմնականում ձևավորվում են կապերով, մտցվում են կապային խնդրառություն ունեցող բայերի կազմի մեջ, թեև նրանք կարող են նաև հոլովաձևերով արտահայտված լրացում ստանալ (իհարկե, ոչ կապի ու կապվող բառի զուգորդմամբ դրսևորված լրացումների շափ):

Հոլովական ձևավորում ունեցող լրացում են պահանջում հոգեվիճակային բայերի մի զգալի մասը, հատկապես հետևյալները՝ ահաբեկվել, գոռոզանալ, գայթակղվել, գերվել, գարշել, գոհանալ, գինովանալ, դժգոհել, երկյուղել, երկյուղ կրել, երկնչել, երջանկանալ, զզվել, զմայլվել, զարհուրել, զարթնել, զգաստանալ, ընկճվել, ընդդարմանալ, խորշել, խռովել, խրախուսել, խենթանալ, խոցվել, կլանվել, կախարդվել, կաշկանդվել, կսկծալ, հպարտանալ, հափշտակվել, հմայվել, հրապուրվել, հուսահատվել, հեծկլտալ, հիասթափվել, հիմարանալ, հարբել, հալ

ու մաշ լինել, ձանձրանալ, մոլորվել, մտառանջվել, մռայլվել, մղկտալ, նվաղել, ներշնչվել, շվարել, շփոթվել, շշկլել, շշկլվել, ոգեշնչվել, ոգեվորվել, պանծալ, պարծենալ, սարսափել, սարսռել, սահմոկել, սոսկալ, սսկվել, սրտապնդվել, սքանչանալ, սիրտը թրթռալ, սրտաճաք լինել, սթափվել, վախենալ, տաղտկանալ, տարվել (փոխ.), ցնծալ, ուշաթափվել, փոթորկվել (փոխ.), փշաքաղվել, քաշվել (փոխ.) և այլն:

Կապային խնդրառություն ցուցաբերող բայերը անհամեմատ քիչ են: Այդպիսիք են՝ բարկանալ, գազազել, դայրանալ, ընդվզել, ըմբոստանալ, լարվել (փոխ.), լցվել (փոխ.), խոժոռվել, կատաղել, շարանալ, ջղայնանալ, տատանվել, տապակվել (փոխ.), փրփրել (փոխ.) և այլն:

Ջգալի թիվ են կազմում այն բայերը, որոնց լրացումները կարող են ձևավորվել և՛ հոլովաձևերով, և՛ կապի ու կապվող բառի զուգորդմամբ: Այդպիսիք են՝ ամաշել, ապշել, արտասվել, գժվել, գրգռվել, եփվել (փոխ.), դարմանալ, դգացվել, թախծել, լալ, լաց լինել, խեղաճարվել, խեղացնորվել, խելքը թոցնել, հառաշել, հրճվել, հիանալ, հուզվել, հեկեկալ, մտահոգվել, նեղվել, նյարդայնանալ, ողբալ, սուգ անել, վրդովվել, վշտանալ, տառապել, տանջվել, տխրել, տաճնապել, տրտնջալ, ցավել, ցնորվել, ուրախանալ, ուշաթափվել. և այլն:

Հարկ է նկատել, որ այս խմբի բայերի մեծ մասը կարելի է տարբալուծել մյուս երկու խմբերի մեջ, քանի որ մի շարք բայեր ավելի շատ հոլովական, քան կապային խնդրառություն են ցուցաբերում, իսկ որոշ բայերի էլ ավելի շատ հատկանշական է կապային, քան հոլովական խնդրառությունը: Ստույգ վիճակագրության դեպքում, անշուշտ, մի շարք բայեր այս խմբից կանցնեն մյուսների մեջ, սակայն նման մոտեցում ցուցաբերելու անհրաժեշտություն չի զգացվում, քանի որ ուշադրությունը սեռեւելով առավել կարևոր ու հատկանշական էրեւութների արժեքավորման ու գնահատության վրա, կանտեսվեն մյուս կարգի երևույթները, որոնք այս դեպքում պակաս հետաքրքրություն չեն ներկայացնում: Անկախ այն բանից, թե որ խմբի մեջ է ընդգրկվել այս կամ այն բայը, ուսումնասիրության ընթացքում վեր են հանվում նրա ունեցած խնդրառական (և ոչ միայն խնդրառական) յուրահատկությունները:

Այսպես՝ երկնչել բայը մտցվել է հոլովական լրացումներ պահանջող բայերի շարքը, որը նրա հիմնական կիրառությունն է: Օրինակ՝ — Չերկնչեք այս ավազակներից (ՍՆ, ՄՄ, էջ 353): Մի երկնչեք այս լեռների վայրերի տեսիլից (Ն. տ., էջ 412): Սակայն երբեմն նշված բայի լրացումը դրսևորվում է կապի ու կապվող բառի զուգորդմամբ. ինչպես՝ Քաջալերող խոսքերով արիացրեք ձեզ ու ձեր զնդերը և բնավ մի երկնչեք քընամու առջև (Ն. տ., էջ 438): Այս խնդրառությունը այն-

քան էլ բնորոշ չէ երկնչել բային, վերջինիս համար առավել հատկանշական է հոլովական լրացում ստանալը, ուստի երկնչել բայը դասվել է հոլովական խնդրառություն ցուցաբերողների շարքը, իհարկե, համապատասխան տեղում տրվում են լրացուցիչ բացատրություններ: Նույն ձևով էլ բացառական հոլովով լրացում է պահանջում վախենալ բայը, ինչպես՝ վախենալ մեկից (մի բանից): Սակայն երկնչել-ի նման նրա լրացումը ևս կարող է կապային ձևավորում ստանալ (վախենալ մեկի (մի բանի) համար): Այդ խնդրառությունը այնքան էլ հատկանշական չէ վախենալ բայի համար: Վերջապես հոլովական խնդրառություն ցուցաբերող սարսափել բայի լրացումը կարող է նաև կապային ձևավորում ստանալ. ինչպես՝ Որ ավազակի առաջ սարսափած ճշմարտությունն եք ուրանում խոսել (ՀԹ, 1, էջ 25): Սակայն սարսափել բայի համար առավել բնութագրականն ու տիպականը հոլովական խնդրառությունն է: Այդ պատճառով էլ սարսափել-ը ևս դասվել է ոչ հոլովական խնդրառություն ցուցաբերող բայերի շարքը:

Աշխատանքի մեջ մի շարք բայերի լրացումների լուսաբանման կապակցությամբ քննության են առնվում ոչ միայն նրանց համար բնորոշ խնդրառական երևույթները, այլև նրանց ոչ այնքան բնորոշ ու հատկանշական լրացումների ձևավորումն ու դրսևորումները: Դրանով, անշուշտ, ավելի ամբողջական են ներկայացվում բայերի խնդրառական յուրահատկությունները:

2. ՀՈԼՈՎԱԿԱՆ ԽՆԴՐԱՌՈՒԹՅՈՒՆ

Ինչպես արդեն մատնացույց է արվել, բավական շատ են այն բայերը, որոնց լրացումները ձևավորվում են հոլովաձևերով: Հոգեվիճակային բայերի լրացումների ձևավորման մեջ ակտիվություն են հանդես բերում հատկապես բացառական և գործիական հոլովները, որոնց համեմատությամբ բավականին պասիվ են տրականը, հայցականը և ներգոյականը: Հայցական հոլովի պասիվությունը պայմանավորված է նշված բայախմբի մեջ ներգործականների քանակական սահմանափակությամբ, ներգոյականինը՝ այդ հոլովի առանձնահատկությամբ՝ պարագայական հարաբերություն արտահայտելու հանգամանքով, իսկ տրականինը՝ այդ բայերի դրսևորած գործողության բնույթով ու նշանակությամբ: Որոշ բայերի լրացումների ձևավորմանը կարող են մասնակցել մեկից ավելի հոլովաձևեր՝ դրսևորելով իմաստային տարբեր հարաբերություններ: Այդ դեպքում մեծ մասամբ իշխող է լինում միայն մեկ հոլովաձև, մյուսը կամ մյուսները երկրորդական դեր են կատարում: Այսինքն՝ հոլովական տարբեր դրսևորումներ ունեցող լրացում-

ները մեծ մասամբ արտահայտվում են մեկ հոլովածեով, առանձին դեպքերում նաև մեկից ավելի հոլովներով: Ընդ որում, հոլովածեից մեկն է ակտիվություն ցուցաբերում, իսկ մյուսը (կամ մյուսները) այնքան էլ կենսունակ չեն: Քիչ են այն բայերը, որոնց լրացումների ձևավորմանը հավասարաչափ մասնակցում են մեկից ավելի հոլովածեներ:

ա) Բացառական փոխումով դրսևորված խնդրառություն

Հոլովական խնդրառություն ունեցող բայերի մի զգալի մասը պահանջում է բացառական հոլովով ձևավորված լրացումներ: Բացառականը բավական ակտիվ է հոգեվիճակային բայերի լրացումների ձևավորման մեջ: Բացառական հոլովով լրացում առնող բայերը իմաստային տեսակետից միատարր չեն և արտահայտում են բազմապիսի նշանակություններ:

Բացառականով լրացում են ստանում՝

ա) վախ, երկյուղ արտահայտող բայերը առանց խտրության.

Ինչպես՝ ահաբեկվել, երկյուղել, երկյուղ զգալ, երկյուղ կրել, երկընչել, զարհուրել, զարդանդվել, սահմեկել, սարսել, սոսկալ, սարսափել, սարսափ զգալ, վախենալ, վախ զգալ և այլն:

Այսպիսի խնդրառություն են ցուցաբերում նաև սիրտը ճաքել, լեղին պատռել, լեղին պատռվել և այլ դարձվածային արտահայտություններ, որոնք թեև բառային մեկ միավորի արժեք չունեն, սակայն միշտ բացառականի շնորհիվ մոտենում են հարադրական բայերին: Հիշատակված բայերի լրացման դերով կարող են կիրառվել թե՛ անձ, թե՛ իր ցույց տվող բառեր:

Հարկ է նկատել, որ բացառականով ձևավորված լրացումները արտահայտում են տարբեր հարաբերություններ, հատկապես պատճառի, պասիվ (երբեմն էլ ակտիվ) ներգործության, հետևանքի և այլն՝ նայած նախադասության կառուցվածքին, լրացումների բնույթին, հաղորդման նպատակաուղղվածությանը և լեզվական ու արտալեզվական այլևայլ գործոնների: Անհրաժեշտ է շեշտել, որ լրացումները հաճախ համատեղում են մեկից ավելի իմաստներ, և հնարավոր չէ առանձնացնել գերիշխողը մյուսներից: Բերենք բացառական հոլովով արտահայտված խնդրառության բնագրային օրինակներ. Երկյուղում եմ տվայտաճիգ չվտարվող, կարոտի սև աչյուռումից եմ սառսափում ... (ՊՄ, 2, էջ 151): Դեռ երկյուղ էր կրում Մարգարետունու անակնկալ հաճախումից (Մուր., Եժ, 3, էջ 333): Սոճան սառսափեց այս լքությունից, ինչպես մարդիկ, սովորաբար, սառսափում են անբնականությունից (ՍԳ, 1980, 4, էջ 99): Ես սառսափեցի պարփակ տաճությունից (Գ, 1979, 12, էջ 7): Երեսաներս սոսկում էինք ոստիկաններից: (ՍԳ, 1981, 9, էջ

21): — Նույնիսկ եւ սոսկացի քո խոսքերից (ՊՁ, ԱԷ, էջ 41): Փառան-
ձեմը վախից սսկվեց (Ն. տ., էջ 167): Եվ սարսուռն է զարմանքից մի
պահ (ՊՍ, 1, էջ 22): Սարսուռն եմ: Հալվող-հալվող քո հպումից (Ն. տ.,
էջ 386): Եվ խստաճարակ ու քրճահանդերձ այդ հոտի տեսքից զարհու-
րում էին (ՊՍ, 4, էջ 295): Որ, սկզբում, Աշոտ Թագավորի ֆաշագոր-
ծություններից զարհուրած, կծկված էր Ատրպատկանում (Մուր., ԵԺ,
3, էջ 70): Մենք պիտի վախենանք այդ քարացած շնչախոսությունից
և ոչ թե մեր սխալներից ու հատու խոսքերից (ՊՍ, 5, էջ 61): Նա
շվախեցավ գետից, բայց վախենում էր փոթորկից (Բ, ԵԺ, 7, էջ 19):
Եվ սահմոկեցեք վրեժից նրանց (ՊՍ, 4, էջ 302): — Բայց մերդ ի՞նչ
ասաց, հո սրտանալ չեղա՞վ ուրախությունից (ՎԱ, ՍԱ, էջ 361):

Մատնանշված բայերի մեծ մասի լրացումը կարող է արտահայտվել
դերանվան բացառական հոլովով, օրինակ՝ վախենալ (սարսափել, սոս-
կալ, երկյուղ կրել) իրարից (ինքն իրենից, ինքս ինձնից, ամենից,
բոլորից, ոչ մեկից): Բնագրային օրինակներ՝ վախենում էր իմեմ իրե-
նից (ՊՁ, ԱԷ, էջ 14): Եվ ես ահով հայտնաբերում եմ, որ չեմ վախե-
նում իմեմ ինձնից (ՍՀ, 19. 1. 1979): Այդ ժամանակ, ասում են, գի-
շերը իրենք էլ են իրարից վախենում (ՀԹ, 1, էջ 394):

Մի քանի բայեր փոխաբերական գործածությամբ արտահայտում
են վախ, երկյուղ և այլ իմաստներ և ըստ այդմ էլ պահանջում բացա-
ռական հոլովաձևով դրսևորված լրացում: Այդպիսիք են՝ դողալ, դող-
դողալ, դողացնել և այլն: Այսպես՝ Օ՜, կնատարազ այրերի ֆենից դո-
ղացե՛ք անվերջ (ՊՍ, 4, էջ 302): Նախարարները և ատում էին նրան,
և դողում էին նրանից (Բ, ԵԺ, 7, էջ 200): Նշված բայերը կարող են
ստանալ նաև կապով արտահայտված լրացումներ: Ընդ որում, իբրև
կապ, մեծ մասամբ կիրառվում են համար-ը, վրա-ն և այլն: Օրինակ՝
— Ես դողդողում եմ քո անձի համար, քո ապահովության համար
(Մուր., ԵԺ, 3, էջ 215): Դողդողում եմ որդուս վրա, և քո սիրո (ՊՍ, 1,
էջ 386): Եվ չի դողդողում նրա այսօրվա ու վաղվա վրա ինչպես որ
սրա (ՊՍ, 4, էջ 322): Կապային խնդրառությունը դողալ, դողդողալ,
դողացնել բայերի համար այնքան բնորոշ չէ, որքան հոլովականը, այդ
պատճառով էլ նրանք ուսումնասիրվում են հոլովական լրացումներ
պահանջող բայերի մեջ:

բ) Զգվանք, ձանձրույթ, ամոթ, շփոթմունք և այլ նշանակություն
արտահայտող ամաչել, գարշել, գգվել, խորշել, ձանձրանալ, մոլորվել,
շշկվել, շվարել, շփոթվել, ֆաշվել (փոխ.) և այլ բայեր:

Հարկ է նշել, որ նշված բայերի բացառական հոլովով դրված
լրացումները արտահայտում են պատճառի, ներգործության, անջատ-
ման և այլ հարաբերությունների պայմանավորված լրացումների բնույ-

թով, նախադասության իմաստով, բայերի դրսևորած նշանակությամբ, այլև լեզվական ու արտալեզվական այլևայլ գործոններով:

Ամաչել և շփոթվել բայերի լրացումները կարող են ստանալ կապային ձևավորում, օր.՝ ամաչել դասախոսից (քեզ համար), շփոթվել խոսքերից (ներա պատճառով): Սակայն սրանք այնքան էլ տիպական ու բնութագրական չեն ամաչել և շփոթվել բայերի համար, դրանց համար առավել բնութագրական է հոլովական խնդրառությունը:

Քաշվել բայը փոխաբերական կիրառությամբ արտահայտում է ամաչել, անհարմար զգալ, ամոթ համարել և այլ իմաստներ, ուստի ամաչել-ի նման կարող է ստանալ բացառականով դրսևորված լրացումներ:

Բերենք վերը նշված բայերի՝ բացառական հոլովով ձևավորված լրացումների բնագրային օրինակներ:

Իսկանդարը զգվում էր իր մոտ կանգնած Թահմազ Ղուլի խանից (ՍԽ, ՄՍ, էջ 244): Որ զգվել է այս խոսքերի արձագանքից (ՊՍ, 2, էջ 19): Դու ինձ ստիպեցիր ոչ թե խորշել այդ ամենից, այլ կարտեղ (ՊՁ, ԱԵ, էջ 6): Տափակ թե սուր քարոզներից ինքս էլ եմ միշտ, տղաս, խորշում (ՊՍ, 1, էջ 170): Իսկ ինձանից ինչու՞ ես դու այդպես քաշվում ու ամաչում (ՊՍ, 2, էջ 164): Սաստիկ շփոթվեց այդ առաջաբեկից (ՊՁ, ԱԵ, էջ 202): Ամաչում է այն հնարավորությունից, որ դիմացից կարող է անծանոթ տղամարդ հայտնվել ու էլ ավելի փոքրացնել միջանցքը (ՊՁ, ԱԵ, էջ 139): Մարդիկ կասկածից ավելի էին շվարում (ԱԲ, Երկ., էջ 99): Արաբացի նորեկների հարձակումից շվարելով մի քանի կետում սկսան նահանջել (Մուր., ԵԺ, 3, էջ 457): Մացակը շվարում էր գյուղացիների այս հանկարծական փոփոխությունից (ՆՁԶ, էջ 485): Նրա երեխաները շուտ-շուտ ձանձրանում էին նրա ծպիտից, սիրալիրությունից, սրտաբացությունից (Դ, 1978, 11, էջ 42): Ձանձրանում էր մեհակությունից (Ա. Սեկ., ՈՎՄ, էջ 50):

Հարկ է նշել, որ բերված օրինակների մեծ մասում իշխում է պատճառի ու ներգործության իմաստը, անջատման հարաբերությունը դրսևորված է միայն խորշել բայի լրացումների մեջ (խորշել այդ ամենից, խորշել քարոզներից): Նկատենք նաև, որ մեծ մասամբ պատճառի ու ներգործության իմաստները համատեղվում են, և այդ դեպքում մերթ իշխում է պատճառի, մերթ ներգործության հարաբերությունը, իսկ երբեմն էլ հավասարապես են դրսևորվում ներգործությունն ու պատճառականությունը, ուստի և դժվարություն է հարուցում դրանց սահմանազատումը: Եթե բացառականով ձևավորված անդամը անձ ցույց տվող բառ է, ապա հիմնականում ներգործության հարաբերություն է դրսևորվում, իսկ եթե իր է՝ արտահայտվում է պատճառականություն,

որ որոշ չափով կարող է համատեղվել պատիվ ներգործության հարաբերություն: Այսպես՝ ձանձրանալ հարևանից (բուրից, ամենքից) կապակցությունների մեջ իշխում է ներգործության իմաստը: Հարևանը (բուրը, ամենքը) ձանձրացնում են, ձանձրույթ են պատճառում, իսկ ձանձրանալ մենակությունից (սիրալիրությունից, սրտաբացությունից) կապակցություններում գերիշխում է պատճառականությունը (մենակությունը, սիրալիրությունը, սրտաբացությունը պատճառ են դառնում ձանձրանալու համար): Այստեղ, իհարկե, ոչ շեշտված ձևով, աղոտ կերպով զգացվում է նաև ներգործության հարաբերություն:

գ) Լիկանք, հիասթափություն, վիրավորանք, սթափություն և այլ իմաստ արտահայտող լալկվել, լվկվել, լացակումել, հեծկտալ, հիասթափվել, նեղանալ, խռովել, սթափվել, զարթնել, արթնանալ, ուշքի գալ և այլ բայեր իրենց հիմնական կամ բուն նշանակությամբ, այլև բարանալ-ը փոխաբերական կիրառությամբ:

Օրինակ՝ Լեզուն կարող է սարսափից լալկվել... (ՊՍ, 4, էջ 84): Ու եթե լվկվել՝ բաժանման ցավից, ոչ թե քշնամուց (ՊՍ, 1, էջ 370): Հասմիկը վիրավորանքից լացակումեց (ՎԱ, ՍԱ, էջ 107): Ասոն նստեց հոր անկողնու մոտ և սկսեց վշտից հեծկտալ (ՆՁՀ, էջ 201): Աշխարհը ձանձրացել ու հիասթափվել է բուրը քաղավորներից (ԳՍԹ, 1, էջ 434): Նշանակում է ոչ թե գրպարտությունից էր նա վիրավորվել, այլ ճշմարիտ խոսքերից (ՊՁ, ԱԵ, էջ 277): Նա սթափվում է տարօրինակ շրշունից (Գ, 1979, 1, էջ 68): Արքան շորերով պառկել էր... աշխարհից նեղացած ու խռոված (ՊՁ, ԱԵ, էջ 204): Բայց Մարիամը նրան չսեց, որովհետև ինքը նույնպես ֆարացել էր այդ դիմումի թողած տպավորություններից (ՆՁՀ, էջ 156):

Եվ անձրևի թակոցից խոր ֆնից ենք մենք զարթնում (ՊՍ, 1, էջ 237): Որ տակավին ուշքի չէր եկել անակնկալ կատարվածից (ՍԽ, ՄՍ, էջ 190): Նկատենք, որ նեղանալ, խռովել և վիրավորվել բայերը կարող են ստանալ նաև կապային լրացում (նեղանալ կոպիտ խոսքերի համար, խռովել վիրավորանքի համար, վիրավորվել զրպարտելու համար), սակայն դրանց համար առավել բնորոշ է հոլովական խնդրառությունը, ուստի նշված բայերը քննվում են որպես հոլովական խնդրառություն ունեցողներ:

դ) Բացառական հոլովով ձևավորված լրացում են պահանջում նաև դժգոհել, ընդդարմանալ, կաշկանդվել և այլ բայեր. օրինակ՝ Ոմանք զովից ընդդարմացել ու կարկամել էին (ԱԲ, Երկ., էջ 203): Նա այնպես կաշկանդվեց այդ մոֆից, որ մոռացավ, թե ինչու է եկել այստեղ (Ա. Սեկ., ՈՎՄ, էջ 66):

Հոլովական խնդրառություն ունեցող բայերի մի մասը պահանջում է գործիական հոլովով ձևավորված լրացումներ: Գործիականը բացառականի նման ակտիվություն է հանդես բերում հոգեվիճակային բայերի լրացումների ձևավորման մեջ⁵³:

Գործիական հոլովով ձևավորված լրացումներ են պահանջում՝

ա) հպարտություն, պարծանք և այլ իմաստ արտահայտող գոռոգանալ, հպարտանալ, պարծենալ, ցնծալ և այլ բայեր:

Այս բայերի գործողությունը ևս բնորոշ է բանական էակին՝ մարդուն այն չի կարող իրացվել բնության գոյականների կողմից:

Նշված բայերի լրացման դերով կարող են կիրառվել թե՛ անձ, թե՛ իր ցույց տվող բառեր: օրինակ՝ Լավ է հպարտանալ մեր բարեկամներով (ՊՍ, 5, էջ 237): Ինչու չհպարտանայի ֆեզնով (ՊԶ, ԱԵ, էջ 253): Հանձնեմ, որ ավելի՞ գոռոգանա իր գործերով (ՎԱ, ՍԱ, էջ 301): Եվ պարծեցեմ ոչ թե հարցով, հպարտացեմ լոկ լուծումով (ՊՍ, 1, էջ 418): Ինչպես քաղաքի պատանիներն են պարծենում տարած ու շտաբած հաղթանակներով (Գ, 1981, էջ 34): Հոգին ցնծում է հար նշմարտությամբ (ՊՍ, 2, էջ 245): Գործիականով արտահայտված լրացումները հիմնականում միջոցի խնդրի պաշտոն են կատարում, երբեմն աղոտ կերպով համատեղելով պասիվ ներգործության հարաբերություն:

բ) Հիացմունք, հրապուրանք, հափշտակություն և այլ նշանակություն արտահայտող գայթակղվել, գերվել (փոխ.), դյուլվել, զմայլվել, կախարդվել, կլանվել, հափշտակվել, հրապուրվել, պանծալ, սքանչանալ, տարվել (փոխ.) և այլ բայեր: Իրեւ լրացում, կարող են կիրառվել թե՛ անձ, թե՛ իր ցույց տվող բառեր: Ընդ որում, կախարդվել և գերվել բայերի լրացումները ավելի շատ անձ են ցույց տալիս, քան իր, իսկ տարվել, կլանվել բայերի լրացման դերով ավելի շատ իր ցույց տվող բառեր են կիրառվում, քան անձ մատնանշող:

Բնագրային օրինակներ՝

Որ սփանջանալ իրենք իրենցով (ՊՍ, 4, էջ 211): Եթե արքան առաջին օրը միայն լսեր, այլև տեսներ նրան հիանալ ու սփանջանալ նրանով, դժվար թե այսօր անխուսափելի դառնար նրա ձևը խնդրելը (ՊԶ, ԱԵ, էջ 194): Ինքը այնքան է տարված այդ գրքով, որ նրանից չէր կարող բաժանվել (ՎԱ, ՍԱ, էջ 337): Արքան տարված էր իր հակասական մտքերով (ՊԶ, ԱԵ, էջ 97): Էլ չպիտի ուրիշներով տարվեմ-գերվեմ:

⁵³ Այն բայերը, որոնց լրացումները բացի գործիականից կարող են դրսևորվել նաև ուրիշ հոլովներով, քննության են առնվում մեկից ավելի հոլովաձևերով արտահայտված լրացումներ առնող բայերի մեջ:

(ՊՍ, 1, էջ 364): Եվ այնքան կլանված էր իր գործով, որ չնկատեց Ամենայն Հայոց սրբին (ՊԶ, ԱԵ, էջ 92):

Դրախտի դուռ էր հայացքդ թվում, երբ դեռ նոր էի կախարդվել ֆեզնով (ՀԲ, ՔԶ, էջ 39): Հափշտակվում եմ նորահայտ մեկով (ՊՍ, 1, էջ 484): Եվ զմայլված մեր հարստությունների լուսեղ շտեմարանով՝ կողոպուտի է վազել (Գ, 1980, 3, էջ 35): Հենց դրանով է գերվում դահլիճը (Գ, 1979, 12, էջ 49): Գերված լինելով բժշկի պատմությամբ՝ Ազադին ցրված բարևեց Խալիլին (ԳՍԹ, 1, էջ 199): Հիացմունքով կրողությամբ (Իս., ԵԺ, 1, էջ 34): Չափածոյով առավել հրապուրվելը բնական է և բացատրելի (ՊՍ, 5, էջ 30):

գ) Գործիական հոլովով արտահայտված լրացում են պահանջում զվարճանք, երջանկություն, ընկճվածություն, ոգևորություն, մխիթարանք և այլ իմաստ արտահայտող զվարճանալ, երջանկանալ, ընկճվել, մխիթարվել, ոգևորվել, ոգեշնչվել, ներշնչվել և այլ բայեր:

Օրինակ՝ Քեռի Ղուկասի և յոթծովիմերանի կռիվներով զվարճանում էին միայն ծերունիները (ՆԶԶ, էջ 379): Գնում է զվարճանալու մի այդպիսի շարագործությամբ (Բ, ԵԺ, 7, էջ 466): Ու երջանկացած ուրիշի խինդով՝ ինձ նոր զգացի մի բան վաստակած (ՀԾ, ՔԶ, էջ 284): Արդեն հոգնել էր երկար մենակությունից և, մանավանդ, ընկճվել արքայի հիվանդությամբ (Մուր., ԵԺ, 3, էջ 386): Երբ ես ներշնչվում եմ Արովյանով, ինձ համար հեշտ է դառնում ապրելը (ԳԹ, 13. 10. 1978): Այն արվեստագետն է կարողանում հոգևոր մեծ արժեքներ ստեղծել, ով ներշնչված է իր ապրած ժամանակի նշմարտությամբ (ՍԳ, 1982, 12, էջ 119): Հանրապետության աշխատավորները ոգևորված ձեռք բերած հաջողություններով, կուսակցության ու կառավարության բարձր պարգևով, հսկայական խանդավառությամբ աշխատանքային հերթափոխին են կանգնել (ՍԶ, 14. 3. 1981): Մխիթարվում էր այն մեծ գործով, որին զինվորագրված էր (ՍԽ, ՄՍ, էջ 45):

Հարկ է նկատել, որ գործիական հոլովով ձևավորված լրացումները դրսևորում են ոչ միայն միջոցի խնդրի, այլ պատճառականության, ներգործության և այլ իմաստներ: Այսպես՝ ընկճվել ճիվաղություն կապակցության մեջ լրացումը պատճառի պարագա է և ոչ թե միջոցի խնդիր, ոգևորվել հաջողությամբ կապակցության մեջ համատեղվում են միջոցի խնդրի ու ներգործության հարաբերությունները և այլն:

Որոշ բայեր կարող են ստանալ մեկից ավելի հոլովներով արտահայտված լրացումներ՝ դրսևորելով համապատասխան իմաստներ: Ընդ որում, այդ բայերի լրացումների ձևավորման մեջ հաճախ իշխում է միայն մեկ հոլովածևը, մյուսն այնքան էլ բնորոշ չի լինում, թեև այն ևս որոշ մասնակցություն է հանդես բերում տվյալ լրացման ձևավորման մեջ: Մի շարք բայերի լրացումները, սակայն, հավասարապես դրսևորվում են մեկից ավելի հոլովներով, որոնք բնորոշ են ու տիպական տվյալ բայերի լրացումների արտահայտման համար: Այստեղ քննվում են մեկից ավելի հոլովներով խնդրառություն ցուցաբերող բայերը, անտեսելով այն հանգամանքը, թե նրանց լրացման դրսևորման համար տվյալ հոլովածևը բնորոշ ու տիպական է, թե ոչ: Իհարկե, առանձին դեպքերում տրվում են որոշ բացատրություններ, որոնք էլ հենց մատնանշում են տվյալ բայի լրացման դրսևորման համար բնորոշ ու ոչ բնորոշ հոլովածևերը:

Մեկից ավելի հոլովներով արտահայտված խնդրառությունը բնորոշ է հատկապես գոհանալ, հմայվել, աբբել, հաբբել, աբբեմալ, գիւնովանալ, զգաստանալ և այլ բայերի: Ընդ որում, նշված բայերի լրացումը մերթ արտահայտվում է բացառականով, մերթ գործիականով, իշխողը հիմնականում գործիականն է, իսկ բացառականը գործիականի շափ բնորոշ չէ: Նկատենք նաև, որ գործիականով դրսևորվում է միջոցի խնդրի, բացառականով անջատման խնդրի կամ էլ պատճառի պարագայի հարաբերություն: Այսպես՝ գոհանալ բայի լրացումը սովորաբար դրսևորվում է գործիականով. օրինակ՝ Չէր կարող գոհանալ միայն լուսնի և աստղերի կենդանացումով (ՊՄ, 5, էջ 158): Որ բանվորը գոհանա իր վաստակով (ՊՄ, 1, էջ 75): Այստեղ գործիական հոլովով միջոցի խնդրի հարաբերություն է արտահայտվում, որը համատեղվում է նաև պատճառական և ներգործության հարաբերությունների: Հիշյալ բայի լրացումը կարող է ձևավորվել նաև բացառական հոլովով՝ դրսևորելով մերթ անջատման, մերթ պասիվ ներգործության և այլ նշանակություններ: Այսպես՝ ուր որ է կարթնանա, կերգի, կաղմկի՝ գոհացած աշխարհից (ՀՄ, ԾԺ, 2, էջ 171):

Բախտից գոհանալի, բայց ինձ ծովից գողանալի (ն. տ., էջ 264): Մինչ նրանք ստիպված էին գոհանալ միայն իրենց Սայաթ-Նովայից (ՊՄ, 5, էջ 42): Այստեղ բացառականով լրացումը հիմնականում անջատման, սկզբնավորման իմաստ է արտահայտում՝ որոշ չափով համատեղելով նաև պասիվ ներգործության, պատճառի հարաբերություններ: Դոհանալ Սայաթ-Նովայից (բախտից, աշխարհից) կարող է նշա-

նակել ա) գոհությունը, գոհ լինելը սկսվում, առաջանում, ելնում է Սայաթ-Նովայից (բախտից, աշխարհից) (անջատման հարաբերություն), բ) Սայաթ-Նովան (բախտը, աշխարհը) գոհացնում է, պատճառ է հանդիսանում գոհանալու կամ գոհ լինելուն (պատճառականություն և պասիվ ներգործություն), գ) գոհանալը, գոհ լինելը վերաբերում է Սայաթ-Նովային (բախտին, աշխարհին) (վերաբերության հարաբերություն), դ) գոհությունը տարածվում է Սայաթ-Նովայի (բախտի, աշխարհի) վրա, սահմանափակվում է դրանցով (սահմանափակման խնդիր): Իշխողը, իհարկե, անջատման ու ներգործության հարաբերություններն են: Հմայլվել-ը մեծ մասամբ պահանջում է գործիականով ձևավորված լրացում. օրինակ՝ Դեմիրճյանը հմայված էր Շեքսպիրի համադրական դրամատուրգիայով (Գ, 1979, 12, էջ 79): Հմայվում ես շշուկեմբով հոգու անձայն (Ն. տ., էջ 59): Այստեղ գործիական հոլովածկով արտահայտվում է միջոցի խնդրի հարաբերություն, առանց որևէ այլ հիմաստի կամ նշանակության համատեղման:

Հմայլվել բայի լրացումը ձևավորվում է նաև բացառական հոլովածկով՝ դրսևորելով ոչ միայն անջատման, ելման, այլև ներգործության, պատճառի և այլ հարաբերություններ:

Այսպես՝ Փառանձեմը, նրա ուժից ու կարողությունից հմայված, ակամա ձգվեց դեպի իրեն սպասող, իրեն կանչող ձեռքը (ՊՁ, ԱՆ, էջ 338): Այստեղ ուժից, կարողությունից հոլովածկերով հիմնականում դրսևորվում է ներգործության ու պատճառի հարաբերություն՝ անջատման, ելման նշանակության համատեղումով, այսինքն՝ առաջնայինը ոչ թե ելման, այլ ներգործության հարաբերությունն է:

Ձգաստանալ բայի լրացումը ես արտահայտվում է թե՛ գործիականով և թե՛ բացառականով. օրինակ՝ Իշխանը սկսավ նայել որդուն. ծնողական սիրտը կարծես զգաստացավ մի երկարատև արբեցությունից (Մուր., ԵԺ, 3, էջ 325): Եվ գինովցածի մոլոր քայլերով լճափ է նետվում, որ նրա ջրով քիչ զգաստանա (ՊՍ, 4, էջ 207): Առաջին օրինակում զգաստացավ բայի լրացումը՝ արբեցությունից անջատման, ելման նշանակություն է արտահայտում, մյուսում՝ (ջրով) միջոցի հարաբերություն:

Արբել, հարբել, հարբեմալ բայերը ես մեկից ավելի հոլովներով ձևավորված լրացում են ստանում: Ընդ որում, գործիականով արտահայտված լրացումը միջոցի ու ներգործության, իսկ բացառականով արտահայտվածով՝ ներգործություն և պատճառի հարաբերություն է դրսևորվում: Այսպես՝ Լեոնը հարբած էր աշխատանքի հաջողությամբ և այն սիրով ու հարգանքով, որ տարածում էր նրա հանդեպ Հացավանը (ՆՁ2, էջ 381): Խմեմ հարբենամ՝ ինչով դու հարբես (ՊՍ, 1, էջ

241): Հարբած գինուց, վշտից, նա հազիվ իրեն գցեց իր սենյակը (ՍԽ, ՄՍ, էջ 33): Ներքին մի խռովքով հարցրեց գովեստներից գինուցած, ամեն պատշաճություն կորցրած նախագահը (Ա. ՍԵԿ., ՈՎՄ, էջ 231):

Բերված օրինակներից առաջինում՝ Լեոնը հարբած էր հաշոդու-
քյամբ ... ընդգծվում է թե՛ միջոցի, թե՛ ներգործության հարաբերու-
թյուն, երկրորդում՝ հարբենամ՝ ինչով դու հարբես ներգործության
իմաստ չի արտահայտված, կա միայն միջոցի խնդրի նշանակություն,
իսկ վերջին երկուսում հարբած գինուց, վշտից և գովեստներից գինու-
ցած արտահայտվում է թե՛ ներգործության, թե՛ պատճառի նշանակու-
թյուն:

Հարբել, հարբեմալ, արբել, գինովանալ և այլ բայերի լրացում-
ները կարող են դրսևորվել նաև տրականով ու ներգոյականով. այսպես՝
հարբել ռեստորանում (տանը, գինետնում), գինովանալ հարսանիքում
(տանը) և այլն: Այսպիսով՝ նշված բայերի ձևավորմանը մասնակցում
են չորս հոլովաձևեր՝ բացառականը, գործիականը, տրականն ու ներ-
գոյականը:

3. ԿԱՊԱՅԻՆ ԽՆԴՐԱՌՈՒԹՅՈՒՆ

Ինչպես արդեն նշվել է, հոգեվիճակային որոշ բայեր պահանջում
են կապով ու կապվող բառով ձևավորված լրացումներ: Այստեղ ներ-
կայացվում են այն բայերը, որոնց համար բնորոշ է կապային խնդրա-
ռությունը, այսինքն՝ որոնք ստանում են կա՛մ միայն կապի ու կապվող
բառի զուգորդմամբ արտահայտված լրացումներ, կա՛մ էլ դրա հետ
միասին երբեմն ցուցաբերում են նաև հոլովական խնդրառություն,
որը, սակայն, հատկանշական չէ նրանց համար կապայինի չափ: Իսկ
այն բայերը, որոնք հավասարապես կարող են ստանալ թե՛ կապային
և թե՛ հոլովական ձևավորմամբ արտահայտված լրացումներ, ուսում-
նասիրվում են հետագա շարադրանքում, որպես կապային և հոլո-
վական խնդրառություն ցուցաբերելով բայեր: Այդ դեպքում նկատի
է առնվում բայերի խնդրառական առավել բնորոշ ու տիպական հատ-
կանիշը, բնականաբար անտեսվում է նրանց ոչ էական ու ոչ բնորոշ
խնդրառությունը: Այսպես՝ բարկանալ բայը մեծ մասամբ պահանջում
է կապային լրացում, ինչպես՝ Սաքու տղան մտքումը բարկացավ նրա
վրա (ԱԲ, ԵՐԿ., էջ 203): Ես քեզ վրա չեմ բարկանում (Մուր., ԾԺ, 3,
էջ 15): Մի աբաղաղ չափում էր բակը՝ ասես բարկացած տիրոջ վի-
ճակի համար (Ա. ՍԵԿ., ՈՎՄ, էջ 513): Այս խնդրառությունը առավել
բնորոշ ու հատկանշական է բարկանալ բային, սակայն վերջինս ստա-
նում է նաև հոլովաձևով արտահայտված լրացում. (Եվ չի բարկանա

նրա թեկուզ ամենակուպիտ խոսքերից (ՆՁԶ, էջ 267): ... Բարկացել (է) շուրջը տիրող անհոգությունից, անտարբերությունից, անադարձությունից (ԱԿ, Օտ., 2, էջ 435), որը բարկանալ-ի համար այնքան բնորոշ չէ, որքան կապայինը: Այդ պատճառով էլ բարկանալ բայը մտցվիլ է կապային խնդրառություն ունեցող բայերի շարքը: Նույն ձևով էլ կապային խնդրառություն ցուցաբերող բայեր են դիտվել նաև զայրանալ, ջղայնանալ, կատաղել, շարանալ, գազազել և այլ բայեր⁵⁴, որոնց համար առավել հատկանշական ու բնութագրական է կապային խնդրառությունը, իսկ հոլովականը ածանցյալ է: Կապային խնդրառություն ունեցող բայերը այնքան էլ շատ չեն: Հիմք ընդունելով նրանց իմաստները՝ դրանք կարելի է բաժանել մի քանի խմբերի՝

ա) բայեր, որոնք արտահայտում են զայրույթ, բարկություն, այդպիսիք են բարկանալ, գազազել, զայրանալ, կատաղել, նյարդայնանալ, շարանալ, ջղայնանալ և այլն իրենց բուն կամ հիմնական նշանակությամբ և փոփոխ-փոխաբերական կիրառությամբ, որ այս դեպքում դարձյալ դրսևորում է զայրույթ, բարկություն:

Նկատենք, որ բարկանալ բայի լրացման կապվող բառի դերում կիրառվում են անձ ցույց տվող բառերը, գազազել բայի լրացումը, երբ վերջինս արտահայտվում է դեմ կապով ու կապվող բառով, ևս անձ ցույց տալիս, զայրանալ բայի լրացումը կարող է թե՛ անձ, թե՛ իր ցույց տվող բառ լինել, ընդ որում, եթե լրացումը արտահայտվում է դեմ կապի ու կապվող բառի զուգորդմամբ, ապա կապվող բառը անձ ցույց տվող բառ է լինում, եթե ուրիշ կապերով է արտահայտվում, կարող է գրսևորվել թե՛ անձ, թե՛ իր ցույց տվող բառերով, կատաղել-ի լրացման կապվող բառը և՛ անձ կարող է մատնանշել, և՛ իր, սակայն, երբ լրացումը ձևավորվում է դեմ կապով, կապվող բառը ավելի շատ անձ է ցույց տալիս, քան իր: Չարանալ բայի՝ դեմ կապով ձևավորված լրացման կապվող բառը սովորաբար անձ է մատնանշում, վրա կապի դեպքում՝ մեծ մասամբ անձ է ցույց տալիս, երբեմն էլ իր, այդ վերջինը շեղում է գրական նորմայից: Վերջապես ջղայնանալ-ի՝ դեմ և վրա կապերով ձևավորված լրացման կապվող բառը մեծ մասամբ անձ է ցույց տալիս, հազվադեպ նաև իր:

⁵⁴ Նշված բայերը կարող են մտցվել նաև կապային ու հոլովական խնդրառություն ունեցող բայերի շարքը, սակայն այդպիսի մոտեցում չի ցուցաբերվում՝ խնդրառությունը ավելի տարբերակված ու մասնավորված (ոչ ընդհանուր) ձևով ներկայացնելու նպատակով: Այս մոտեցումը որոշակի առավելության հետ ունի նաև իր թերությունը: Հակառակ մոտեցման դեպքում, սակայն, առաջ կգան այլ կարգի թերություններ: Անպես որ այս խմբավորումը միակը ու ամենահաջողվածը չէ, և սահմանադրմաներն էլ լրացարձակ չեն, այլ որոշ չափով պայմանական են:

Մեջ, առթիվ և այլ կապերով ձևավորված լրացման կապվող բառը, այլև հոլովական խնդրառություն մեջ լրացումը կարող են թե՛ անձ, թե՛ իր ցույց տալ, ընդ որում, գերիշխողը իր ցույց տվող բառերն են, և անձ մատնանշողները համեմատաբար սահմանափակ են:

Բարկանալ բայի լրացումը հիմնականում ձևավորվում է վրա կապով, հազվադեպ նաև դեմ-ով: Առաջին դեպքում դրսևորում է հանգման հարաբերություն՝ վերաբերության նշանակության համատեղումով, մյուս դեպքում՝ հանգման հարաբերություն՝ ընդդիմության իմաստի համատեղումով: Նկատենք, որ դեմ կապով ձևավորված լրացումը այնքան էլ հարազատ չէ գրական լեզվին: Օրինակ՝ բարկացիր ինձ վրա, եթե հաճելի է քեզ (Մուր., ԾԺ, 3, էջ 15): Եվ մանեից շատ նա բարկացած էր Վասակի վրա (ՆՁԶ, էջ 528): Ոմանք հռեռացին, ոմանք բարկացան Սեթոյի վրա (ՎԱ, ՍԱ, էջ 107): Հանգստությունը կորցրած, հոգին ալեկոծ նա բարկանում էր իր վրա, բարկանում էր Ավգուստինի դեմ (ԱԿ, Օտ., էջ 222):

Գազազել բայի կապային լրացումը հիմնականում ձևավորվում է դեմ կապով՝ դրսևորելով հանգման նշանակություն՝ ընդդիմության հարաբերության համատեղումով: Կապվող բառը մեծ մասամբ անձ է ցույց տալիս: Այսպես՝ գազազեց մասնավորապես կիպարիտ Լեոնյանի դեմ (ՆՁԶ, էջ 73): Գազազում է ամուսնու դեմ (ն. տ., էջ 215): Ռդա շահը հենց այդ պատճառով էլ գազազում էր նրանց դեմ (ԳՍԹ, 1, էջ 367): Տարածված են նաև պարագայական հարաբերություն արտահայտող կապակցություններ. ինչպես խանչալը հանել էր, վագրի պես գազազել (ՎԱ, ՍԱ, էջ 338): Գազազել-ի լրացումը կարող է ձևավորվել նաև հոլովաձևով, մասնավորապես բացառականով՝ արտահայտելով պատճառի պարագայի նշանակություն՝ ներգործության հարաբերության համատեղումով: Այսպես՝ նույնիսկ ենթադրում եմ, որ վերջին օրերս նա նախանձից է գազազել (ՎԱ, ՍԱ, էջ 131): Յուրան գազազում էր ցավից ու վիրավորանքից (Գ, 1979, 1, էջ 65): Բերված օրինակներում իսկապես իշխում է պատճառի հարաբերությունը, սակայն այդ նշանակությունն անխառը չէ, զգացվում է նաև պասիվ ներգործության հարաբերություն:

Հետաքրքրություն է ներկայացնում զայրանալ բայի խնդրառությունը՝ իր բազմապիսի դրսևորումներով: Զայրանալ-ի լրացումը կարող է ձևավորվել թե՛ դեմ, թե՛ վրա, թե՛ համար, թե՛ առթիվ և թե՛ այլ կապերով, այլև բացառական հոլովաձևով՝ արտահայտելով տարբեր իմաստներ՝ ընդդիմության, հանգման, պատճառի, վերաբերության և այլն: Դեմ կապի դեպքում լրացումը ձևավորվում է գոյականներով կամ անձ ցույց տվող դերանուններով, վրա, համար կապերով ու կապ-

վող բառով արտահայտված լրացման դեպքում կապվող բառը կարող է թե՛ անձ, թե՛ իր ցույց տալ, առթիվ, համար կապերով ձևավորվելիս՝ իբրև կանոն, կապվող բառը իր է ցույց տալիս, բացառական հոլովով արտահայտված լրացումը հիմնականում իր է ցույց տալիս և այլն:

Այսպես՝ դրանից նա ինքն իր դեմ զայրացավ (ՆՁԶ, էջ 342):

— Իսկ Գոհարիկը, իմ սիրելի Գոհարիկը, զայրացած է մեր դեմ, իմ և քո դեմ (ԱԿ, Օտ., 2, էջ 224): Նա զայրացավ նրանց դեմ, որոնք օրը ցերեկով ժողովրդի մեջ համարձակվել են իր որդուն ձեռք տալ (ԱՔ, Երկ., էջ 19): Սանդարյանը սաստիկ զայրացած էր վարդան Ղազարյանի դեմ (ՆՁԶ): Ռշտունիները սաստիկ զայրացած են Մամիկոնյաններին դեմ (Ր, ԵԺ, 7, էջ 265): Դեմ կապով ձևավորված լրացումները արտահայտում են հանգաման հարաբերություն՝ ընդդիմության շեշտված երանգով:

Զայրանալ բայի լրացումը ձևավորվում է նաև վրա կապով:

Այսպես՝ Ու զայրացավ աշխարհի անաղաարուքյան վրա (ՊԶ, ԱԵ, էջ 176): — Ինչ եք իմ վրա զայրանում (Գ, 1979, 1, էջ 61): Նա սաստիկ զայրացած էր այդ պառավի վրա (ԳՍԹ, 1, էջ 98): Լրացումները դարձյալ հանգաման հարաբերություն են արտահայտում ինչպես դեմ կապով ձևավորվածները, սակայն վրա կապի ու կապվող բառի զուգորդմամբ արտահայտվածները ընդդիմության երանգի փոխարեն ցուցաբերում են ուղղվածության շեշտված երանգ: Ասվածից հետևում է, որ թե՛ դեմ և թե՛ վրա կապով ձևավորված լրացումները մասնակի համանիշություն ունեն, երկու դեպքում էլ հիմնականում հանգաման նշանակություն է դրսևորվում, մեկ ընդդիմության, մեկ էլ ուղղվածության շեշտվածությամբ:

Զայրանալ բայը միաժամանակ կարող է ստանալ մեկից ավելի կապային լրացումներ՝ արտահայտված վրա (նաև դեմ) և համար կապերով:

Այսպես՝ Սակայն ավելի շատ զայրացավ ինքն իր վրա, այն բաց թողածի համար, որ ուղեկիցներից մեկն ու մեկին չփոխանցեց ծրարը (Գ, 1978, 8, էջ 25): Վեմյանը զայրացած էր ընկերոջ դեմ այն բանի համար, որ նա արհամարհեց ավելի քան հինգ հարյուր ունկնդիրների ցանկությունը (ՆՁԶ, էջ 318): Բերված նախադասություններում նշվում է, թե ում է ուղղված կամ ում է հանգում զայրանալ բայի գործողությունը՝ և ինչի համար, այսինքն՝ ցույց է տրվում թե՛ հանգման առարկան և թե՛ պատճառը: Այլ կերպ ասած, զայրանալ-ը պահանջել է երկու լրացում՝ հանգման խնդիր և պատճառի պարագա:

Նշված բայի լրացումը կարող է ձևավորվել նաև առթիվ կապով և կապակցությամբ, պատճառով կապական բառերով. ինչպես՝ զայրա-

նալ մի բանի առթիվ (կապակցությամբ, պատճառով): Այդ դեպքում հիմնականում դրսևորվում է պատճառի հարաբերություն:

Զայրանալ-ի համար սովորական է պատճառական հարաբերություն արտահայտող լրացում ստանալը, մի բան, որ պայմանավորված է այդ բայի իմաստով: Զայրանալը կամ զայրույթը սովորաբար առաջ է գալիս որևէ պատճառով կամ պատճառաբանվածությամբ, ուստի բռնական է նրա լրացման՝ պատճառի պարագայի պաշտոն կատարելը:

Նկատենք, որ զայրանալ բայի բացառականով լրացումը ևս պատճառի պարագայի գործառույթով է կիրառվում: Այսպես՝ Իտալիայի հասնրակությունը այսօր զայրացած է դավադիրների նկատմամբ դատարանի հանդես բերած հանիրավի հանդուրժողականությունից (ԵԵ, 11. 12. 1978): Արթուն մտքերով, աչքերով արթուն, մի մարդ է մտել իմ մարմնի մեջ փակված բերանով՝ իմ արյան վազքի կառաղությունից սաստիկ զայրացած (Գ, 1978, 10, էջ 64):

Կառաղել բայի լրացումը ևս աչքի է ընկնում դրսևորման բազմազանությամբ: Այն կարող է արտահայտվել դեմ, վրա, համար, առթիվ և այլ կապերի ու կապվող բառի զուգորդմամբ, ընդ որում, երբ լրացումը ձևավորվում է դեմ, վրա կապերով, կապվող բառը մեծ մասամբ անձ է ցույց տալիս, հազվադեպ նաև իր: Համար, առթիվ կապերով ձևավորման դեպքում կապվող բառը հիմնականում իր է մատնանշում, սակավադեպ՝ անձ: Դեմ և վրա կապերով ձևավորված լրացումները հիմնականում հանգման հարաբերություն են դրսևորում՝ կա՛մ ընդդիմության (դեմ կապի դեպքում), կա՛մ ուղղվածության (վրա կապի ժամանակ) շեշտվածությամբ: Այսպես՝ կառաղեց ինքն իր դեմ (ՍԽ, ՄՍ, էջ 30): Նա այս անգամ արդեն խիստ կառաղել էր թե՛ նրա և թե՛ էմմայի դեմ (Ն-Դ, 2, էջ 408): Մահմուդ խանը նրա վրա կառաղեց (ԳՍԹ, 1, էջ 172): Փորում էր գազադած, կառաղած՝ աշխարհի, աստծո ու բոլոր մարդկանց վրա (ՍԽ, ՄՍ, էջ 316):

Կառաղել-ը միաժամանակ կարող է ստանալ մեկից ավելի կապային լրացումներ՝ ձևավորված դեմ (նաև վրա) և համար կապերով: Համար-ով արտահայտվածը պատճառի պարագայի գործառույթ ունի: Այսպես՝ Այդ բանի համար փոխանակ կառաղելու նրա դեմ, մի տեսակ օտարոտի երկյուղ էր զգում նրանից (Ն-Դ, 2, էջ 408): Կառաղեց սեփական նակատագրի դեմ այն բանի համար, որ անհաջողությունները գալիս էին քմահաճ, իրար հաջորդելով (Ա. Սեկ., ՈՎՄ, էջ 571):

Կառաղել-ի լրացումը կարող է ձևավորվել նաև բացառականով՝ դրսևորելով պատճառական հարաբերություն: Այսպես՝ կատաղել անհաջողությունից (քաղցից, դանդաղկոտությունից, շատախոսությունից, պարտությունից, հիվանդությունից և այլն):

Չարանալ բայը նույնպես աչքի է ընկնում խնդրառական յուրահատկությամբ: Նրա լրացումը ձևավորվում է մեծ մասամբ դեմ, վրա, համար, մեջ և այլ կապերով՝ դրսևորելով զանազան հարաբերություններ՝ հանգման, ընդդիմության, պատճառականության, ձևի և այլն: Չարանալ-ի լրացումը հիմնականում անձ է ցույց տալիս, երբ ձևավորվում է դեմ կապով, մյուս դեպքում, իբրև կապվող բառ, կարող են կիրառվել թե՛ անձ, թե՛ իր մատնանշող բառերը, ընդ որում, վրա կապի գործածության դեպքում գերակշռում են անձ ցույց տվող կապվող բառերը, համար և մեջ կապերի միջոցով ձևավորված լրացման դեպքում՝ իր մատնանշողները:

Այսպես՝ Հարսենի դեմ շարացած՝ պառավները սիրալիր կարեկցանքով նայեցին հարսնեհրին (ՍԽ, ՄՍ, էջ 300): Նա շարացած էր Վահրամի դեմ (Ա. Սեկ., ՈՎՄ, էջ 462): Յուրաքանչյուրին թվում էր, թե բեկն իր վրա է շարացած (ՍԽ, ՄՍ, էջ 99): Եվ շարանում էր Վիկտորիայի վրա (ԱԿ, Օտ., 2, էջ 160): Այժմ նա տուն էր դառնում խիստ շարացած ամենքի և ամեն բանի վրա (Ն-Դ, 1, էջ 47): Իսկ բթաշունչ ձմռան քամին շարանում է իր մտքի մեջ ու կատաղում (ՊՍ, 4, էջ 116):

Չարանալ-ի լրացումը կատաղել, գաղաղել, զայրանալ և այլ բայերի նման կարող է ձևավորվել նաև բացառականով՝ արտահայտելով պատճառականության նշանակություն. Օրինակ՝ Նա շատ է շարացած այդ փաստից (Գ, 1979, 6, էջ 31):

Ջղայեանալ բայը, որ համանիշ է բարկանալ-ին, կարող է ստանալ վեջինիս համար բնորոշ լրացումներ, ինչպես՝ ջղայանալ մեկի (մի բանի) դեմ (վրա, համար, առթիվ և այլն): Ջղայեանալ-ի լրացման կապվող բառը կարող է և՛ անձ, և՛ իր ցույց տալ, ինչպես բարկանալ բայինը: Այստեղ նույն թորինաչափությունն է նկատվում, ինչ բարկանալ-ի դեպքում:

Կապային խնդրառություն է ցուցաբերում փրփրել բայը փոխաբերական գործածությամբ, որ հատուկ է առօրյա ոճին և նշանակում է զայրանալ: Այսպես՝ Կամոն փրփրել էր պահեստապետի վրա (ՎԱ, ՍԱ, էջ 133): Գործածական են նաև փրփրել մի բանի համար (առթիվ) և այլն: Փրփրել-ի լրացումը կարող է ստանալ նաև հոլովական դրսևորում (փրփրել նրա խոսքերից (արարքներից, մեծախոսությունից): Նրկատենք, որ համատեքստի մեջ են ավելի որոշակի ու հստակորեն արտահայտվում փրփրել բայի զայրանալ, բարկանալ նշանակությամբ կիրառությունները և դրանց համապատասխան խնդրառությունը:

բ) Կապային խնդրառություն ժաննե նաև ծիծաղ, ծպիտ և այլ իմաստ արտահայտող բայերը: Այդպիսիք են՝ ծիծաղել, ծպտալ, ֆր-

բըջալ, հոճոալ, խնդալ, չարախնդալ, քմծիծաղ տալ և այլն: Նշված բայերի համար առավել հատկանշական է վրա կապով խնդրառությունը: Հանդիպում են նաև տակ, հեռ, նման և այլ կապերով ձևավորված լրացումներ:

Միծաղել բայի լրացումը մեծ մասամբ ձևավորվում է վրա կապով՝ արտահայտելով հանգման հարաբերություն: Ընդ որում, կապվող բառը կարող է թե՛ անձ, թե՛ իր ցույց տալ, և այստեղ որևէ սահմանափակություն չի նկատվում. օրինակ՝ կանայք աղջկական միամտությամբ չեն ծիծաղում տղաների վրա (Գ, 1978, 12, էջ 30): Մինչդեռ Սամվելն ու Մուշեղը ծիծաղում էին ոչ թե իրենց սիրային արկածների, այլ հենց ծերունիների վրա (ՊԶ, ԱԵ, էջ 35): Մինչև էսօր էլ քեֆ է անում Քաջ Նազարը ու ծիծաղում աշխարհի վրա (ՀԹ, 1, էջ 505):

Միծաղել-ի լրացման ձևավորման մեջ ակտիվ մասնակցություն են հանդես բերում անձ ցույց տվող դերանունները, օրինակ՝ ծիծաղեց ինքն իր վրա (Գ, 1978, 11, էջ 54): Նրա վրա ծիծաղում էին և՛ վաճառողները, և՛ հարևանները (Գ, 1979, 12, էջ 36):

Երբեմն անձնական դերանունը փոխարինվում է ս, դ ստացական հոդերով, և լրացումը ձևավորվում է վրա կապին ավելացնելով ս (դ) հոդերը: Այսպես՝ — Մի բան ասեմ, վրաս չծիծաղես (Գ, 1976, 11, էջ 8): — Խոչ ես միջանցքով մեկ կանչում, որ ամեն մեկն իմանա, վրադ ծիծաղի (ՎԱ, ՍԱ, էջ 104):

Միծաղել-ի լրացումը կարող է ձևավորվել նաև տակ, հեռ, հաճառ, նման, պես և այլ կապերով՝ արտահայտելով տարբեր հարաբերություններ: Տակ-ը կիրառվում է քիթ, բեղ կապվող բառերի հետ՝ ստեղծելով քթի տակ, բեղի տակ կապակցությունը, որը ծիծաղել բայի համար ձևի պարագայի պաշտոն է կատարում. օրինակ՝ Գալիս էր, ինձ սափրում ու քթի տակ ծիծաղելով ասում (ՍԳ, 1979, 6, էջ 46): Հայրը քթի տակ ծիծաղելով՝ սրբեց բեղերը (Գ, 1979, 12, էջ 26):

Գործածական է ծիծաղել բեղի տակ կապակցությունը, ուր բեղի տակ-ը ձևի պարագա է ծիծաղել բայի համար:

Ձևի հարաբերություն է դրսևորվում նաև նման, պես կապերով ձևավորված լրացման միջոցով. Այսպես՝ Ուրախ ժամանակ ծիծաղում էր ջահել աղջկա պես (ՎԱ, ՍԱ, էջ 376): Գործածական են ծիծաղել երեխայի (հոր, քրոջ, ուսուցչի) նման կապակցությունները, որոնցով դարձյալ ձևի հարաբերություն է արտահայտվում: Հաճառ կապով ձևավորված լրացումը հիմնականում պատճառի հարաբերություն է արտահայտում, հեռ-ով ձևավորվելու դեպքում՝ միասնության հարաբերություն՝ ձևի ընդգծված նշանակության համատեղումով:

Օրինակ՝ Դու ծիծաղում ես միայն նրա համար, որ թուլություն ունեցար խոռվել թշնամուց մի բաժակ ջրի համար (Գ, 1981, 11, էջ 8): Ես այդ պահին ծիծաղում եմ միայն քեզ հետ (Գ, 1979, 12, էջ 59):

Միծաղել՝ բայի լրացումը կարող է հոլովական դրսևորում ստանալ: Գործածական են հատկապես բացառականով և գործիականով լրացումները, որոնցով արտահայտվում են պատճառի և ձևի հարաբերություններ: Երբեմն ծիծաղել-ը ստանում է հայցականով ձևավորված լրացում, որը բնորոշ է նշված բային. օրինակներ՝ Մենք այս անգամ իսկապես ծիծաղում ենք պարադոքսի փայլուն լուծումից (Գ, 1981, 11, էջ 62): Միծաղեց նույն անհոգուրյամբ (Ն-Դ, 1, էջ 179): Ինչքան ծաղիկ կա, որ դեռ չեմ քաղել, դեռ քանի ծիծաղ ես չեմ ծիծաղել (Գ, 1979, 12, էջ 11): Վերջին նախադասության մեջ ծիծաղել-ը ստացել է կրող խնդիր, որ բնորոշ է նրան, իբրև չեզոք սեռի բայի: Այդ խնդրառությունը ոճական արժեք ունի: Հետաքրքրություն է ներկայացնում ժպտալ, խնդալ, հոհոալ, չարախնդալ բայերի խնդրառությունը՝ իրենց լրացումների ձևավորման բաղադրանությամբ և դրսևորած նշանակություններով: Ժպտալ-ը, խնդալ-ը, հոհոալ-ը, չարախնդալ-ը, ֆմծիծաղել-ը, ֆմծիծաղալ-ը, ծիծաղել-ի նման պահանջում են վրա, տակ, պես, նման և այլ կապերով ձևավորված լրացումներ, որոնց մեջ իշխողը վրա կապով արտահայտվածներն են, մյուսները մեծ տարածում չունեն: Վրա, նման, պես կապերով ձևավորվելիս լրացման կապվող բառի դերով կարող են կիրառվել թե՛ անձ, թե՛ իր ցույց տվող բառերը, տակ-ով ձևավորված կապակցության մեջ կապվող բառը, իբրև կանոն, իր է ցույց տալիս և իբրև աշղպիսին, կիրառվում են բեղ և ֆիթ բառերը, այլ բառերի հետ լրացումը չի ձևավորվում: Օրինակ՝ Եվ ուրախ ժպտաց երեխայի չարահըճի արարքի վրա (ԱԲ, Երկ., էջ 195): Նա ժպտում էր ուստա Սիմոնի և նրա բարկության վրա (ՀԹ, 1, էջ 2, 292): Բեղի տակ ժպտում է մեղ ալստեղ բերող վարորդը (Գ, 1979, 6, էջ 5): Բաղին ժպտաց քթի տակ (ԱԲ, Երկ., էջ 9): Ժպտում ես հարսի նման (Գ, 1979, 12, էջ 82): Մի օր գայիր ու ժպտայիր առաջվա պես (ՊՍ, 1, էջ 239): Նրանք հիմա մտովի չարախնդում են իր վրա (ՊԶ, ԱԵ, էջ 250): Ու անցնում է ժամանակը՝ բարությանը ֆմծիծաղելով այս բոլոր պատմությունների վրա (Գ, 1979, 12, էջ 27): Ասատուր պապը ֆմծիծաղ տվեց բեղի տակ (ՎԱ, ՍԱ, էջ 292): Բերված օրինակներից վրա կապով ձևավորված լրացումները հանգման նշանակություն են արտահայտում, որը համատեղում է նաև պասիվ ներգործության, պատճառի և աղոտ ձևով նաև պերաբերության հարաբերություններ, մյուսներում ձևի հարաբերությունն է իշխում (ժպտալ, խնդալ, հոհալ, չարախնդալ, ինչպե՞ս - հարսի նման, առաջվա պես, քթի տակ և այլն):

Ժպտալ, խնդալ, հոհոալ, շարախնդալ բայերի համար բնորոշ է նաև հոլովական խնդրառությունը, որը արտահայտվում է տրական, բացառական և գործիական հոլովներով: Առաջին դեպքում դրսևորվում է հանգման, մյուսներում պատճառի, միջոցի կամ ձևի հարաբերություն: Լրացումը կարող է թե՛ իր, թե՛ անձ ցույց տալ, առանց որևէ սահմանափակման: Այսպես՝ Ոնց է ժպտում իմ հոգին շարին, քարուն, ամենֆին (ՀԹ, 1, էջ 15): Եվ Արիսը հիվանդների երեսին հրոհրոալով ասաց (ՍԳ, 1979, էջ 71): Մենք ժպտացինք իրար և գոհ բաժանվեցինք (Գ, 1979, 12, էջ 4): Նա դանդաղ ժպտաց Աչֆերով իր թաց (ՊՍ, 4, էջ 21): Որից կարող ես միայն ժպտալ մի հիմար ժպիտով (ՊԶ, ԱԵ, էջ 98):

Ապրել, ապրել, այնպես ապրել, որ ուրիշի խինդով խնդաս, որ ուրիշի ցնծությունով ինքդ էլ ցնծաս, ինքդ էլ թնդաս (ՊՍ, 1, էջ 365): Նրա դեմքն այժմ շարունակ ժպտում է մի տեսակ երանությամբ (Ն-Դ, 1, էջ 25): Հանույֆից շարախնդաց արքան (ՊԶ, ԱԵ, էջ 233):

Ժպտալ-ի լրացումը կարող է արտահայտվել բառակապակցությամբ՝ կազմված բեղ բառի հոգնակի սեռականից և արանք բառի բացառականից. օրինակ՝ ժպտաց բեղերի արանքից (ՍԽ, ՄՍ, էջ 270): Բերված կառույցում լրացումը դրսևորվում է ձևի հարաբերություն՝ համանիշություն հանդես բերելով բեղի տակ, քի տակ կապակցություններին:

Կապային խնդրառություն է ցուցաբերում նաև տալակվել բայը փոխաբերական կիրառությամբ. նրա լրացումը ձևավորվում է մեջ և միջև կապերով՝ դրսևորելով պատճառի և տեղի հարաբերություններ: Այսպես՝ տալակվում է ցավերի մեջ (ՊԶ, ԱԵ, էջ 297): Եվ ես տալակվում էի երկու բեռների միջև (Գ, 1981, 11, էջ 38):

Կապային խնդրառությունը բնորոշ է նաև ըմբոստանալ, ընդվզել, լարվել (փոխ.), խոծոտվել, լցվել (փոխ.), դառնանալ և այլ բայերի, որոնց լրացումները մեծ մասամբ ձևավորվում են դեմ, համար, վրա և այլ կապերով և պատճառով կապական բառով. ընդ որում, առավել տարածված են դեմ և համար կապերով ու կապվող բառի զուգորդմամբ արտահայտված լրացումները, վրա կապով ձևավորվում է հատկապես խոծոտվել բայի լրացումը, որը այնքան էլ հատկանշական չէ գրական լեզվին: Նշված կապերի կապվող բառերը կարող են թե՛ անձ, թե՛ իր ցույց տալ:

Լարվել-ի և լցվել-ի լրացումները մեծ մասամբ ձևավորվում են անձ մատնանշող բառով (կապվող բառ), հատկապես երբ այն զուգորդվում է դեմ կապի հետ: Ընդվզել-ի, ըմբոստանալ-ի, դառնանալ-ի լրացումները հավասարապես ձևավորվում են թե՛ անձ, թե՛ իր ցույց

տվող բառերով և կապով: Լարվել, լցվել, ըմբոստանալ, ընդվզել բայերի՝ դեմ կապով ձևավորված լրացումները արտահայտում են հանգման հարաբերություն՝ ընդդիմության ընդգծված նշանակության համատեղումով, իսկ համար կապի ու կապվող բառի զուգորդմամբ արտահայտված լրացումները՝ պատճառի, խոծոսվել-ի՝ վրա կապով ձևավորված լրացումը հանգման նշանակություն՝ ուղղվածության երանգավորմամբ: Օրինակ՝ եւ սաստիկ լարված էին Մացակ Ավագյանի դեմ (ՆՁՀ): Սկսում են հետզհետե լարվել քաղաքի դեմ (Մուր., եթ, 3, էջ 69): Իսկ ես ընդվզել եմ դրա դեմ (ՊՁ, ԱԵ, էջ 511): Նրանք երկուսն էլ ըմբոստացան ցարական ինֆեակալության դեմ (ՊՍ, 5, էջ 7): Եվ ամբողջ էությունը դառնացած էր նրա դեմ (ՆՁՀ, էջ 47): Անլագյանը խոծոսվեց էլուշի վրա (ն. տ., էջ 319):

Գործածական են նաև լարվել (լցվել, ընդվզել, ըմբոստանալ, դառնանալ մի բանի համար (պատճառով):

Նշված բայերի լրացումները կարող են ստանալ նաև հոլովական ձևավորում, որը նրանց համար այնքան էլ բնորոշ չէ, ավելի ճիշտ՝ կապային լրացումների չափ հատկանշական չէ: Նշված բայերի հոլովական լրացումները մեծ մասամբ արտահայտվում են բացառական հոլովաձևով:

Այդ դեպքում նախադասության կազմում կիրառվում են նաև կապային լրացումներ, այսինքն՝ բայերի լրացումները միաթամանակ ստանում են թե՛ հոլովական, թե՛ կապային ձևավորում: Չեն բացառվում, իհարկե, այն դեպքերը, երբ բայերը ստանում են միայն բացառականով ձևավորված լրացումներ, սակայն առավել բնորոշ է միաթամանակ կապային ու հոլովական խնդրառությունը: Այսպես՝ լարվել, լցվել, ըմբոստանալ, ընդվզել մեկի (նաև մի բանի) դեմ, մի բանից: Բացառականով լրացումը այդ դեպքում, իբրև կանոն, իր է ցույց տալիս: Անձ նշող բառը բացառականով լրացում չի լինում: Նշված կապակցություններում բացառականով լրացումները արտահայտում են պատճառի և պասիվ ներգործության նշանակություն և համանիշություն են հանդես բերում համար կապով կամ պատճառով կապական բառով ձևավորված լրացումների նկատմամբ. օրինակ՝ լարվել մեկի դեմ, մի բանից և ըմբոստանալ մեկի դեմ, մի բանից կապակցությունները համանիշ են լարվել մեկի դեմ մի բանի համար (պատճառով), ըմբոստանալ մեկի դեմ մի բանի համար (պատճառով) կապակցություններին:

Համար կապով ձևավորված լրացման միջոցով երբեմն պատճառի հարաբերության հետ աղոտ ձևով դրսևորվում է նաև նպատակայնության ու հանգման նշանակություն: Այսպես՝ Չեմ խուսափում քո պատիժներից, քեզ համար եմ ես ըմբոստանում քո դեմ (ՊՁ, ԱԵ, էջ 63):

Ինչպես արդեն նշվել է, հոգեվիճակային բայերի մի ղզալի մասը հավասարապես ցուցաբերում է թե՛ հոլովական, թե՛ կապային խընդրառություն: Եվ երկուսն էլ հարազատ են մեր լեզվի ոգուն, հետևաբար և շեղումներ չեն գրական լեզվի նորմաներից: Նկատենք, որ այս խմբի բայերը խստորեն չեն սահմանազատվում մյուս երկու խմբերի բայերից: Չէ՛ որ հոլովական խնդրառություն ունեցող բայերի մի մասը ստանում է նաև կապով ձևավորված լրացում, իսկ կապային խնդրառություն հանդես բերող մի շարք բայեր կարող են ստանալ նաև հոլովական լրացումներ: Այստեղ խոսքը գնում է այն մասին, թե խնդրառության մեջ որ ձևն է իշխում՝ կապայինը, թե՛ հոլովականը, և եթե իշխում է մեկը, ապա մյուսը այնքան էլ բնորոշ ու հատկանշական չէ տվյալ խմբի բայերին: Այս վերջին դեպքում, թեև շեղումում է այն հանգամանքը, որ խնդրառության երկու տիպերն էլ հավասարապես բնորոշ են բայերի որոշակի խմբերի, սակայն ստույգ վիճակագրության դեպքում թերևս որոշ բայերի խնդրառության բնույթը կարելի կլինի ավելի ճշտել: Ասվածից հետևում է, որ, ըստ խնդիրների ձևավորման, բայերի դասակարգումը պայմանական է, մի բան, որ թելադրվում է լեզվական իրավիճակայիններով, լեզվի ոեալ վիճակով: Նկատենք նաև, որ ճշգրիտ եզրահանգումների համար անհրաժեշտ են վիճակագրական տվյալներ յուրաքանչյուր բայի վերաբերյալ, իսկ դա հնարավոր չէ կատարել թեկուզ հենց այն պատճառով, որ դրա համար մեկ մարդու կյանքը բավական չէ: Եղած փաստերի ընձեռած հնարավորությունների սահմաններում կփորձենք լուսաբանել առաջադիր հարցը, ամենևին էլ այն կարծիքին չլինելով, թե դրանք սպառիչ ու վերջնական են:

Միաժամանակ և՛ հոլովական, և՛ կապային խնդրառություն ցուցաբերող բայերը բազմազան են ու բաղմաբնույթ: Հիմք ընդունելով նրանց դրսևորած իմաստները՝ դրանք կարելի է բաժանել մի քանի խմբերի.

ա) բայեր, որոնք արտահայտում են հոգեկան և մտավոր խանգարում. ինչպես՝ խելագարվել, խելացնորվել, ցնորվել, խենթանալ, խելառվել, գժվել, ուշաթափվել, ուշաբերվել, ուշագնաց լինել, խելքը թրուցնել և այլն:

բ) բայեր, որոնք արտահայտում են լաց, հառաչանք և այլն. ինչպես՝ լալ, լաց լինել, արտասվել, սգալ, սուգ անել, ողբալ, հեկեկալ, հառաչել և այլն:

գ) բայեր, որոնք արտահայտում են սիրահարություն, մտահոգություն, տանջանք, տառապանք, ինչպես՝ սիրահարվել, մտահոգվել, մը-

տատանջվել, տանջվել, տառապել, տվայտել, տապակվել (փոխ.) և այլն:

դ) բայեր, որոնք արտահայտում են վիշտ, տխրություն, վրդովմունք, հիացմունք. ինչպես՝ վշտանալ, տխրել, թախծել, մոռվել, ցավել, վրդովվել, հրճվել, ուրախանալ, հիանալ և այլն:

ե) բայեր, որոնք արտահայտում են հուզմունք, անհանգստություն. ինչպես՝ հուզվել, նյարդայնանալ, գրգռվել, փոթորկվել (փոխ.), եփվել (փոխ.), անհանգստանալ և այլն:

զ) բայեր, որոնք արտահայտում են դարմանք, կասկածանք, տարակուսանք. ինչպես՝ դարմանալ, ապշել, կասկածել, տարակուսել, տատանվել և այլն:

Անցնենք նշված բայերից յուրաքանչյուրի քննությանը՝ վեր հանելով խնդրառության մեջ ունեցած ընդհանրություններն ու առանձնահատկությունները:

Խելագարվել, խելացնորվել, խենթանալ, խելավել, գծվել, խելք բռցնել, ուշաթափվել, ուշագնաց լինել բայերի կապային լրացումները հիմնականում ձևավորվում են համառ և պատճառով կապերով, որոշ դեպքերում լրացման ձևավորմանը մասնակցում են նաև պես, նման և այլ կապեր: Ընդ որում, կապվող բառի դերով մեծ մասամբ կիրառվում են անձ ցույց տվող բառեր, իր մատնանշող բառեր քիչ են հանդիպում: Հոլովական խնդրառությունը մեծ մասամբ արտահայտվում է բացառականով, երբեմն նաև գործիականով ու ներգոյականով, և լրացումը հիմնականում դրսևորվում է իր (երբեմն էլ անձ) ցույց տվող բառերով: Բացառական հոլովով ձևավորված լրացումը արտահայտում է պատճառի հարաբերություն երբեմն մաքուր, անխառն ձևով, երբեմն էլ պասիվ ներգործության նշանակության համատեղումով: Հոլովական խնդրառության օրինակներ.

Այս արհավիրքից, զուլումից այս շար Դե, եկ, տնավեր, մի խելագարվի (ՊՄ, 4, էջ 81): Թագավոր-աները ուրախությունից քիչ էր մնում խենթանա (Գ, 1980, 3, էջ 55):

Ուրախությունից Ահարոնը խենթացավ (Սե, ՄՍ, էջ 175): Եթե խելավել՝ ավելի լավ է անհաջող սիրուց (ՊՄ, 1, էջ 369): Ո՞նց է, որ շես գծվում անլուր տառապանքից (ՊՄ, 1, էջ 217): Կարելի է հուսափառությունից գծվել (ՊԶ, ԱՅ, էջ 185): Եվ նա լող էր տալիս միկից մյուսը՝ ապշելով, խենթանալով դատած հաբատությամբ (ՍԳ, 1980, 4, էջ 123):

Գործածական են նաև՝ խելքը թոցնել (խելացնորվել, ցնորվել) սիրուց (հիվանդությունից, մտածումներից, տանը, հիվանդանոցում), խելագարվել բանտում (աքսորում), ուշաթափվել (ուշագնաց լինել) շո-

գից (քաղցից, ցավերից, կաթվածից, փողոցում, հիվանդանոցում), ուշաբերվել սրսկումներով (սառը ջրով, տանը, հիվանդանոցում և այլն): Բերված բոլոր օրինակներում բացառական հոլովով արտահայտված լրացումները պատճառի հարաբերություն են դրսևորում, գործիականով արտահայտվածները՝ միջոցի (ուշաբերվել ջրով, սրսկումներով), պատճառի՝ պասիվ ներգործության համատեղումով (խենթանալ հարստության), տրականով ու ներգոյականով արտահայտվածները՝ տեղի (գրծվել, խելագարվել, ուշաթափվել, ուշագնաց լինել փողոցում, հիվանդանոցում, տանը) և այլն:

Նշված բայերի կապային ձևավորում ստացած լրացումները տարբեր իմաստներ են արտահայտում՝ պայմանավորված մի կողմից համապատասխան կապերի ընդհանուր նշանակությամբ ու կիրառությամբ, մյուս կողմից՝ նախադասության կառուցվածքով, հաղորդման նպատակով և այլ հանգամանքներով: Այսպես՝ համար կապով ձևավորված լրացումները մեծ մասամբ արտահայտում են պատճառի, երբեմն էլ հանգման, պասիվ ներգործության և այլ հարաբերություններ. Աղբկա համար խելք բացնում է այդ քարասիրտ մարդը (ՄԽ, ՄՍ, էջ 43): — Դու գծվում ես ինձ համար (ՊԶ, ԱԵ, էջ 176): — Կարծում է, թե կպատմեն, ոնց էր գծվում ինձ համար (Գ, 1979, 12, էջ 34):

Գործածական են խելագարվել (խենթանալ) մեկի (նաև մի բանի) համար կապակցությունները, ուր արտահայտվում է պատճառի հարաբերություն՝ պասիվ ներգործության իմաստի համատեղումով, այլև հանգման հարաբերություն՝ օգուտի (կամ վնասի) ընդգծված նշանակությամբ:

Վերոհիշյալ բայերի կապային լրացումները կարող են ձևավորվել նաև պատճառով կապական բառով, այլև պես, նման կապերով՝ դրսևորելով պատճառի և ձևի հարաբերություններ:

Այսպես՝ խելագարվել կնոջ պատճառով կապակցությամբ դրսևորվում է պատճառի հարաբերություն՝ համանիշություն հանդես բերելով մի կողմից բացառականով, մյուս կողմից՝ համար կապով ձևավորված լրացումների նկատմամբ: Այսպես՝ խելագարվել սիրո պատճառով կառույցը համանիշ է խելագարվել սիրուց և խելագարվել սիրո համար կապակցություններին: Բոլոր կառույցներում իշխողը պատճառի հարաբերությունն է, վերջին կառույցի մեջ, սակայն, պատճառի հետ ազատ կերպով (ոչ հստակ ու ընդգծված) դրսևորվում է նաև հանգման նշանակություն:

Ինչպես արդեն նշվել է, պես, նման կապերով ձևավորված լրացումներով արտահայտվում է ձևի հարաբերություն: Այսպես՝

Անգութ, ո՞նց է, որ ինձ նման չես խենթանում (ՊՍ, 1, էջ 217): Գործածական են նաև խելագարվել (խելացնորվել, ցնորվել, գծվել, խենթանալ, խելքը թոցնել, ուշաթափվել, ուշազնաց լինել) մեկի պես (նման) և այլ կառույցները, ուր իշխում է ձևի հարաբերությունը:

Հետաքրքրություն է ներկայացնում լաց, հառաչանք և այլ իմաստ արտահայտող լալ, լաց լինել, արտասվել, ողբալ, սգալ, սուգ անել, հեկեկալ, հեծեծալ, հառաչել բայերի խնդրառությունը: Սրանց համար բնորոշ է բացառականով խնդրառությունը, մի քանի բայեր բացի դրանից, ստանում են նաև ուրիշ հոլովով արտահայտված լրացումներ, հատկապես հայցականով, որոշ դեպքերում էլ գործիականով ու ներգոյականով: Այդպիսիք են լալ, սգալ, ողբալ բայերը, որոնց լրացումը դրսևորվում է նաև հայցականով, բացի այդ, լալ բայի լրացումը կարող է արտահայտվել գործիականով: Իսկ նշված բայերի կապային խնդրառությունը ձևավորվում է վրա, համար, հետ, տակ, առաջ և այլ կապերով՝ արտահայտելով տարբեր հարաբերություններ:

Հայցականով լրացումները, իբրև կանոն, արտահայտում են կրող խնդրի նշանակություն. այսպես՝ եվ լալիս էր ոչ թե այն անմեղ թռչունի սպանությունը, այլ իր կուտական «սպանությունը» (Ն-Դ, 2, էջ 484): Վերջապես ես եկա այստեղ իմ վշտերը թաքցնելու և հանցանքներ լալու (Մուր., եօ, 3, էջ 310): Համայն աշխարհի բախտն եմ սգում (Իս., եօ, 1, էջ 257): Քո կորուստն է սիրտս սգում (ՀՇ, Հատ., էջ 112): Ներսեսն ու Արշակը կամ միասին կփրկեն Գնելին ու միասին կուրախանան կամ միասին կողբան նրա մահը (ՊԶ, ԱՅ, էջ 158):

Հեկեկալ բայն, իբրև շեղոք սեռի բայ, չի կարող հայցականով լրացում ստանալ, սակայն համանիշ լինելով լալ, սգալ և այլ բայերին, վերջիններիս նման երբեմն պահանջում է հայցականով կրող խնդիր, որը բնորոշ ու տիպական չէ այդ բայի համար. օրինակ՝ Ամեն անգամ, երբ նայում եմ մեր աշխարհին, Քեզ եմ հիշում, քո կարոտն եմ ես հեկեկում (ՀՇ, Հատ., էջ 112): Վերը նշված բայերի բացառականով դրսևորում ստացած լրացմամբ արտահայտվում է պատճառական հարաբերություն. այսպես՝ Սերն ու ատելությունը խառնվում էին իրար, կրտսերը հուզմունքից լաց էր լինում (Գ, 1978, 11, էջ 39): Հաճախ էր գիրքը շարտում ու լաց լինում անգործությունից (ՎԱ, ՍԱ, էջ 506): Վարդի սիրուց շատ է տխրակն արտասվում (ՀՇ, ՔԶ, էջ 186):

Լալ բայի լրացումը կարող է ձևավորվել նաև գործիական հոլովա-ձևով՝ դրսևորելով ձևի հարաբերություն, ուր աղոտ կերպով համատեղվում է միջոցի նշանակությունը. օրինակ՝ Լալիս էին բոլորը, լալիս էին հարազատի վրա թափվող զսպված արցունքներով (Գ, 1981, 11, էջ 38):

Կապային լրացումներն արտահայտում են պատճառի, հանգման, ձևի և այլ նշանակություններ՝ պայմանավորված համապատասխան կապի իմաստով, նախադասության կառուցվածքով, հաղորդման նպատակով և այլ հանգամանքներով: Վրա կապի ու կապվող բառի զուգորդմամբ արտահայտված լրացմամբ հիմնականում հանգման հարաբերությունն է դրսևորվում՝ որոշ շահով տեղի նշանակության համատեղումով, երբեմն էլ ժամանակի: Համար կապով ձևավորված լրացումը արտահայտում է պատճառի հարաբերություն մեծ մասամբ անխառն, մաքուր ձևով, իսկ երբեմն էլ պասիվ ներգործության, հանգման նշանակությունների համատեղումով: Հետ-ով ձևավորված լրացման համար բնորոշ է միասնության ու ձևի հարաբերության դրսևորումը, պես-ով ձևավորվածներին՝ ձևի և այլն: Նշված բայերի լրացման կապվող բառը թե՛ իր, թե՛ անձ կարող է ցույց տալ: Այստեղ որևէ սահմանափակություն չի նկատվում: Այսպես՝ կաց եղավ շորերի վրա (ԱԲ, Երկ., էջ 25): — Կայսրը եկել, արժասվել է կործանված քաղաքի ավերակների վրա (ՊՁ, ԱԵ, էջ 306): Լացեմ իմ վրա, Լացեմ ձեռ վրա. Ողբանք միասին Մարդկության վրա (Իս., Եժ, 1, էջ 381): Սրտանց կուլա սիրո վրա, Հոգու խորքից կհուզվի (Ն. տ., էջ 92): Ես շատ եմ լացել սուրբ սիրո համար (Ն. տ., էջ 182): — Համա քեզ համար սուգ արինք, հա ... (ՎԱ, ՍԱ, էջ 419): — Սա էլ ասեց, թե լավ է աղջիկը հեռանա, քան տղան, — վրա բերեց մեկ ուրիշը, — դրա վրա էլ լաց եղավ (Ա. Սեկ., ՈՎՄ, էջ 109): Արժասվելով մարդու համար, ափսոսացի աստծու հետ (ՀԾ, ԲՀ, էջ 407): Գյուղը հոգս շատ ունի, լաց չեղավ Պետու համար (ԱԲ, Երկ., էջ 41): Սկսեց լաց լինել երեխայի պես (Ն-Դ, 1, էջ 10): Ու՛մ հետ եմ անհույս կալիս, հառաչում (Իս., Եժ, 1, էջ 257): Եվ չպետք է անձեծամ այն հոգեկան տանջանքների տակ, որ բախտը ձեր միջոցով տվել է ինձ (Ն-Դ, 2, էջ 146): Թույլ տուր, որ բանամ քեզ իմ սիրտը, որ համարձակվեմ արժասվել քո առաջ (Մուր., Եժ, 3, էջ 299): Գործածական են նաև հեկեկալ (ողբալ) մի բանի (մեկի) վրա (համար, պես, տակ, առաջ):

Նկատենք, որ լաց լինել շորերի վրա և լաց լինել ավերակների վրա կապակցություններում լրացումները հիմնականում արտահայտում են հանգման նշանակություն՝ տեղի, պատճառի և պասիվ ներգործության իմաստների աղոտ համատեղումով:

Երբեմն ինձ վրա լրացման փոխարեն նույն նշանակությամբ կիրառվում է վրաս (վրա կապ + ս ստացական հոդ). օրինակ՝ Բայց մեկը տխուր ինձ է երազում, Անուշ աչքերով վրաս էր լալիս (Իս., Եժ, 1, էջ 248):

Հոլովական և կապային խնդրառություն են ցուցաբերում նաև մը-

տահոգութիւն, տանջանք, տառապանք, տագնապ և այլ իմաստ արտահայտող մտահոգվել, մտատանջվել, տանջվել, տառապել, տվայտել, տապալկվել (փոխաբերաբար), տագնապել և այլ բայեր: Սրանց մեծ մասի համար բնորոշ է բացառական հոլովով ձևավորված խնդրառութիւն, մտահոգվել-ը և մտատանջվել-ը պահանջում են գործիականով լրացում, իսկ տանջվել, տառապել և այլ բայեր, բացի բացառականից, կարող են ստանալ նաև գործիականով լրացում: Վերոբերյալ բայերի կապային խնդրառութիւնը ձևավորվում է համար, մասին, տակ, մեջ և այլ կապերով:

Բացառականով ձևավորված լրացումը մեծ մասամբ պատճառական, գործիականով ձևավորվածը վերաբերութիւն, պատճառական, ձևի հարաբերութիւններ է դրսևորում երբեմն անխառն, երբեմն էլ հանգման նշանակութիւն ընդգծված համատեղումով: Կապերով արտահայտված լրացումների նշանակութիւնները պայմանավորված են մի կողմից կապերի ունեցած իմաստներով, մյուս կողմից՝ նախադասութիւն կառուցվածքով, բնույթով, հաղորդման նպատակով և այլ հանգամանքներով: Նախ՝ բացառական հոլովով արտահայտված լրացման օրինակներ՝

Տանջվում էին ցրտից, տոբից, ֆաղցից և ծարավից (Բ, ԵԺ, 7, էջ 206): Իսկ առաջ ինչպես էի տանջվում ես այդ գլխացավից, աստված ազատե (Ն-Դ, 2, էջ 104): Դուք գիտեք, թե որքան և ինչ սոսկալի կերպով ես տանջվել եմ այդ սիրուց (Ն. տ., էջ 66): Ստամբուլի ցավերից անասելի տառապում է (ՍԳ, 1979, 1, էջ 83): Երբեք չէր պատկերացնում, թե ինքը մի օր կարող է տվայտել այդ օտարոտի դաժան տարակուսանքներից (ՆԶԶ, էջ 467):

Բերված բոլոր կառույցներում լրացումներով արտահայտվում է պատճառական հարաբերութիւն, առանց ուրիշ իմաստների համատեղման:

Գործիականով ձևավորված լրացումները տարբեր հարաբերութիւններ են արտահայտում՝ պայմանավորված բայերի նշանակութիւններով, լրացման բնույթով և այլն: Այսպես՝ մտահոգվել և մտատանջվել բայերի լրացումները մեծ մասամբ վերաբերութիւն իմաստ են արտահայտում՝ հանգման նշանակութիւն համատեղմամբ: Տանջվել, տառապել բայերի լրացմամբ դրսևորվում է մերթ միջոցի, մերթ պատճառի հարաբերութիւն՝ երբեմն մաքուր, անխառն ձևով, երբեմն էլ (իհարկե, աղոտ կերպով) ձևի հարաբերութիւն համատեղումով: Այսպես՝ Ստեղծագործական կարգապահութիւն ձգտող արվեստագետն առաջին հերթին մտահոգված էր ոճի ձևավորման խնդրով (Գ, 1978, 11, էջ 24): Քեզ համար հեշտ է երկրի քախտով մտահոգվելը (ՊԶ, ԱԵ, էջ 47):

Կուզենայի, որ մեր թատրոնի ապագայով ափելի շատ մտահոգվելիք վերադաս մարմինները (ՍԱ, 1979, 11, էջ 15): Գոհար իշխանուհին շարունակ տանջվում էր տխուր մտփեռով (Մուր., ԵԺ, 3, էջ 332): Երբ քո սիրով բախտավոր՝ Տանջվում էի տոշորուն (Իս., ԵԺ, 1, էջ 239): Իսկ ես նկատում եմ, որ դու վաղուց ի վեր տանջվում ես այդ ցավով (Ն-Դ, 1, էջ 380): Երրորդ սերնդի ներկայացուցիչները տառապել են մեկամաղձոտությամբ (Գ, 1980, 3, էջ 31): Արքան երեք չի տառապել կասկածամտությամբ (ՊԶ, ԱԵ, էջ 439):

Նկատենք, որ մտահոգվել խնդրով (բախտով, ապագայով) կապակցություններով դրսևորվում է վերաբերության հարաբերություն՝ հանգաման շեշտված նշանակության համատեղումով, տանջվել մտքերով (սիրով, ցավով) կապակցություններով՝ պատճառի հարաբերություն, իսկ տառապել մեկամաղձոտությամբ (կասկածամտությամբ) կապակցություններում համատեղվում են պատճառի, ձևի և միջոցի նշանակություններ, ընդ որում, իշխողը դարձյալ պատճառական իմաստն է, մյուսները պարզապես ուղեկցում են նրան:

Վերը նշված բայերը կարող են ստանալ նաև տրական և ներգոյական հոլովներով արտահայտված լրացումներ: Այսպես՝ տանջվել (տառապել) ինստիտուտում (անկողնում, հիվանդանոցում, տանը, ժամը երեքին և այլն): Այստեղ հիմնականում պարագայական հարաբերություններ են արտահայտված:

Նշված բայերի՝ համար կապով ձևավորված որոշ լրացումներ արտահայտում են վերաբերության կամ հանգաման հարաբերություններ՝ շահի նշանակության համատեղումով կամ էլ առանց դրան. այսպես՝ Մեր լեզվի համար շատ էր մտահոգվում (Գ, 1979, 12, էջ 45): Նախադասության մեջ վերաբերության ու հանգաման հարաբերությունից բացի այլ իմաստ չի դրսևորվում, իսկ հետևյալ օրինակներում վերաբերության ու հանգաման նշանակությունները համատեղվում են շահի իմաստի հետ: — Դու ինձ համար մի մտահոգվիր (ՊԶ, ԱԵ, էջ 363): Նա միայն մտահոգվում էր սիրելի ընկերուհու համար (Ն-Դ, 2, էջ 326): Ես տանջվում եմ հոս համար (Ն-Դ, 2, էջ 176): Իսկ որոշ լրացումներով արտահայտվում է պատճառի իմաստ. այսպես՝ եվ տանջվի այդտեղ յուր հանցանքի համար (Մուր., ԵԺ, 3, էջ 418): Որը տառապում է, տանջվում է նրա համար, նրա երեսից (Ակ., Օտ., 2, էջ 478): Վերջին օրինակում լրացումը՝ նրա համար կարող է ըմբռնվել նաև շահի իմաստով (տանջվել, տառապել, նրա օգտին), սակայն այդ երկդիմությունը վերանում է նրա երեսից կապակցության կիրառմամբ, որը պատճառի հարաբերություն է արտահայտում և նույնանիշ է նրա համար կապակցությանը:

Մասին կապով ձևավորված լրացմամբ, իբրև կանոն, արտահայտվում է վերաբերության հարաբերություն, առանց որևէ այլ նշանակության համատեղման. օրինակ՝ Անցյալի մասին այդ «ինչուն» նշանակում է նաև մտահոգվել ապագայի մասին (ՄԳ, 1981, էջ 38): Զաքարյա պատմեց նրան, ինչ որ գիտեր և ինչի մասին գիշեր-ցերեկ մտառնելում էր (Ն-Դ, 2, էջ 296):

Նշված բայերից մի քանիսի լրացումը կարող է արտահայտվել մեջ, տակ կապերով և պատճառով կապական բառով: Այսպես՝ Նույնպիսի մի անվնականության մեջ տանջվում էր նա (Բ, ԵԺ, 7, էջ 441): Տառապում էին անհնարին հուսահատության մեջ (ն. տ., էջ 32): Որից այսքան ժամանակ տառապել եմ հեռավոր մեծակության մեջ (Ն-Դ, 1, էջ 208): Տանջվում է նա այժմ ապիրատ թագավորի ինձ հասցրած անարգանքի պատճառով (Մուր., ԵԺ, 3, էջ 164): Մինչև հիմա նա տառապել է ուրիշների կարծիքի հետ չափից ավելի հաշվի նստելու պատճառով (Ա. Սեկ., ՈՎՄ, էջ 457):

Բերված օրինակներում հիմնականում պատճառական հարաբերություն է արտահայտվում, որը ավելի որոշակի ու հստակ է դրսևորվում սլատնառով կապական բառով ձևավորված լրացումներով: Մեջ կապի ու կապվող բառի զուգորդմամբ արտահայտված լրացումները պատճառի նշանակությունը համատեղում են ձևի իմաստի հետ, որով էլ հենց որոշ չափով աղոտանում կամ թուլանում է պատճառական հարաբերությունը:

Տապալկվել բայը փոխաբերական գործածությամբ արտահայտում է տանջվել, տառապել իմաստ, ուստի նրանց նման ստանում է մեջ կապով ձևավորված լրացում՝ դրսևորելով պատճառական հարաբերություն: Այսպես՝ Արուսը տանը նստած երևի տապալկվում է անհիմն կասկածանքների մեջ (ՆԶԶ, էջ 264):

Նկատենք, որ գործիական հոլովով կիրառված որոշ լրացումներ երբեմն մասնակի համանիշություն են հանդես բերում մասին (նաև համար) կապերով ձևավորված լրացումների նկատմամբ. այսպես՝

համանիշներ են՝

մտահոգվել ապագայով
մտահոգվել ապագայի մասին
մտահոգվել ապագայի համար

կամ

մտահոգվել երեխաներով
մտահոգվել երեխաների մասին
մտահոգվել երեխաների համար:

Վերջին օրինակում՝ մտահոգվել երեխաների համար համանիշու-
թյունը ավելի թույլ է արտահայտված, քան մյուսներում, մի բան, որ
պայմանավորված է նրանով, որ այստեղ բացի հանգման ու վերաբերու-
թյան հարաբերությունից դրսևորվում է նաև շահի նշանակությունը, որ
չի համատեղվում մյուս օրինակներում:

Հոլովական և կապային խնդրառություն ունեն նաև վիշտ, տխրու-
թյուն, հիացմունք արտահայտող վշտանալ, տխրել, քախծել, մոռալվել,
ուրախանալ, ցավել, հրճվել, հիանալ և այլ բայեր: Սրանց մեծ մասը
կարող է ստանալ մեկից ավելի հոլովներով ձևավորված լրացումներ:
Նշված բայերի լրացումների ձևավորման մեջ կիրառվում են հատկապես
բացառական և գործիական հոլովները, այլև համար, վրա, առթիվ, մեջ,
հետ և այլ կապեր: Նկատենք, որ վշտանալ բայի բացառականով արտա-
հայտված լրացման դերով կարող են կիրառվել թե՛ անձ, թե՛ իր ցույց
տվող բառեր, իսկ մյուս բայերի լրացումները, իբրև կանոն, անձի
անուն չեն լինում: Բացառական հոլովով կիրառված լրացումները մեծ
մասամբ դրսևորում են կամ պատճառական, կամ ներգործության հա-
րաբերություն, իսկ երբեմն էլ միաժամանակ թե՛ մեկ, թե՛ մյուս նշանա-
կությունը: Այսպես՝ Ախ, մի՞թե դու վշտացել ես իմ նամակից (Գ, 1981,
12, էջ 3): Եվ դու բնավ իմ այս խոսքից մի վշտանալ (ՊՍ, 2, էջ 175):
Ծերունին այդ գոռոցից հագիվ նկատելի ցնցվեց ու մոռալվեց (ՎԱ, ՍԱ,
էջ 24): Վասակը այդ մտքից ուրախացավ (ՆԶԶ, էջ 476): Արգոլակը
նույնիսկ ուրախացավ գոռոց ամբարտավանի ինֆնալստանությունից
(ՍԽ, ՄՍ, էջ 351): Պապը իրենց այդ զվարթ պատասխաններից չուրա-
խացավ (ՎԱ, ՍԱ, էջ 332): Եվ միաժամանակ ստիպել մանկորեն հրճվել
ուրախությունից (Ա. Սեկ., ՈՎՄ, էջ 285):

Տխրություն, ուրախություն, հիացում արտահայտող բայերը, ինչ-
պես նշվել է, պահանջում են գործիական հոլովով ձևավորված լրացում-
ներ, որոնք դրսևորում են պատճառի, ներգործության և այլ հարաբերու-
թյուններ, այսինքն՝ այնպիսի իմաստներ, որոնք բնորոշ են բացառական
հոլովով կիրառված լրացումներին: Այսպես՝ Այն ժամանակ շատ էի
վշտացած նրա գործերով և հատկապես նրանով ... (Գ, 1979, 1, էջ 31):
Նա անչափ վշտացած էր Ավգուստինի հեռանալով (Ակ., Օտ., 2, էջ
221): Ես, որ տխրեցի մահով մի ծաղկի (ՀՇ, ՔԶ, էջ 15): Քիչ ենք թախ-
ծում մենք անառիթ, Շատ ենք տխում առիթով (ՊՍ, 2, էջ 219): Եվ
բարեսիրտ պատանու պայծառ դեմքը մոռալվեցավ խորին տխրությամբ
(Բ, ԾԺ, 7, էջ 58): Հայրը ուրախանում էր որդու խիզախությամբ (Գ,
1978, 11, էջ 8): Անհագուրդ հիացավ ոսկեդեղձան հյուսերով (ԱԲ,
Երկ., էջ 230): Ես հիանում — հրճվում եմ՝ Տարբեր վարքի ու բարքի

տեր ծերերի Լուրջ ու կայտառ հոսանքով (ՊՍ, 1, էջ 387): Հրճվում էր իր հաղթանակով (ՊԶ, ԱԵ, էջ 93):

Բերված կապակցությունների մի մասում իշխում է պատճառական հարաբերությունը՝ ներգործության նշանակության համատեղմամբ (ուրախանալ խիզախությամբ, վշտանալ հեռանալով, տխրել մահով և այլն): Որոշ կապակցություններում գերիշխում է ներգործության հարաբերությունը՝ պատճառի ընդգծված նշանակության համատեղմամբ (վշտանալ մեկի գործով, հրճվել հաղթանակով): Հաճախ այդ երկու իմաստները միասնաբար են հանգես գալիս և դժվար է լինում որոշակիորեն սահմանադատել դրանք միմյանցից:

Հարկ է նկատել, որ նշված բայերի լրացումները մեծ մասամբ իր են ցույց տալիս, անձ ցույց տվող բառերը քիչ են կիրառվում լրացման դերով: Այդպիսի լրացում կարող են ստանալ ուրախանալ (ուրախանալ մեկով), հիանալ (հիանալ մեկով) և այլ բայեր, որոնք ազատ կերպով կարող են ստանալ նաև իր ցույց տվող լրացումներ (ուրախանալ, հիանալ, մի բանով): Գործածական չեն, անշուշտ, հետևյալ կառույցները՝

հրճվել քեզնով (Արամով),

տխրել ձեզանով (դիրեկտորով),

մռայվել նրանով (մարզիկով) և այլն:

Բայց սովորական են հետևյալ կապակցությունները՝ հրճվել մայրամուտով, տխրել մահով, մռայվել պարտությամբ և այլն, ուր դրսևորվում են պատճառի ու ներգործության հարաբերություններ: Հանդիպում են նաև ներգոյական (նաև տրական) հոլովով ձևավորված լրացումներ, ինչպես՝ ուրախանալ դահլիճում (տանը), վշտանալ հիվանդանոցում, տխրել առողջարանում և այլն, ուր դրսևորվում է տեղի, տարածական հարաբերություն:

Վերոհիշյալ բայերի լրացումը կարող է ստանալ նաև կապային ձևավորում: Իբրև կապ կիրառվում են հատկապես համար, վրա, հետ, պես, առքիվ, մեջ և այլն:

Համար կապով ձևավորված լրացումները կարող են թե՛ իր, թե՛ անձ ցույց տալ: Այսպես՝ ուրախանալ (թախծել, վշտանալ, հրճվել) մեկի (մի բանի) համար: Այստեղ որևէ սահմանափակում չի նկատվում: Համար կապի ու կապվող բառի զուգորդմամբ արտահայտված լրացումները հիմնականում դրսևորում են պատճառի, ներգործության, հանգման և այլ հարաբերություններ, երբեմն շահի ընդգծված նշանակության համատեղումով, հատկապես երբ կապվող բառը անձ է ցույց տալիս, երբեմն էլ առանց դրան, հատկապես, երբ կապվող բառը իր է մատնացույց անում: Այսպես՝

ուրախանալ գնումների համար.
ուրախանալ հարևանի համար.
Թախծել հիվանդության համար.
Թախծել երեխայի համար:

Բերենք համար կապով ձևավորված լրացումների բնագրային օրինակներ՝ կիպարիտը մտքում ուրախացավ իր հաշող ընտրության համար (ՆՁՀ, էջ 297): Բացառիկ նվեր էր, և խանը դրա համար շատ ուրախացավ (ԳՍԹ, 1, էջ 287): Հոգիս քախծում է երկնքի համար (ՊՍ, 2, էջ 263): Պարզապես չէի հասկանում, թե ինչպես կարելի էր այդքան վշտանալ մի հասարակ թռչունի սպանության համար (Ն-Դ, 2, էջ 484): Թե տխրում եմ կյանքում՝ քեզ համար է միայն (ՊՍ, 1, էջ 220): Հայրը սաստիկ տխրեց այն բոլոր տառապանքների համար, որ կրել էր որդին (Բ, ԵԺ, 7, էջ 446):

Բերված օրինակներում դրսևորվում են պատճառական ու ներգործության հարաբերություններ կամ շահի նշանակության համատեղումով, կամ էլ առանց դրան:

Պատճառի նշանակություն է դրսևորվում նաև պատճառով կապական բառով և առթիվ կապով ձևավորված լրացումներով: Ընդ որում, առթիվ կապի հետ գործածվող կապվող բառը հիմնականում իր է ցույց տալիս, իսկ պատճառով ձևավորված լրացման մեջ կապվող բառը կարող է թե՛ իր, թե՛ անձ մատնանշել առանց որևէ սահմանափակման: Բացի դրանից, եթե պատճառով կապական բառով ձևավորված լրացումը, իբրև կանոն, պատճառական հարաբերություն է արտահայտում, ապա առթիվ կապով ձևավորված լրացումը բացի պատճառի նշանակությունից, դրսևորում է վերաբերության ընդգծված հարաբերություն: Այսպես՝ ճիշտ է, որ խեղճը շատ է վշտացել կոռուստների պատճառով (ԱԿ, Օտ., 2, էջ 250): Այդ հո չի նշանակում, թե կիպարիտն իրավունք չունի ուրախանալու Մոսկվա գնալու առթիվ (ՆՁՀ, էջ 296): Այդ առթիվ ուրախանում էին բոլորը (Գ, 1979, 1, էջ 17): Հիշում եմ՝ խիստ վշտացել էր Սևանի ջրերի բացթողման առթիվ (Գ, 1979, 12, էջ 47): Ո՞վ է անցած վտանգի առթիվ վշտանում (ԱԿ, Օտ., 2, էջ 423):

Նշված բայերի մի մասի լրացումը կարող է ձևավորվել վրա կապով՝ արտահայտելով պատճառի, ներգործության և այլ հարաբերություններ: Այսպես՝ հմբագիրը շատ ուրախացավ հոռոխոռոնու այդ պատրաստակամության վրա (ՆՁՀ, էջ 310): Նախագահը շարունակում էր անցնել հանդամասերից հանդամաս՝ ճիանալով հողի փառքամության վրա (ՆՁՀ, էջ 17): Ընկերները նրան դիտում էին ամեն կողմից և ճիանում նրա հերկուլեսյան կազմվածքի վրա (ՎԱ, ՍԱ, էջ 185): Իսկ Կարոն մի ցան-

կություն ուներ՝ կործանել Ստեփանյանին և հրճվել նրա անդուստլ կա-
տաղության վրա (Ա. Սեկ., ՈվՄ, էջ 491): Բերված կապակցություննե-
րում լրացումները համատեղում են պատճառի և ներգործության հարա-
բերություններ՝ կիրառվելով պատճառի պարագայի գործառույթով, որ
որոշ չափով զգացվում է նաև հանգաման խնդրի իմաստ: Նկատենք, որ
վրա կապի դեպքում կապվող բառը հիմնականում իր է ցույց տալիս:
Եթե սովորական են ուրախանալ (հրճվել, հիանալ) մի բանի վրա, ապա
գործածական չեն ուրախանալ (հրճվել, հիանալ) մեկի վրա:

Նշված բայերի լրացումների ձևավորմանը մասնակցում են նաև
հեռ, մեջ, նման, պես և այլ կապեր՝ արտահայտելով միասնության, ձևի,
նմանության և այլ հարաբերություններ: Այսպես՝ Աշակերտներս ան-
գամ ինձ հեռ ուրախացել են (Գ, 1980, 3, էջ 10): Հազարապետը ուրախ
հրճվում էր զինվորների հեռ (ՍԽ, ՄՍ, էջ 560): Եվ արքան նորից երե-
խայի պես հրճվեց (ՊԶ, ԱԵ, էջ 22): Լսեց պառաւն ու ամպի պես Սիա-
մանթոն մոայլվեց (ՀՇ, Հատ., էջ 170): Մինչդեռ պարզ հիշում եմ, որ
մի տարեց տանկիստ հրճվում էր այդ պահին մանուկի պես (ՊՍ, 1, էջ
73): Ես վշտացա իմ մեջ, բայց մեծ վիշտը առաջ էր (ՀԹ, 1, էջ 412):
Պակին ուրախացում էր հոգու մեջ (ՍԽ, ՄՍ, էջ 100):

Վիշտ, տխրություն, հիացում արտահայտող բայերի որոշ լրացում-
ներ համանիշություն են ցուցաբերում միմյանց նկատմամբ: Այսպես՝
բացառական և գործիական հոլովներով ձևավորված, այլև համար, վրա,
առթիվ կապերով արտահայտված լրացումները որոշ դեպքերում համա-
նիշ են միմյանց, որն արտահայտվում է քերականական միևնույն հարա-
բերությունը լեզվական տարբեր միջոցներով դրսևորելու մեջ: Պատճառի
հարաբերություն են արտահայտում հետևյալ կառույցները.

ուրախանալ	նամակից	նամակով
վշտանալ	նամակից	նամակով
տխրել	խոսքից	մեկնումով
թախծել	մեկնումից	մեկնումով
հիանալ	տեսքից	տեսքով
հրճվել	ուրախութունից	հաղթանակով

ուրախանալ	նվերի համար	հարստության վրա	պարգևատրման առթիվ
վշտանալ	կորստի համար	—	մեկնելու առթիվ
տխրել	բաժանման համար	—	մեկնելու առթիվ
թախծել	երկխալի համար	—	բաժանման առթիվ
հիանալ	—	կազմվածքի վրա	—
հրճվել	—	միամտության վրա	պարգևատրման առ- թիվ:

Հետաքրքրություն է ներկայացնում սիրահարություն, վրդովմունք, հուզմունք, անհանգստություն արտահայտող սիրահարվել, վրդովվել, նյարդայնանալ, գրգռվել, հուզվել, փոքրելվել (փոխ.), եփվել (փոխ.), անհանգստանալ և այլ բայերի խնդրառությունը: Սրանց ևս բնորոշ է թե՛ հոլովական և թե՛ կապային խնդրառությունը: Այս բայերի հոլովական խնդրառությունը ձևավորվում է հիմնականում բացառական հոլովով, առանձին դեպքերում նաև տրականով ու գործիականով, իսկ կապային խնդրառության ձևավորմանը մեծ մասամբ մասնակցում են վրա, դեմ, համար, առթիվ և այլ կապեր, այլև պատճառով կապական բառը:

Սիրահարվել բայի խնդրային լրացումը դրսևորվում է տրականով, հուզվել-ինը՝ բացառականով (երբեմն էլ գործիականով), մյուսներինը՝ բացառականով: Տրականով արտահայտված լրացումը հանգման խնդրի գործառույթ ունի, գործիականով դրսևորվածը համատեղում է պատճառի, ներգործության և այլ հարաբերություններ, բացառական հոլովով կիրառված լրացումները մեծ մասամբ պատճառի նշանակություն են արտահայտում՝ ներգործության ընդգծված հարաբերության համատեղումով: Լրացումները մեծ մասամբ իր են մատնանշում, բացառությամբ սիրահարվել բայի, որի լրացումը հիմնականում անձ է ցույց տալիս, երբեմն էլ՝ իր: Այսպես՝ — Դու սիրահարված ես ինձ, Տիրիթ (ՊԶ, ԱՅ, էջ 176): Իր գործին սիրահարված է նաև կոմիսարը՝ Պետրոս Հարությունյանը (Գ, 1978, 11, էջ 3): Նղբայրական ցույցից հուզված հայոց և վրաց զորքերը բարձրաձայն աղմկում էին (ՍԽ, ՄՍ, էջ 231): Մինչդեռ ձևացնում էր, թե հուզված է նամակի բովանդակությունից (ԳՍԹ, 1, էջ 98): Կայծակի անընդհատ փայլատակումներից նյարդայնացած՝ նա կորցրել էր սահուն վարդը (ՆԶԶ, էջ 280): Իր ժամանակակիցներին հուզող խնդիրներով հուզվելն ու այն արվեստի ուժով ներկայացնելը գրող Արշակյանի ինքնատիպ տաղանդի և քաղաքացիական բարձր նկարագրի ապացույցներն են (Գ, 1978, 9, էջ 94): Գուցե անհանգստացել են ումբի պայթյունից (Գ, 1979, 12, էջ 63): Նվ հիմք ունեւր անհանգստանալու նալրանդյանի ներկայությանից և նրա աճող ժողովրդակաեությունից (ԱԶ, ՆՆԺ, 1, էջ 85): Գրգռված էի նրա ինձ վրա գործած հաճախումներից (Ն-Դ, ՆԺ, 2, էջ 510): Տղան եփվում էր անհամբերությունից և ուզում էր ընկերներին շուտ մասնակից անել իր ապրումներին (ՎԱ, ՍԱ, էջ 69):

Նշված բայերի՝ կապերով արտահայտված լրացումների ձևավորմանը մասնակցում են դեմ, համար, վրա, առթիվ և այլ կապեր, այլև պատճառով կապական բառը: Վրա կապով ձևավորվում է սիրահարվել, երբեմն էլ վրդովվել բայերի լրացումը: Դեմ-ով՝ վրդովվել և գրգռվել բայերինը, համար, առթիվ կապերը, այլև պատճառով կապական բառը:

հանդես են գալիս այդ խմբի գրեթե բոլոր բայերի լրացումների ձևավորման դերով:

Նրբ լրացումը ձևավորվում է դեմ կապով, կապվող բառը մեծ մասամբ անձ է ցույց տալիս, առանձին դեպքում՝ նաև իր: Վրա, համար կապերով ձևավորվելիս կապվող բառի գործառույթով կիրառվում են թե՛ անձ, թե՛ իր մատնանշող բառեր, իհարկե, իր ցույց տվող բառերի գերակշռությամբ: Առթիվ-ով ձևավորված լրացման մեջ կապվող բառը հիմնականում իր է մատնանշում, երբեմն էլ անձ, իսկ պատճառով կապական բառով ձևավորված լրացման մեջ կապվող բառը մասամբ անձ է ցույց տալիս, երբեմն էլ իր: Այսպես՝ Լևոնը սաստիկ վրդովվեց, չիմանալով ի՞ր դեմ, իր ընկերների՞, թե՞ Մացակի դեմ (ՆՁՀ, էջ 125): Քեռի Ղուկասը նախապես վրդովված օրակարգի դեմ, շղայնությամբ ներս էր քաշում ծխախոտի ծուխը (ՆՁՀ, էջ 155): Գրգոված և ռայկովի, և իր կնոջ դեմ՝ Վարդանը տեղափոխվեց Հացալան (ՆՁՀ, էջ 60): Եվ գրգոված էր ամենքի դեմ (Գ, 1978, 9, էջ 28): Բայց ինքն իրեն եփվում էր ոչ այնքան ծիծաղող կանանց, որքան պրակտիկանուհու դեմ (ՆՁՀ, էջ 66): Պուշկինի նման Միցկևիչն էլ չէր կարող ինչ-որ չափով շնանգրտանալ և իր սեփական նակատագրի համար (ՊՄ, 5, էջ 14): —Որ քո որդին սիրահարված է ֆարեբի վրա, ես ի՞նչ անեմ (ՎԱ, ՍԱ, էջ 303): Սոֆիկ, դու լավ արտիստուհի կլինես, հուզվում ես բոլորի համար (Գ, 1978, 9, էջ 9): Վրդովված էր՝ չգիտես կատարվածի՞, թե՞ իր վրա (Ա. Սեկ., ՈՎՄ, էջ 364): Սաստիկ վրդովված էր իրեն կոոպերատիվից հանելու առաջարկի համար (ՆՁՀ, էջ 59):

Վրդովվել բայի կապային լրացումը, ինչպես երևում է բերված օրինակներից, կարող է ձևավորվել թե՛ դեմ, թե՛ համար, թե՛ վրա, թե՛ առթիվ կապերով՝ արտահայտելով տարբեր հարաբերություններ՝ ընդդիմության՝ հանգման իմաստի համատեղումով, պատճառի՝ ներգործության նշանակության համատեղումով, հանգման՝ պատճառի ու ներգործության իմաստների համատեղումով և այլն:

Հոլովական ու կապային խնդրառությունն են ցուցաբերում նաև դարմանք, կասկածանք, տարակուսանք, տրտունջք և այլ իմաստ արտահայտող. ապշել, դարմանալ, կասկածել, տարակուսել, տրտնջալ և այլ բայեր: Զարմանալ-ի և տրտնջալ-ի լրացումները արտահայտվում են բացառականով, ապշել-ի լրացումն արտահայտվում է թե՛ բացառականով, թե՛ գործիականով, կասկածել-ը ստանում է տրականով ու բացառականով արտահայտված լրացումներ: Նշված բայերի կապային խնդրառության ձևավորմանը մասնակցում են վրա, համար, առթիվ, մեջ, պես, նկատմամբ, մասին և այլ կապեր: Զարմանալ, ապշել բայերի լրացումներն, իբրև կանոն, իր են ցույց տալիս, կասկածել-ի և տրե-

տրնջալ-ի լրացման գործառույթով կարող են կիրառվել թե՛ իր, թե՛ անձ ցույց տվող բառեր: Բացառական հոլովով կիրառված լրացումը դրսևորում է ներգործության հարաբերություն, պատճառի ընդգծված նշանակության համատեղումով, այլև պատճառի հարաբերություն՝ ներգործության իմաստի համատեղումով, իսկ երբեմն էլ հանգում կամ վերաբերում: Այսպես՝

Սակայն կարելի էր զարմանալ միայն Սուրիայի վերաբերմունքից (ԳՍԹ, 1, էջ 156): Մորուք Ասատուրը զարմացել էր այս պարզ բացատրությունից (ՎԱ, ՍԱ, էջ 286): Ու թե զարմանալ՝ ոչ թե լավ բանից, այլ միայն վատից (ՊՍ, 1, էջ 370): Ես բազմիցս ապշել եմ նրա խելքի ուժից (Գ, 1978, 9, էջ 58): Տրտնում էր իրենց քաղաքացիություններից (Գ, 1979, 12, էջ 45): Իբր թե նրա կինն ու որդին ամեն տեղ և ամենքի մոտ տրտնում են նրանից (Ն-Դ, 1, էջ 440): Կասկածել եմ սիրուց, կարոտից (Գ, 1981, 12, էջ 3):

Վերջին նախադասության մեջ իշխում է պատճառի հարաբերությունը. հանգման, վերաբերության նշանակությունը դրսևորվում է տրտնջալ բայի լրացումներով (տրտնջալ թարգմանությունից, տրտնջալ նրանից): Իսկ մյուսներում հիմնականում ներգործության իմաստն է գերիշխում: Կասկածել բայի լրացումը կարող է արտահայտվել նաև տրական հոլովով՝ դրսևորելով հանգման հարաբերություն՝ վերաբերության ընդգծված նշանակության համատեղմամբ կամ էլ վերաբերության հարաբերություն՝ հանգման նշանակության համատեղումով, իսկ երբեմն էլ այդ երկու հարաբերություններն էլ հավասարապես արտահայտվելու: Այսպես՝ Կասկածում էին բոլորին (ՊՁ, ԱՆ, էջ 132): Այդ մի յուրահատուկ տեսություն է նրա համար, որի ճշմարիտ լինելուն Օսեփը երբեք չի կասկածում (ԱՔ, Երկ., էջ 75):

Ապշել, զարմանալ բայերի լրացումը կարող է ձևավորվել նաև գործիական հոլովաձևով. օրինակ՝ Ապշում էին նրա սքանչելի գեղեցկությամբ (Ն-Դ, 2, էջ 15): Եվ հանկարծ ապշեց այն իրողությամբ, որ տեսնում է իր վաղքը (ՍԳ, 1980, 4, էջ 123): Գործածական են՝ զարմանալ մեծամտությամբ (հանգիստ բնավորությամբ, ապրուստով, պատրաստականությամբ): Գործիականով լրացումները հիմնականում արտահայտում են պատճառի ու ներգործության հարաբերություններ:

Մատնանշված բայերի կապային խնդրառության ձևավորման մեջ ակտիվություն է ցուցաբերում հատկապես վրա կապը: Վրա կապի և կապվող բառի զուգորդմամբ ձևավորված լրացումը մեծ մասամբ դրսևորում է պատճառի, ներգործության, հանգման, վերաբերության և այլ հարաբերություններ՝ պայմանավորված բայի իմաստով, նախադասության կառուցվածքով, լրացման բնույթով, հաղորդման նպատակով:

Ընդ որում, հանգման ու վերաբերության իմաստը դրսևորվում է կապածել և տրանջալ բայերի դեպքում, պատճառի ու ներգործության հարաբերությունը արտահայտում է զարմանալ, ապշել բայերի լրացումը: Զարմանալ, ապշել, կասկածել, տրանջալ բայերի կապային լրացման մեջ կապվող բառի գործառույթով կիրառվում են թե՛ անձ, թե՛ իր ցույց տվող բառեր, սակայն եթե զարմանալ և կասկածել բայերի լրացման կապվող բառը հավասարապես կարող է թե՛ իր թե՛ անձ ցույց տալ, ապա ապշել և տրանջալ բայերինը առավելապես իր է մատնացույց անում, հազվադեպ նաև անձ: Այսպես՝ Ոչ ոք չզարմացավ այս անկեղծ խոսքի վրա (Ա. Սեկ., ՈւՎՄ, էջ 511): Նրանք սաստիկ զարմացել էին նրա այդ հանկարծակի փոփոխության վրա (Ն-Դ, 2, էջ 153): Նա ապշեց տղայի անպատկառության վրա (ՍԳ, 1980, 4, էջ 54): Համեստ լինել՝ նշանակում է ոչ միայն հավատալ իր հնարավորություններին, այլև կասկածել իր ստեղծածի վրա (ՊՄ, 5, էջ 89): — Մի՞թե դու կասկածում ես թագավորի հաջողության վրա (Մուր., ԵԺ, 3, էջ 19): Արի չտրանջանք մեր անուրախ կյանքում ոչ մեղ, ոչ մեր բախտի, ոչ աշխարհի վրա (ՊՄ, 1, էջ 249): Ես նախանձում եմ նրանց բոլորին, Ուլբեր լավ գիտեն, թե ուր են քայլում, թե տրանջում են՝ ինչ բանի վրա (ՊՄ, 1, էջ 358):

Երբեմն լրացումը ձևավորվում է վրա կապ + ստացական հոդ՝ և, դ, և (վրաս, վրադ, վրան). օրինակ՝ ապշել (զարմանալ, կասկածել) վրաս (վրադ, վրան):

Նշված բայերի կապային խնդիրների ձևավորմանը մասնակցում են նաև համար, առթիվ, մասին, մեջ, պես, նկատմամբ և այլ կապեր: Ընդ որում, համար, առթիվ կապերով ձևավորված լրացումները հիմնականում արտահայտում են պատճառի ու ներգործության հարաբերություն, մասին և նկատմամբ կապերով ձևավորվողները՝ վերաբերության ու հանգման, պես-ով ձևավորվածները ձևի, մեջ-ով և կապվող բառի զուգորդմամբ արտահայտված լրացումը հանգման հարաբերություն՝ սահմանափակման ընդգծված երանգով և այլն: Այսպես՝ Ես զարմանում եմ նրա համար, որ նա ասում էր, թե... (Ն-Դ, 2, էջ 325): Ավգուստինը զարմացած էր Դարբինյանի մասին լսած տեղեկությունների առթիվ (ԱԿ, Օտ., 2, էջ 321): Դա շատ էր վշտացրել Այվազովսկուն, և նա բազմիցս գրավոր ու բանավոր տրանջացել է այդ առթիվ (Գ, 1979, 6, էջ 35): Թեև շատ անգամ նա էմմայի մեջ տեսնում էր սիրահարության նշաններ, բայց և այնպես դարձյալ կասկածում էր այդ մասին (Ն-Դ, 2, էջ 346): Դիտում եմ Դորիսի անդնդախոր ձորերն ու երկնահաս գագաթները և զրառաշըջիկի պես զարմանում (Գ, 1979, 12, էջ 35): Բայց ոստիկանն իզուր էր տրանջում վերջին կետերի նկատմամբ (Մուր., ԵԺ, 3, էջ 459):

Զրպարտեցիր ինձ, կասկածեցիր ամենակեղտոտ հանցանքների մեջ (ՊԶ, ԱԵ, էջ 236):

Զի արդարացիում ապշել բայի լրացման ձևավորումը դեմ կապում, մի բան, որ շեղում է գրական լեզվի նորմայից, օրինաչափությունից: Այսպես՝ Ու ողջ բնությունն ապշեց մարդու դեմ (ՀՇ, Հատ., էջ 188):

Հ Ա Մ Ա Ռ Ո Տ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ԱԲ. երկ. — Ակսել Բակունց, Երկեր, Ե., 1955:

ԱԶ, ՆԵԺ — Աշոտ Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, մաս 1, Ե., 1955:

ԱԿ, Օտ. — Անտոն Կղնունի, Օտարականը, հ. 2, 1977:

Ա. ՍԵԿ. ՈՎՄ — Անահիտ Սեկոյան, Ոսկե վազերի մեջ, Ե., 1979:

Ա. ՍԵԿ. ՀՊ — Անահիտ Սեկոյան, Հյուսիսային պողոտա, Ե., 1981:

Առ. — Առողջապահություն (հանդես):

ԱՎ. — Ավանգարդ (լրագիր):

ԲԶ, ՍԶ — Բաղիշ Հովսեփյան, Սերմնացանները չվերադարձան, Ե., 1962:

ԳԹ — Գրական թերթ (լրագիր):

Դ. — Դարուն (ամսագիր):

ԴՍԹ — Դարեգին Սևունց, Թեհրան, գիրք 1, Ե., 1973:

ԴԴՎ — Դերենիկ Դեմիրճյան, Վարդանանք, Ե., 1954:

ԵԶ, ԵԺ — Եղիշե Չարենց, Երկերի ժողովածու, հ. 2, 1922:

ԵԶ, ԸԵ — Եղիշե Չարենց, Ընտիր երկեր, Ե., 1954:

ԵԵ. — Երեկոյան երեան (լրագիր):

Իս., ԵԺ — ԱՎ. Իսահակյան, Երկերի ժողովածու, 6 հատորով, հ. 1, 1973:

ՀԹ — Հովհաննես Թումանյան, Երկեր (2 հատորով), 1958:

ՀԱ — Հայաստանի աշխատավորուհի (ամսագիր):

ՀՍ, ԵԺ — Համո Սահյան, Երկերի ժողովածու (երկու հատորով), Ե., 1976:

ՀՇ, ՔԶ — Հովհաննես Շիրազ, Քնար Հայաստանի, Ե., 1958:

ՀՇ, Հատ. — Հովհաննես Շիրազ, Հատընտիր, Ե., 1949:

ՀԶ — Հայրենիքի ձայն (լրագիր):

Մուր., ԵԺ — Մուրացյան, Երկերի ժողովածու (5 հատորով), Ե., 1952:

ՆԶԶ — Նաիրի Զարյան, Հացավան, Ե., 1955:

Ն-Դ, ԵԺ — Նար-Դոս, Երկերի ժողովածու (3 հատորով), Ե., 1955:

ՊՍ — Պարույր Սակ, Երկերի ժողովածու (6 հատորով), Ե., 1972—1976:

ՊՍ — Մն — Պարույր Սևակ, Սայաթ-Նովա, Ե., 1969:

ՊԶ, ԱԵ — Պերճ Զեյթունցյան, Արշակ երկրորդ, Ե., 1977:

ՍԶ, ԵԺ — Ստեփան Զորյան, Երկերի ժողովածու, Ե., 1960:

ՍԱ — Սովետական արվեստ (ամսագիր):

ՍԳ — Սովետական գրականություն (ամսագիր):

ՍԽ, ՄՍ — Սերո Խանզադյան, Մխիթար Սպարապետ, Ե., 1963:

ՍԿ, ՅԿ — Սիլվա Կապուտիկյան, Ցոթ կայարաններ, Ե., 1966:

ՍՀ — Սովետական Հայաստան (օրաթերթ):

ՎԱ, ՍԱ — Վախթանգ Անանյան, Սեանի ափին, Ե., 1961:

ՎԽ, ԳԼ — Վիգեն Խելումյան, Գիրք լինելիության, Ե., 1966:

Բ, ԵԺ — Բաֆֆի, Երկերի ժողովածու (10 հատորով), Ե., 1956: